



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
4(108)2022






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՏԵՂԵԿԱԳԻՐ
4(108)2022**



ISBN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Ջ. ՆԱԶԱՐՅԱՆ,
Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ, Ա. ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա.
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝
Ս. Խաչատրյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1667-1675)

- ՌՈՒԶԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1667, 1 նոյեմբերի 2022 թվականի)10
- «ԼԱՐՎԱՐ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 249-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1668, 15 նոյեմբերի 2022 թվականի)40
- ԱԼԲԵՐՏ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝ ՄԻՆՉԵՎ 08.12.2011 Թ. ՀՕ-319-Ն ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԾ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1669, 22 նոյեմբերի 2022 թվականի)70

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 4(108)2022

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՐԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԹԻՎ CAM 1016 01 ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1670, 2 դեկտեմբերի 2022 թվականի)89
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ97
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՐԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1671, 2 դեկտեմբերի 2022 թվականի)106
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ113
- 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1672, 6 դեկտեմբերի 2022 թվականի).....122

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ126
- 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՎՐՈՊԱ» ԾՐԱԳՐԻՆ (2021-2027) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1673, 16 դեկտեմբերի 2022 թվականի).....135
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ141
- «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1674, 20 դեկտեմբերի 2022 թվականի).....150
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ156

- ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ (ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 2005
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ) 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1675, 26
դեկտեմբերի 2022 թվականի).....165
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԹՈՒՆՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ189
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ192
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ203

II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ
ԴԵՍԿՆԻՆ.....219
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍԿՆԻՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱՅ-
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՕՐԱԿԱՐԳԸ.....221

4(108)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

- ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՄՊԱՆ ԱՆՆ ԼՈՒՅՈՅԻՆ.....223
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....225
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Է ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ.....226
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՄԻՆ.....227
- ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ.....229

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ԱՐԳԱՎԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՅԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.....230
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.....231
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ.....232

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՏՄ «ՁՄԵՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ» ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ.....233

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ 5-ՐԴ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ.....234

- «ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ» ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ.....236

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵԱՏՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ.....238

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵԽ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ.....240

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆԸ.....242

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՄՆ ՄՋԳ-Ի ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ.....243


ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 4(108)2022

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Է ՈՒՆԵՑԵԼ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ.....245
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՄԺՈՂՈՎԻՆ.....247

ՆՈՐ ԳՐՔԵՐ

- «ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ» ԳՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐՔԵՐԱԿԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ.....248



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՌՈՒՋԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 4(108)2022

Քաղ. Երևան

1 նոյեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է.
Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Ռուզաննա Ղազարյանի ներկայացուցիչ Գ. Թորոսյանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման
և սպասարկման բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր
կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդ-
վածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռուզաննա Ղազար-
յանի դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական
գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի
2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի ապրիլի 30-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ից: Հետագայում Ազգային ժողովի կողմից 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-247-Ն օրենքով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ: Տվյալ օրենքը Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2011 թվականի հուլիսի 19-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի՝ **«Հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցումը»** վերտառությամբ 40-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Սույն հոդվածի իմաստով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը կամ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը»:

Գործի քննության առիթը Ռուզաննա Ղազարյանի՝ 2022 թվականի հունիսի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ վարչական դատարանը, քննելով թիվ ՎԴ/8136/05/18 վարչական գործն ըստ հայցի Ռուզաննա Ղազարյանի ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, երրորդ անձ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 2019 թվականի հունիսի 25-ի վճռով հայցը բավարարել է:

Վերաքննիչ վարչական դատարանը 2020 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վերը նշված վճռի դեմ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքները մերժել է՝ վճիռը թողնելով անփոփոխ:

ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2021 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը բավարարել է. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2020 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել է և փոփոխել՝ Ռուզաննա Ղազարյանի հայցը մերժել: Նշված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ գրավառուի կողմից գրավատուին ուղարկված բռնագանձման ծանուցումը չի ստացվել և վերադարձվել է «Չպահանջված» նշումով (որոշման՝ «Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը» բաժնի 6-րդ կետ), և միաժամանակ նշել է հետևյալը. «(...) արտադարական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ կարող է լինել և՛ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, և՛ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ փրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը: Օրենսդիրը, որպես արտադարական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ դիտարկելով ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, կարևորել է բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելու հանգամանքը, որը բավարար է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու համար: Դրա արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն բռնագանձման ծանուցման փոստային առաքման անդորրագրի առկայությունն արդեն վկայում է կողմին բռնագանձման ծանուցումը պարզաճ հանձնված լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում Կադաստրը, հիմք ընդունելով [Օրենքի] 24-րդ և 40-րդ հոդվածներով նախատեսված փաստաթղթերը, կարող է իրավաչափորեն կատարել սեփականության իրավունքի պետական գրանցում (տե՛ս, Հարություն Թովմասյանն ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/3164/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.05.2021 թվականի որոշումը):

(...) Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կադաստրը վարչական ակտը կայացնելու պահի դրությամբ ստուգել է իրավահաստատող փաստաթղթերի համապատասխանությունը [Օրենքի] պահանջներին, և պարզելով նաև, որ գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով Կադաստր ներկայացվող սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից ներկայացվել է նաև բռնագանձման ծանուցումը գրավատու Ռուզաննա Ղազարյանին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, այն է՝ տվյալ դեպքում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, կատարել է իրավունքի պետական գրանցումը»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, վկայակոչելով Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավակարգավորումները, ընդգծում է, որ անձի սեփականության իրավունքի դադարման հիմք հանդիսացող՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում՝ 1. ծանուցման փոստային առաքման անդորրագիրը (անկախ հասցեատիրոջը հանձնված լինելու հանգամանքից), 2. ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, 3. գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը:

Ըստ դիմողի՝ վերոշարադրյալ տարբերակներից վիճելի է ծանուցման փոստային առաքման անդորրագրի (անկախ հասցեատիրոջը հանձնված լինելու հանգամանքից) առկայությամբ անձի սեփականության իրավունքի դադարման կարգը, քանի որ օրենսդիրը գրավատուին փոստային առաքանու միջոցով բռնագանձման ծանուցումն ուղարկված լինելու հանգամանքը դիտարկել է բավարար սեփականության իրավունքի դադարման պետական գրանցում կատարելու համար, որով, ըստ էության, հնարավոր չէ երաշխավորել սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանությունը:

Դիմողը նշում է նաև, որ սահմանված չէ այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտար հավաստիանալու նշված ծանուցումը գրավատուի կողմից ստացվելու մասին, միաժամանակ նախատեսված չեն ծանուցումը գրավատուի կողմից չստանալու պարագայում ծանուցման այլ ընթացակարգեր, որոնց պարագայում գրավատուն հնարավորություն կունենար իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը:

Դիմողը կարծում է, որ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուին գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցելու ընթացակարգը պահպանված համարելու, և, ըստ այդմ, գրավառուի սեփականության իրավունքի ծագման փաստը հաստատված համարելու համար պետք է ապացուցվի, որ առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավատուին իրազեկելու կապակցությամբ պատշաճ կարգով իրականացվել են ակտիվ գործողություններ: Դիմողի դիտարկմամբ՝ անկախ ծանուցման եղանակից՝ նշված գործողությունները պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի ապացուցել գրավատուի կողմից բռնագանձման ծանուցման մասին իրապես տեղեկացված լինելու փաստական հանգամանքը, որպիսի ընթացակարգ Օրենքի վիճարկվող նորմով սահմանված չէ:

Միաժամանակ դիմողը նշում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասն ունի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտություն, քանի որ իրավակիրառ պրակտիկայում այն կիրառվում է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ: Ըստ դիմողի՝ Օրենքի վիճարկվող

4(108)2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դրույթն ուղղակի միջամտություն է անձի սեփականության իրավունքին, չի նախատեսում բռնագանձման ծանուցումն անձամբ ստացված լինելու հավաստիացման կարգ:

Այնուհետև դիմողը նշել է, որ ըստ Սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է կիրառվի համապատասխան նորմերով նախատեսված՝ գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում՝ օրենսդրությամբ գրավատուին ընձեռված՝ բռնագանձման օրինականությունը վիճարկելու կամ բռնագանձումը դադարեցնելու իրավունքների իրականացումն արդյունավետ չի լինի և չի բխի Սահմանադրության պահանջներից:

Միաժամանակ դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունից հետևում է, որ օրենսդրական կարգավորման անորոշությունը հնարավորություն չի տալիս հստակ հասկանալու, թե ինչ եղանակով պետք է փաստել, որ գրավատուն իրազեկվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին:

Դիմողի պնդմամբ՝ առկա կարգավորումների պայմաններում գրավատուն կարող է զրկվել ոչ միայն գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու իր իրավունքից՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է, այլ նաև բռնագանձման օրինականությունը վիճարկելու իրավունքից:

Վերոնշյալից ելնելով՝ դիմողը խնդրում է որոշել Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը» մասի՝ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ խնդրո առարկա իրավահարաբերության դեպքում գործում է Օրենքով նախատեսված հատուկ նորմը: Նշվածն ինքնանպատակ չէ և միտված է ապահովելու արդարացի հավասարակշռություն՝ գրավառուի և գրավատուի հիմնական իրավունքների և օրինական շահերի միջև: Այսպես՝ օրենսդրի նպատակն է եղել կանխել անբարեխիղճ գրավատուի կողմից իր իրավունքների հնարավոր չարաշահումները, նվազեցնել գրավառուի նկատմամբ ունեցած գրավատուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկերը, պահպանել գրավառուի պահանջի բավարարման ապահովումը, ինչպես նաև խուսափել այն բոլոր հնարավոր իրավիճակներից, երբ գրավառուի հանդեպ ունեցած գրավատուի պարտավորության կատարումը կարող է դառնալ անհնարին:

Պատասխանողը նշում է, որ օրենսդրի կողմից սահմանվել է գրավի առարկայի բռնագանձման գործընթացի՝ երկամսյա ժամկետով «ստեղծման» օրինական հնարավորություն՝ որպես գրավատուի դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացման երաշխիք: Հաշվի առնելով այն, որ գրավատուն որևէ կերպ զրկված չէ արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունից, պատասխանողը գտնում է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման խոչընդոտ առկա չէ:

Վերոշարադրյալի հաշվառմամբ պատասխանողը գտնում է, որ Օրենքի վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք Օրենքի վիճարկվող դրույթը, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին միայն ուղարկված լինելը հաստատող փաստաթուղթը բավարար է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար, համահունչ է Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքին.

2. արդյո՞ք Օրենքի վիճարկվող դրույթը, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված վերոնշյալ մեկնաբանությունը, համահունչ է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սեփականության իրավունքը՝ որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ, ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Այն միջազգային իրավական ամրագրում է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում¹ (հոդված 17-րդ), Մարդու իրավունքների և հիմնարար

¹ <https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights>

ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի¹ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում:

Սահմանադրության 10-րդ հոդվածը սեփականության երաշխավորումն ամրագրում է որպես սահմանադրական կարգի հիմունք, իսկ Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է սեփականության իրավունքը: Ընդ որում՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավազորությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը, ինչպես նաև ժառանգելու իրավունքը: Միաժամանակ Սահմանադրությունը նախատեսում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքների ապահովման հարցում հանրային իշխանության պոզիտիվ պարտականությանը, 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշմամբ արձանագրել է, որ այն ներառում է հետևյալը.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը:

Ավելին, Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-92, ՍԴՈ-630, ՍԴՈ-649, ՍԴՈ-650, ՍԴՈ-667, ՍԴՈ-669, ՍԴՈ-735,

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>

ՍԴՈ-815, ՍԴՈ-901, ՍԴՈ-903, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1189, ՍԴՈ-1203, ՍԴՈ-1210 և այլն) անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին, կարևորել է այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ անձն իր սեփականության իրավունքն իրականացնելիս կարող է պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով գրավադրել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով: Նկատի ունենալով, որ սույն գործով վիճարկվող դրույթը փոխկապակցված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ գրավի և, մասնավորապես՝ գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու իրավահարաբերությունները կարգավորող դրույթների հետ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում դրա սահմանադրականությունը գնահատել Օրենսգրքի վերաբերելի կարգավորումների համատեքստում:

Նշված իրավահարաբերություններում գույքի սեփականատիրոջ կամքի և համաձայնության արտահայտման վերաբերյալ Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 19-ի ՍԴՈ-1294 որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«(...) **նախ**՝ կնքելով գրավի պայմանագիրը՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հնարավոր դադարման վերաբերյալ,

երկրորդ՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում արտադատական կարգով գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորության վերաբերյալ: Ընդ որում, համաձայն [Օ]րենսգրքի 249-րդ հոդվածի՝ նման համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ գրավատուի և գրավառուի միջև կնքված առանձին համաձայնությամբ,

երրորդ՝ գրավադրված գույքի վրա գրավառուի կողմից արտադատական կարգով բռնագանձում տարածելուց առաջ գրավատուն հնարավորություն ունի կա՛մ միջոցներ ձեռնարկել գրավով ապահովված պարտավորությունը կատարելու համար և դրանով կանխել գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորուստը, կա՛մ դատական կարգով վիճարկել արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը»:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1294 որոշմամբ նաև փաստել է, որ վերոհիշյալ երեք հնարավոր իրավիճակներից առաջին երկուսում (որոնք

կարող են համընկնել գրավի պայմանագրում արտադատական կարգով բռնագանձման պայման նախատեսվելու դեպքում) գրավադրվող գույքի սեփականատիրոջ կամաարտահայտությունը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, և այդպիսի ակտիվ գործողությունների կատարումը պարտադիր պայման է: Երրորդում սեփականատիրոջ կամքը կարող է արտահայտվել պասիվ գործողությամբ, երբ տեղեկանալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին՝ նա չի ձեռնարկում արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելուն ուղղված՝ օրենքով սահմանված որևէ գործողություն: Վերջինիս դեպքում Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն սեփականատիրոջ իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության իրավակարգավորումները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությամբ նախատեսված է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու երկու եղանակ՝ դատական կարգով և առանց դատարան դիմելու: Ընդ որում՝ գրավի պայմանագրով, ինչպես նաև գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնությամբ գրավի առարկայի՝ արտադատական կարգով բռնագանձում նախատեսված չլինելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ գրավի առարկան օրենքով կամ այլ իրավական ակտով ճանաչված է հանրության համար նշանակալից պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ունեցող գույք, գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով (Օրենսգրքի 249¹-րդ հոդված): Գրավի առարկայի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու դեպքում գրավատուն, լինելով գործին մասնակցող անձ, օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցվում է դատական նիստի ժամանակի և վայրի, առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին, ստանում է դատավարական փաստաթղթեր, որպիսի պայմաններում հնարավորություն է ունենում ձեռնամուխ լինել իր սեփականության իրավունքի պաշտպանությանը: Այլ է իրավիճակը գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու դեպքում, քանի որ այդ պարագայում, բնականաբար, դատարանում գործի քննության մասին գործին մասնակցող անձանց իրազեկման կառուցակարգերը չեն գործադրվում: Օրենսդիրը թույլատրելի է համարում գրավի առարկայի բռնագանձում տարածելը և իրացնելն առանց դատարան դիմելու՝ գրավի պայմանագրով, ինչպես նաև գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնության հիման վրա (Օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մաս): Միաժամանակ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացում պետք է ապահովվեն այդ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի ապահովման և պաշտպանության անհրաժեշտ

երաշխիքներ: Նշվածի համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորում է գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցումը, ինչն անհրաժեշտ նախադրյալ է վերջինիս սեփականության իրավունքի ապահովման և պաշտպանության համար:

Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 19-ի ՍԴՈ-1294 որոշմամբ առանձնացրել է գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիքները, որոնք հետևյալն են.

«1) գրավատուի պատշաճ ծանուցումը գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում),

2) արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը,

3) գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելը գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո,

4) գրավառուի կողմից գրավի առարկայի իրացումը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին գրավատուի ծանուցման վերաբերյալ իրավակարգավորումները չպետք է կրեն ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն գրավատուի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի ապահովմանը և պաշտպանությանը: Այսինքն՝ նշված ծանուցմանը վերաբերող կարգավորումները և դրանց կիրառումը պետք է ապահովեն գրավատուի կողմից իրեն հասանելի իրավական միջոցների գործադրման, մասնավորապես՝ գրավով ապահովված պարտավորությունը կատարելու, ինչպես նաև արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավորություն: Վերոգրյալ նպատակն իրագործելու համար օրենսդրությամբ պետք է նախատեսված լինեն գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի վերաբերյալ այնպիսի կարգավորումներ, որոնք կբացառեն ծանուցման թերի/ոչ պատշաճ կառուցակարգի հետևանքով գրավատուի՝ բռնագանձման գործընթացի մասին իրազեկված չլինելու հնարավորությունը՝ վերջինիս համար ապահովելով օրենքով սահմանված կարգով իր սեփականության իրավունքի պաշտպանությունը գործնականում իրականացնելու պայմաններ:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացում սեփականության իրավունքի արդյունավետ իրականացման

համար գրավատուին պետք է հասանելի լինի նախատեսվող բռնագանձման գործընթացի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Հետևաբար՝ օրենսդրությամբ պետք է նախատեսված լինեն այդ տեղեկատվության՝ գրավատուին հասանելիությունն ապահովող համապատասխան երաշխիքներ՝ վերջինիս պատշաճ ծանուցման կառուցակարգի միջոցով: Ընդ որում՝ պայմանականորեն կարելի է առանձնացնել բռնագանձման գործընթացի վերաբերյալ **գրավատուի ծանուցմանը վերաբերող երկու տեսակ, այն է՝ 1) բովանդակային և 2) ծանուցման կարգին վերաբերող պահանջներ:** Մի կողմից՝ գրավատուին հասցեագրված բռնագանձման ծանուցումը պետք է լինի բավականաչափ որոշակի, արտահայտի գրավառուի հստակ կամահայտնությունը՝ գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ, չունենա վերացական ձևակերպում, կառուցված չլինի ենթադրությունների հիման վրա, իսկ մյուս կողմից՝ բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցումը պետք է իրականացվի այնպես, որ հնարավոր լինի հավաստել, որ վերջինս որոշակի պահի հաստատապես կարող էր ծանոթանալ նախատեսվող բռնագանձման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությանը: Ընդ որում՝ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցմանը վերաբերող, օրենսդրի կողմից նախատեսվող իրավակարգավորումները և դրանց կիրառումը պետք է ապահովեն գրավատուի՝ բռնագանձման գործընթացի մասին որոշակի պահի ծանուցված լինելը փաստելու հնարավորությունը:

5.2. Անդրադառնալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցման մասին օրենսդրական կարգավորումներին՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ բռնագանձման մասին ծանուցումը գրավատուին պատշաճ կարգով հանձնված է համարվում, եթե ծանուցումը կատարվել է Օրենսգրքի 20.1 գլխով սահմանված կարգով (Օրենսգրքի 249-րդ հոդվածի 3-րդ մաս): Նշված գլխում ներառված 330.1-ին հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ օրենքով կամ պայմանագրով կամ կանոնադրությամբ կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի թողարկման ազդագրով ծանուցման համար նախատեսված պարտադիր ընթացակարգեր ու պայմաններ նախատեսված չլինելու դեպքում ծանուցումը համարվում է պատշաճ, եթե կատարվել է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, առձեռն փոխանցմամբ, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով: Միաժամանակ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության

իրավունքի պետական գրանցման համար գրավառուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն նաև գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, իսկ եթե գրավառուն իրավաբանական անձ է, ապա նաև հիփոթեքի առարկան որպես սեփականություն գրավառուին հանձնելու մասին իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը: Իսկ Օրենքի վիճարկվող դրույթից հետևում է, որ բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցման փաստը հիմնավորող փաստաթղթեր են ծանուցման փոստային առաքման անդորրագիրը կամ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու պահանջն ուղղված է գրավատուի սեփականության իրավունքի ապահովմանը և պաշտպանությանը, քանի որ այդ փաստաթուղթը հիմնավորում է բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի իրազեկված լինելը, ինչն էական նշանակություն ունի վերջինիս կողմից գրավով ապահովված պարտավորությունը կատարելու, ինչպես նաև արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունն իրացնելու տեսանկյունից: Միաժամանակ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին քննարկվող փաստաթղթի ներկայացումը հնարավորություն է տալիս բացառելու անշարժ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքի կորուստը՝ բռնագանձման գործընթացի վերաբերյալ վերջինիս ծանուցված չլինելու և օրենքով նրան վերապահված իրավունքներն իրականացնելու հնարավորություն չունենալու պայմաններում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Օրենքի 40-րդ հոդվածում առանձնահատուկ կերպով ընդգծվում են բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու կարևորությունը և այդ պահանջի կատարումն ապահովելու հստակ նախապայմանը՝ դրա հիման վրա մյուս պարտադիր ընթացակարգերն ապահովելու համար: Այլ կերպ՝ հենց բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու պարտադիր պահանջի պահպանմամբ է պայմանավորվում դրան հաջորդող և դրա հետ փոխկապակցված մյուս ընթացակարգերի իրավաչափությունը:

Մասնավորապես՝ խնդրո առարկա հոդվածի 1-ին մասով գրավառուի համար սահմանված է սեփականության իրավունքի պետական գրանցման

նպատակով սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից՝ Օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ նաև գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը ներկայացնելու պահանջ: Այսինքն՝ գրավառուի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման իրականացումը հնարավոր է միայն գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու պահանջի կատարումն ապահովելու և դրա վերաբերյալ համապատասխան ապացույցներն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու պարագայում: Ընդ որում՝ **գրավատուին հասցեագրված, գրավի առարկային կամ գրավով ապահովված պարտավորությանը վերաբերող ցանկացած գրություն (փաստաթուղթ) չի կարող համարվել քննարկվող դրույթի իմաստով բռնագանձման ծանուցում, այլ դրա բովանդակությունը պետք է ուղղակիորեն արտահայտի գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու գրավառուի կամքը:**

Միաժամանակ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում գրավառուի համար հստակ նախատեսված է ոչ միայն գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենի, այլ նաև բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթի ներկայացման պահանջ: Նշված կարգավորմամբ առավել է ընդգծվում բռնագանձման ծանուցումը գրավատուին իրապես հանձնված լինելու անհրաժեշտությունը, մասնավորապես, վերջինիս կողմից այն ստանալն ապահովելը՝ որպես բռնագանձման գործընթացի առաջնահերթ պայման: Հենց նշված հանգամանքի հաստատման նպատակով է, որ տվյալ հոդվածի 1-ին մասով գրավառուի համար սահմանված է ոչ միայն գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենի, այլ նաև բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթի ներկայացման պահանջ:

Հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ գրավառուի սեփականության իրավունքի գրանցման վարույթում բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթի նշանակությունը՝ կարևոր է այն փաստաթղթերի շրջանակը, որոնցով կարող է հաստատվել քննարկվող հանգամանքը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասով սահմանվել են նշված հոդվածի իմաստով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերը, որոնք են՝ 1) ծանուցման փոստային առաքման

անդորրագիրը, կամ 2) ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը): Փաստորեն, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու նպատակով սահմանվել է գրավառուի կողմից կա՛մ ծանուցման փոստային առաքման անդորրագրի, կա՛մ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականի (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշման) ներկայացման պահանջ:

Սահմանադրական դատարանը սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների համատեքստում արձանագրում է, որ ծանուցման եղանակի ընտրության հարցում օրենսդիրն օժտված է որոշակի հայեցողությամբ, այնուամենայնիվ, ցանկացած դեպքում նշված ծանուցումը պետք է գործնականում ապահովի բռնագանձման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը գրավատուին: Հետևաբար՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին ներկայացվող՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը պետք է հնարավորություն տա **հաստատել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը և այն հանձնելու օրը**, այսինքն՝ այն պետք է տեղեկություններ պարունակի, ի թիվս այլնի՝ հասցեատիրոջը փոստային առաքանու հանձնման ամսաթվի վերաբերյալ:

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերոգրյալի համատեքստում անդրադառնալ գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու գործընթացի վերաբերյալ գրավատուին ծանուցելու և ծանուցման փոստային առաքման անդորրագիրն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներին:

Այսպես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, **թիվ ՎԴ3/0092/05/10 վարչական գործով** 2010 թվականի դեկտեմբերի 27-ին կայացրած որոշմամբ անդրադառնալով գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջին, արձանագրել է հետևյալը. «[Օ]րենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը ենթադրում է գրավառուի կողմից գրավատուին՝ վերջինիս կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին իրազեկելու (ծանուցելու) կապակցությամբ գրավառուի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պատշաճ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց

դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը:

(...) [O]րենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավառուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են [O]րենսգրքով սահմանված գրավառուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավատուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրազեկումը գրավառուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը»:

Մինչդեռ **թիվ ՎԴ/3164/05/18 վարչական գործով** 2021 թվականի մայիսի 21-ին կայացրած որոշմամբ (որով արտահայտված իրավական դիրքորոշումներին հղում է կատարվել դիմողի մասնակցությամբ վարչական գործի շրջանակում ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման մեջ) ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյոք գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար որպես բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ բավարար է ծանուցման փոստային առաքման անդորրագրի առկայությունը, նշել է, որ «(...) արտադատական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը կարող է լինել և՛ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, և՛ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը: Նման պայմաններում օրենսդիրը, ծանուցման փոստային առաքման անդորրագիրը որպես արտադատական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ դիտարկելով, կարևորել է բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելու հանգամանքը, որը բավարար է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու համար:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն բռնագանձման ծանուցման փոստային առաքման անդորրագրի առկայությունն արդեն վկայում է կողմին բռնագանձման ծանուցումը պատշաճ հանձնված լինելու

հանգամանքը, որպիսի պայմաններում [Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն] [Օ]րենքի 24-րդ և 40-րդ հոդվածներով նախատեսված փաստաթղթերը հիմք ընդունելով, կարող է իրավաչափորեն կատարել սեփականության իրավունքի պետական գրանցումը»:

Փաստորեն, խնդրո առարկա հարցի կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայում արտահայտվել են հակասական դիրքորոշումներ: Մասնավորապես՝ թեև ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ-3/0092/05/10 վարչական գործով կայացրած որոշմամբ արձանագրել է գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին գրավատուին իրազեկելու (ծանուցելու) կարևորությունը, ընդգծել դրա նշանակությունը գրավատուի իրավունքների իրականացման տեսանկյունից և արձանագրել, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը, այդուհանդերձ, հետագայում կայացրած որոշումներում հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթի շրջանակում կարևորել է բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելու հանգամանքը՝ այն բավարար համարելով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու համար: Այսինքն՝ իրավական նշանակություն է տրվել ոչ թե գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումն ստանալը, այլ միայն գրավառուի կողմից նշված ծանուցումն ուղարկելը հավաստող փաստաթղթին:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը փաստում է, որ իրավակիրառ պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասին տրվել է այնպիսի մեկնաբանություն, որով ծանուցման փոստային առաքման անդորրագիրն ըստ էության նույնացվել է փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագրի հետ:

Նշվածի կապակցությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի «ժգ» կետի համաձայն ընդունված՝ «Փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» Կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի թիվ 211-Ն որոշման հավելվածի 32-րդ կետի համաձայն՝ գրանցվող փոստային առաքանիները և դրամական միջոցների փոստային փոխադրությունները փոստային կապի օբյեկտներում ընդունվում են ուղարկողի հասցեի առկայության դեպքում: Գրանցվող փոստային առաքանու և դրամական միջոցների փոստային փոխադրությունների ընդունման ժամանակ ուղարկողին տրվում է անդորրագիր: Անդորրագրում նշվում են առաքանու կամ դրամական միջոցների փոստային փոխադրությունների տեսակը և տարատեսակը, հասցեատեր ֆիզիկական անձի

ազգանունը, անունը, հայրանունը (իրավաբանական անձի անվանումը), նշանակման վայրի փոստային կապի օբյեկտի անվանումը, փոստային առաքանու կամ դրամական միջոցների փոստային փոխադրության համարը:

Փաստորեն, փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագրով, հաշվի առնելով դրանում պարունակվող տեղեկությունները, կարող է հաստատվել միայն բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելու փաստը: Մինչդեռ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բռնագանձման ծանուցումը գրավատուին պատվիրված նամակով ուղարկելը չի երաշխավորում գրավատուի կողմից այդ փաստաթղթի ստացումը, ուստի բռնագանձման ծանուցումն ուղարկելու վերաբերյալ փաստաթուղթը՝ առանց գրավատուին այդ առաքանու հանձնումը հավաստող ծանուցման, չի կարող համարվել բավարար՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու համար: Այլ կերպ՝ փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագրով հնարավոր չէ հավաստել բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցված լինելը, որպիսի պայմաններում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին այդ անդորրագրի ներկայացումը կրում է բացառապես ձևական բնույթ: Նման եզրահանգման հիմքում ընկած է, մասնավորապես, այն իրողությունը, որ գրավատուին բռնագանձման ծանուցման հանձնումը կարող է հնարավոր չլինել գրավատուի կամքից անկախ պատճառներով, ուստի սուկ բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելը չի բացառում բռնագանձման գործընթացի մասին վերջինիս օբյեկտիվորեն իրազեկված չլինելու իրավիճակները: Հետևաբար՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից չի կարող պայմանավորվել այն ենթադրությամբ, որ գրավատուին ուղարկված բռնագանձման ծանուցումը վերջինիս կողմից պետք է ստացված լինի:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ **այդ դրույթում նշված ծանուցման փոստային առաքման անդորրագիրը չի նույնանում այն անդորրագրի հետ, որը տրվում է ուղարկողին փոստային առաքանու ընդունման ժամանակ**, թեև երկու դեպքում էլ օգտագործվում է «անդորրագիր» բառը: Քննարկվող դրույթի նման մեկնաբանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ **փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագիրը չի պարունակում և չի կարող պարունակել տեղեկություններ ծանուցումը գրավատուին հանձնված լինելու վերաբերյալ**, քանի որ հասցեատիրոջը փոստային առաքանու հանձնումը կատարվում է ուղարկողից այդ առաքանու ընդունման համեմատությամբ ավելի ուշ: **Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «ժա-**

նուցման փոստային առաքման անդորրագիր» հասկացությունը ներառում է փոստային առաքման գործընթացում կազմվող այն փաստաթուղթը կամ փաստաթղթերի համակցությունը, որը բավարար տեղեկություններ է պարունակում գրավատուի կողմից այդ ծանուցման ստացման վերաբերյալ: Ընդ որում՝ այս համատեքստում նշանակություն չպետք է ունենա այն հանգամանքը, թե արդյոք կոնկրետ փաստաթուղթը փոստային առաքման շրջանակում կոչվում է անդորրագիր, թե՛ ոչ, կարևորություն պետք է տրվի այդ փաստաթղթի բովանդակությանը:

Օրենքի վիճարկվող նորմին իրավակիրառ պրակտիկայում տրվել է վերը նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն, որի արդյունքում բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի շրջանակում է ներառվել այնպիսի փաստաթուղթ, որով առաքանու հանձնման փաստը ողջամտորեն չի կարող հաստատվել: Արդյունքում ստեղծվում է իրավիճակ, երբ գրավատուի սեփականության իրավունքի պետական գրանցումը կարող է համարվել ուժը կորցրած ճանաչված՝ բռնագանձման այնպիսի գործընթացի արդյունքում, որի վերաբերյալ նա ողջամտորեն տեղեկացված չի եղել, հետևաբար՝ հնարավորություն չի ունեցել օգտվելու այդ գործընթացի դեմ իրավական պաշտպանության հնարավորություններից: Այսինքն՝ վիճարկվող դրույթի նման մեկնաբանությունը հանգեցնում է անձի (գրավատուի) սեփականության իրավունքի նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության՝ առանց վերջինիս կողմից օրենսդրությամբ նախատեսված՝ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքներից օգտվելու հնարավորության ապահովման:

Միաժամանակ հատկանշական է, որ օրենսդրի կողմից սահմանված՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիր ներկայացնելու պահանջի այլընտրանքը բռնագանձման ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականի (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշման) ներկայացումն է: Վերջինը, միանշանակ, որևէ կերպ չի կարող բնորոշվել որպես ծանուցման փոստային առաքման անդորրագրին (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ այն դիտարկելու, մասնավորապես՝ այն որպես ծանուցումը գրավատուին ուղարկված լինելը հաստատող փաստաթուղթ դիտարկելու պարագայում) իրավական առումով համարժեք,

¹ Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի կամ դրա օրենքով սահմանված մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է ուժը կորցրած ճանաչված՝ այդ գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ օրենքով սահմանված հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից:

դրա հետ տրամաբանորեն և բովանդակային առումով փոխկապակցված այլընտրանքային փաստաթուղթ:

Այսինքն՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիրն իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ դիտարկելու պարագայում ստացվում է, որ բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկված լինելը հաստատող փաստաթղթի ներկայացումն այլընտրանք է ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականին (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշմանը): Իրավակարգավորմանը նման մեկնաբանություն տալու պարագայում իմաստագրվում է օրենսդրի կողմից Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով, որպես ծանուցման փոստային առաքման անդորրագիր ներկայացնելու պահանջի այլընտրանք, ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացական (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշում) ներկայացնելու պահանջի նախատեսումը:

Վերոգրյալից ևս բխում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասին պետք է տրվի այնպիսի մեկնաբանություն, որ դրանով նախատեսված՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելը հաստատող, տրամաբանորեն և բովանդակային առումով միմյանց փոխկապակցված այլընտրանքային փաստաթղթերը լինեն իրավական առումով համարժեք: Այսինքն՝ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասից պետք է բխի, որ դրանով սահմանված՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերն են՝

1) **ծանուցման փոստային առաքման անդորրագիրը.** նշված փաստաթուղթը բռնագանձման ծանուցումը փոստային առաքման միջոցով գրավատուին հանձնված լինելը, ծանուցումը վերջինիս կողմից ստացված լինելը հաստատող փաստաթուղթ է կամ փաստաթղթերի համակցություն, որի ներկայացումն իրավասու մարմին հնարավոր է ապահովել, օրինակ, այն դեպքում, երբ բռնագանձման ծանուցումը գրավատուին է ուղարկվել պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ.

2) **ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը).** նշված փաստաթուղթը կարող է առկա լինել և իրավասու մարմին ներկայացվել այն դեպքում, երբ բռնագանձման ծանուցումը գրավատուին է հանձնվել այլ՝ ոչ փոստային առաքման եղանակով, այդ թվում՝ գրավառուի կողմից առձեռն հանձնելու միջոցով, և հաստատում է բռնագանձման ծանուցումը գրավատուի կողմից ստացված լինելու հանգամանքը:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ օրենսդրի կողմից գրավառուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության

ամրագրումը նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի իրավունքները, իսկ բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի իրազեկված լինելը հաստատող փաստաթղթի ներկայացումն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին վերջինիս գործնականում հնարավորություն է տալիս ստուգելու, թե արդյոք գրավատուն հնարավորություն ունեցե՞լ է օգտվել իր իրավունքների պաշտպանության մեխանիզմներից: Հետևաբար՝ վիճարկվող դրույթին տրված այն մեկնաբանությունը, որով, ըստ էության, հնարավոր է դառնում հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ բռնագանձման ծանուցումը գրավատուի կողմից ստացված լինելը հաստատող փաստաթղթի բացակայության պայմաններում, համահունչ է Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի բովանդակությանը:

5.3. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական խնդիրը հարկ է քննարկել նաև անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ վիճարկվող հոդվածի համատեքստում սեփականության իրավունքի պաշտպանությունը սերտորեն փոխկապակցված է դատական պաշտպանության իրավունքի հետ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Դատական պաշտպանության իրավունքը սահմանադրական հիմնական այն իրավունքներից է, որի իրականացմամբ ապահովվում են նաև մի շարք այլ իրավունքների պատշաճ իրականացումը, դրանց պաշտպանությունը: Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բովանդակության բացահայտմանն ուղղված մի շարք իրավական դիրքորոշումներ:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրել է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք: Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և

ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակ արձանագրել է դատական պաշտպանության իրավունքի՝ անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը, ինչպես նաև այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք լինելը: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ երաշխիքներ ստեղծելու պետության պարտականությունը:

2020 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1559 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ կենսագործուն ապահովելու համար պետք է օրենսդրորեն երաշխավորել ինչպես դատարանի մատչելիության, դատարան դիմելու հնարավորության ապահովման, այնպես էլ՝ գործն անկախ և անաչառ դատարանի կողմից արդարության պահանջների՝ մրցակցության և հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու իրավական հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը 2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշման մեջ նշել է, որ անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից ընդհանրապես առաջնահերթ կարևոր է, թե որքանով է մատչելի (հասանելի) արդարադատությունը, ինչպիսի՞ իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար, նաև դրանով պայմանավորված՝ դատավարական (քրեական, քաղաքացիական և վարչական) կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար: Առանց անձի՝ դատարան դիմելու կամահայտ դրսևորման, դատական պաշտպանության իրավունքի իրացումը և ընդհանրապես արդարադատության իրականացումն իրավաբանորեն անիրագործելի են: Դատարան դիմելու իրավունքի իրացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Չնայած այդ իրավունքն անմիջականորեն նախատեսված չէ Սահմանադրությամբ, այնուհանդերձ, բխում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից: Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար:

Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումը երաշխավորելու տեսանկյունից Սահմանադրական դատարանն առաջին

հերթին կարևորել է արդարադատության մատչելիության (հասանելիության) գնահատումը, ինչպես նաև դատարան դիմելու իրավունքն իրականացնելու համար առաջադրված իրավական պայմանների բնույթը: Ավելին՝ Սահմանադրական դատարանն անձի՝ դատարան դիմելու իրավունքի իրականացման երաշխավորումը դիտարկել է որպես սահմանադրական իրավունքների և ազատությունների՝ դատական կարգով պաշտպանության առաջնահերթ նախապայման:

Անդրադառնալով գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիքներին՝ Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 19-ի ՍԴՈ-1294 որոշմամբ, որպես գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիք, առաջնահերթ կարևորել է գրավատուի պատշաճ ծանուցման ապահովումը, այնուհետև՝ դրա հիման վրա գրավատուի կողմից արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն այս համատեքստում կարևորել է օրենքով սահմանված՝ գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց միայն երկու ամիս հետո գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու պահանջի պահպանումը, որը ևս գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիք է: Այս իրավական երաշխիքներն են, որ խնդրո առարկա իրավահարաբերություններում համակարգային առումով ուղղված են անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացման ապահովմանը:

Վերոգրյալի լույսի ներքո քննարկման առարկա դարձնելով Օրենքի վիճարկվող դրույթի (հաշվի առնելով դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը)՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

նկատի ունենալով հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու իրավահարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթը՝ քննարկվող հարցի համապարփակ վերլուծությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է այն դիտարկել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված համապատասխան իրավակարգավորումների, դրանք նախատեսելու նպատակի ընդհանուր համատեքստում:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ տվյալ իրավիճակում հարցը վերաբերում է որպես քաղաքացիաիրավական բնույթի իրավահարաբերությունների հետևանք առաջացող՝ վարչական բնույթի իրավահարաբերություններին, մասնավորապես, իրավասու մարմնի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում

իրականացնող մարմնի կողմից առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելուն, որի պարագայում օրենսդիրն Օրենքով նախատեսել է առանձնահատուկ կարգավորումներ: Հենց նշված օրենքով սահմանված իրավակարգավորումներով է առաջնորդվում իրավասու վարչական մարմինը համապատասխան վարչարարությունն իրականացնելիս:

Այնուամենայնիվ, քննարկվող համատեքստում Օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները պետք է հաշվի առնվեն Օրենքի վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորման քննարկման շրջանակում:

Այս կապակցությամբ հարկ է վկայակոչել Օրենսգրքի՝ «**Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը**» վերտառությամբ 249-րդ հոդվածի 2-րդ մասը, որով ամրագրված են գրավատուի և պարտապանի (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) իրավունքների ապահովման կարևոր երաշխիքներ: Այդ երաշխիքների պատշաճ ապահովումն առանցքային և հիմնարար նշանակություն ունի քննարկվող ամբողջ գործընթացի իրավաչափությունը գնահատելու տեսանկյունից:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավատուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն (պարտապանը) իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Եթե գրավի առարկայի բռնագանձման ընթացքը կասեցնելու որոշումից հետո դատարանը որոշում է կայացրել գրավատուի հնարավոր վնասների հատուցման համար պահանջվող ապահովումը տրամադրելու վերաբերյալ, ապա գրավատուի (պարտապանի) կողմից գրավատուի հնարավոր վնասները հատուցելու համար տրամադրվող ապահովումը պետք է համարժեք լինի գրավատուի հնարավոր վնասների արժեքին, բայց չպետք է գերազանցի գրավի առարկայի արժեքը:

(...) **Բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին հանձնելուց երկու ամիս հետո գրավատուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների**

միջոցով, եթե գրավապահուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավառուն կարող է իրացնել գրավի առարկան մինչև սույն պարբերությամբ նախատեսված երկու ամիսը լրանալը, եթե պարտապանը և գրավապահուն (եթե գրավապահուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) բռնագանձման ծանուցումն ստանալուց հետո սույն օրենսգրքի 20.1-ին գլխով սահմանված կարգով գրավոր համաձայնություն են փոխել գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ: **Մինչև բռնագանձման ծանուցում ստանալը գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ փրված համաձայնությունն առ ոչինչ է (...)**»:

Միաժամանակ, Օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավապահուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ **դադարեցնել դրա վրա բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կեդրանցվել է: Այդ իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է: Անձը, որը պահանջում է դադարեցնել գրավ դրված գույքի բռնագանձումը կամ դրա իրացումը, պարտավոր է գրավառուին հատուցել այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու կապակցությամբ կրած ծախսերը:**

Այսպիսով, Օրենսգրքի վերոնշյալ հոդվածների բովանդակությունից ակնհայտ է, որ օրենսդիրը դրանցով ամրագրված իրավակարգավորումների հիմքում դրել է գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման պատշաճ իրավական երաշխիքներ նախատեսելու նպատակը՝ այդ տեսանկյունից առաջնահերթ կարևորելով գրավատուի պատշաճ ծանուցման, ինչպես նաև դրա հիման վրա՝ գրավատուի՝ բռնագանձման օրինականությունը **դատական կարգով վիճարկելու** և բռնագանձումը դադարեցնելու իրավական հնարավորության ապահովումը:

Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է հստակ երկամսյա ժամկետ՝ գրավատուի կողմից իր իրավունքների պաշտպանությանն ուղղված վերոնշյալ իրավական երաշխիքների իրացումը, գործնականում դրանց կենսագործումն ապահովելու նպատակով, որը ևս գրավատուի հիմնական իրավունքների պաշտպանության կարևոր իրավական երաշխիք է: Այս իրավական երաշխիքները նաև ուղղված են անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ **դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը**, ուստի դրանց պատշաճ իրացման ապահովումն ունի հիմնաքարային նշանակություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առկա է գրավառուի սեփականության իրավունքի պետական գրանցման մերժման հիմք, եթե իրավունքի պետական գրանցման դիմումը ներկայացնելու պահին չի լրացել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու օրվան հաջորդող երկամսյա ժամկետը:

Ընդ որում՝ միակ բացառությունն այն է, երբ ներկայացվել է պարտապանի և գրավատուի՝ օրենքով սահմանված կարգով տրված գրավոր համաձայնությունը մինչև երկամսյա ժամկետի լրանալը գրավի առարկան բռնագանձելու վերաբերյալ: Նման իրավակարգավորման առկայությամբ առավել է ընդգծվում այն պահանջը, որ գրավառուի սեփականության իրավունքի պետական գրանցումը հնարավոր է իրականացնել միայն բռնագանձման ծանուցումը գրավատուին պատշաճ կերպով հանձնելուն հաջորդող՝ Օրենքով սահմանված ժամանակահատվածը լրանալուց հետո (այս կապակցությամբ նախատեսված միակ բացառության հաշվառմամբ), քանի որ տվյալ գործընթացում օրենսդիրը սահմանել է գրավատուի իրավունքների պաշտպանության երաշխիքներ, որոնց իրացմանն էլ ուղղված է վերջինիս կողմից բռնագանձման ծանուցումն ստանալուն հաջորդող երկամսյա ժամկետի պահպանման պարտադիր պահանջի սահմանումը:

Նշված երկամսյա ժամկետը սահմանվել է գրավատուին իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով, որպիսի գործողությունների կատարմանը գրավատուն կարող է ձեռնամուխ լինել միայն դրա անհրաժեշտության վերաբերյալ պատշաճ կերպով տեղեկանալուց, այն է՝ բռնագանձման ծանուցումն ստանալուց հետո: Դրանով էլ պայմանավորված՝ գործող իրավակարգավորումների համաձայն՝ սահմանված երկամսյա ժամկետի հաշվարկի համար օրենսդիրն էական է համարում բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու օրվա ամրագրումը:

Մինչդեռ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում, այն է՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագրի հետ նույնացվելու պարագայում իմաստագրկվում է քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գրավատուի իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքների նախատեսումը, քանի որ գործնականում դրանց իրացումը դառնում է անհնարին: Մասնավորապես՝ գրավատուն սահմանված կարգով բռնագանձման ծանուցումը չստանալու, դրա վերաբերյալ պատշաճ չիրազեկվելու հետևանքով զրկվում է այդ կապակցությամբ իր իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքներն իրացնելու, այդ թվում՝ *դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու հնարավորությունից*, իսկ օրենսդրի կողմից գրավատուին ընձեռված՝ *բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու* կամ բռնագանձումը դատարեցնելու հնարավորությունը, ինչպես նաև դրանց կենսագործման համար սահմանված երկամսյա ժամկետի պահպանման պահանջը դառնում են հռչակագրային բնույթ կրող իրավակարգավորումներ:

Այլ կերպ ասած՝ Օրենքի վիճարկվող նորմն իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ կիրառելու հետևանքով գրավատուն զրկվում

է ինչպես գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու, այնպես էլ՝ բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու իրավունքներն իրականացնելու հնարավորությունից: Գրավատուի այդ իրավունքների պատշաճ իրականացումը հնարավոր կլինի ապահովել միայն այն պարագայում, եթե Օրենքի վիճարկվող նորմն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվի իր սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում, որի համաձայն՝ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելը հաստատող փաստաթուղթ համարվող ծանուցման փոստային առաքման անդորրագիրը ոչ թե այն անդորրագիրն է, որը տրվում է ուղարկողին փոստային առաքանու ընդունման ժամանակ, այլ փոստային առաքման գործընթացում կազմվող այն փաստաթուղթն է կամ փաստաթղթերի համակցությունը (անկախ փոստային առաքման շրջանակում տվյալ փաստաթղթին տրված անվանումից), որը պարունակում է բավարար տեղեկություններ ծանուցումը գրավատուի կողմից ստացված լինելու վերաբերյալ:

Նշվածի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի վիճարկվող դրույթը պետք է կիրառվի ներկայացված՝ գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում՝ օրենսդրությամբ գրավատուին ընձեռված իրավական երաշխիքների իրացումը գործնականում հնարավոր չի լինի ապահովել:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու գործընթացը համակարգային առումով սկսվում է բռնագանձման վերաբերյալ գրավատուի պատշաճ իրազեկման, այն է՝ բռնագանձման ծանուցումը վերջինիս կողմից ստանալու պահից: Այս առումով բռնագանձման ծանուցումը գրավատուի կողմից ստանալու պահն ուղենշային է, քանի որ իրավաչափորեն դրանով է պայմանավորված գրավատուի հիմնական իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքների իրացման հնարավորությունը, ինչպես նաև այդ համատեքստում բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու (դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու) համար նախատեսված երկամսյա ժամկետի (բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու օրվան հաջորդող երկամսյա ժամկետի) հաշվարկը: Մինչդեռ Օրենքի վիճարկվող նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այս հանգամանքն անտեսվել է:

Այսպիսով՝ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը» ձևակերպման մեջ օգտագործված՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը ոչ թե նույնանում է փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագրի հետ, այլ փոստային առաքման

գործընթացում կազմվող այն փաստաթուղթն է կամ փաստաթղթերի համակցությունը (անկախ փոստային առաքման շրջանակում կոնկրետ փաստաթղթին տրված անվանումից), որը հնարավորություն է տալիս հաստատել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը և այն հանձնելու օրը:

5.4. Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ գործնականում չի բացառվում, որ գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելը լինի անհնարին՝ գրավառուից անկախ պատճառներով: Մինչդեռ Օրենքի 40-րդ հոդվածը պահանջում է գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթի ներկայացում և սահմանում է այդպիսի փաստաթղթերի խիստ սահմանափակ շրջանակ:

Օրենսգրքի 226-րդ հոդվածից հետևում է, որ գրավի իրավունքը գրավառուին վերապահում է հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ գրավի առարկայի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք: Ուստի գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու գործընթացի և հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման իրականացման շրջանակում շոշափվում են ոչ միայն գրավատուի, այլև գրավառուի իրավունքները, և այդ իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերը պետք է հաշվի առնեն իրար հակադրվող իրավունքների առկայությունը:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ գրավատուին ծանուցելու փորձերը տարաբնույթ, գրավառուից անկախ պատճառներով ապարդյուն են լինում՝ գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումն ստանալու անհնարինության պայմաններում: Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ Օրենսգրքի՝ «Ծանուցումներ» վերտառությամբ 20.1-ին գլխում (որին հղում է կատարում Օրենսգրքի՝ գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը սահմանող 249-րդ հոդվածի 3-րդ մասը) ներառված 330.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի դեպքերում օրենքով սահմանված հրապարակային եղանակով կատարված ծանուցումը ևս համարվում է պատշաճ ծանուցում: Մինչդեռ Օրենքի 40-րդ հոդվածով սահմանված է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելը հաստատող փաստաթղթերի հստակ շրջանակ: Միաժամանակ, նշված հոդվածով նախատեսված չէ այդ եղանակներով գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումն ստանալն ապահովելու անհնարինության պարագայում

բռնագանձման ծանուցման վերաբերյալ գրավատուին իրազեկելու հնարավորություն:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ մի շարք իրավական ակտերով նախատեսված են անձի ծանուցման այլընտրանքային եղանակներ այն դեպքերում, երբ հնարավոր չի լինում անձին հանձնել ծանուցումը, օրինակ՝ երբ անձը հրաժարվում է ստանալ փոստային առաքանին, կամ անձի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվում է: Նման իրավիճակների համար կարգավորումներ են նախատեսված, օրինակ, Օրենքի՝ «Իրավունքի դադարման պետական գրանցումը և գրանցված իրավունքի պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելը» վերտառությամբ 35-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-ին հոդվածով: Մասնավորապես՝ նշված դրույթներով նախատեսվել են մեխանիզմներ, որոնց գործադրումը համարվում է պատշաճ ծանուցման ապահովում՝ չկարևորելով անձի կողմից ծանուցումը փաստացի ստացած լինելը հաստատող ապացույցի առկայությունը (օրինակ՝ ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում տեղադրելու դեպքում):

Մինչդեռ օրենսդիրը համանման մոտեցում չի ցուցաբերել Օրենքի 40-րդ հոդվածով կարգավորվող իրավահարաբերությունների պարագայում, քանի որ տվյալ հոդվածով ուղղակիորեն նախատեսված չէ որևէ այլընտրանք այն դեպքի համար, երբ գրավառուն իրենից անկախ պատճառներով հնարավորություն չունի ապահովել գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումն ստանալը, ըստ այդմ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմին չի կարող ներկայացնել ծանուցման փոստային առաքման անդորրագիրը կամ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը (այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը քննարկվող հարցի վրա է հրավիրում Ազգային ժողովի ուշադրությունը՝ ընդգծելով գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու գործընթացի և հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելու վարույթի առնչությամբ այնպիսի իրավակարգավորումների ամրագրման անհրաժեշտությունը, որոնք բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի ծանուցման հարցում կապահովեն արդարացի հավասարակշռություն գրավատուի և գրավառուի իրավունքների և օրինական շահերի միջև:

5.5. Կիրառելով Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշումը սույն սահմանադրաիրավական վեճի նկատմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակում Դատական դեպարտամենտից պահանջված և ստացված թիվ ՎԴ/8136/05/18 վարչական գործի ուսումնասիրությամբ պարզվում է, որ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այն մեկնաբանմամբ, որ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծանուցման փոստային առաքման անդորրագիրն ըստ էության նույնացվել է փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագրի հետ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հաստատված համարելով այն փաստական հանգամանքը, որ գրավառուի կողմից գրավատուին ուղարկված բռնագանձման ծանուցումը վերջինս չի ստացել, այն է՝ նշված ծանուցումը վերադարձվել է «Չպահանջված» նշումով, միաժամանակ վերահաստատել է ՎԴ/3164/05/18 վարչական գործով արտահայտած իր այն դիրքորոշումը, որ միայն փոստային առաքանին ուղարկելու վերաբերյալ տեղեկությունները պարունակող անդորրագրի առկայությունն արդեն իսկ վկայում է կողմին բռնագանձման ծանուցումը պատշաճ հանձնված լինելու հանգամանքի մասին: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը համարել է, որ գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացվող սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից ներկայացվել է նաև բռնագանձման ծանուցումը գրավատու Ռուզաննա Ղազարյանին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը:

Մինչդեռ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համաձայն՝ վիճարկվող դրույթին չի կարող տրվել այնպիսի մեկնաբանություն, որով փոստային առաքանու ընդունման ժամանակ ուղարկողին տրվող անդորրագիրը որակվի որպես բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթ՝ փոստային առաքանին հասցեատիրոջը հանձնելու վերաբերյալ տեղեկություններ չպարունակելու պայմաններում:

Հաշվի առնելով վիճարկվող դրույթին Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ նախատեսված դիրքորոշումների հիման վրա տրված վերը նշված մեկնաբանությունը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի գործով Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ նշված դրույթի իմաստով՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը փոստային առաքման գործընթացում կազմվող այն փաստաթուղթն է կամ փաստաթղթերի համակցությունը (անկախ փոստային առաքման շրջանակում տվյալ փաստաթղթին տրված անվանումից), որը հնարավորություն է տալիս հաստատել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը և այն հանձնելու օրը:


2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1667



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԼԱՐՎԱՐ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 249-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 4(108)2022

Քաղ. Երևան

15 նոյեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ «Լարվար» արտադրական կոոպերատիվի ներկայացուցիչ Լ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լարվար» արտադրական կոոպերատիվի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենս-

գրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ **«Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը»** վերտառությամբ 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը սահմանում է.

«2. Գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն (պարտապանը) իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Եթե գրավի առարկայի բռնագանձման ընթացքը կասեցնելու որոշումից հետո դատարանը որոշում է կայացրել գրավառուի հնարավոր վնասների հատուցման համար պահանջվող ապահովումը տրամադրելու վերաբերյալ, ապա գրավատուի (պարտապանի) կողմից գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար տրամադրվող ապահովումը պետք է համարժեք լինի գրավառուի հնարավոր վնասների արժեքին, բայց չպետք է գերազանցի գրավի առարկայի արժեքը: Այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է գրանցման (այդ թվում՝ պետական գրանցման), գրավառուն մինչև գրավի բռնագանձման գործընթացն սկսելը, ինչպես նաև գրավի բռնագանձման գործընթացը դադարեցնելու կամ ավարտվելու դեպքում պարտավոր է այդ մասին պատշաճ ձևով ծանուցել նաև գրանցում իրականացնող մարմնին»:

Օրենսգրքի 249-րդ հոդվածը 2003 թվականի մարտի 31-ի ՀՕ-521-Ն և 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-188-Ն օրենքներով շարադրվել է նոր խմբագրությամբ, իսկ նշված հոդվածի 2-րդ մասի վիճարկվող պարբերությունը լրացվել և փոփոխությունների է ենթարկվել 2016 թվականի հունիսի 17-ի ՀՕ-110-Ն օրենքով:

Օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի ՍԴՈ-1294 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթը (նշված հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավառուի հնարա-

վոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում) 2019 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-214-Ն օրենքով ենթարկվել է փոփոխության, մասնավորապես՝ Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության երրորդ նախադասությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի ապրիլի 30-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ին: Հետագայում Ազգային ժողովի կողմից 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-247-Ն օրենքով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ: Տվյալ օրենքը Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2011 թվականի հուլիսի 19-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի՝ **«Հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցումը»** վերտառությամբ 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Օրենքով նախատեսված դեպքերում գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար գրավառուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն նաև գրավառուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավառուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, իսկ եթե գրավառուն իրավաբանական անձ է, ապա նաև հիփոթեքի առարկան որպես սեփականություն գրավառուին հանձնելու մասին իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը»:

Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխությունների և (կամ) լրացումների չի ենթարկվել:

Գործի քննության առիթը «Լարվար» արտադրական կոոպերատիվի՝ 2022 թվականի հուլիսի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

«Լարվար» արտադրական կոոպերատիվը (այսուհետ նաև՝ դիմող) Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով վիճարկել է նաև Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերությունները, 252-րդ հոդվածի 1-ին մասը և Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը: Սահմանադրական

դատարանը, նկատի ունենալով, որ Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը և 252-րդ հոդվածի 1-ին մասը դատարանի վերջնական ակտով դիմողի նկատմամբ չեն կիրառվել, Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության մասով դիմումն ակնհայտ անհիմն է, իսկ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներով, 2022 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴԱՌ-179 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթն այդ մասերով կարճել է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ՀՀ դատական դեպարտամենտից պահանջված և ստացված վարչական գործի նյութերը, սույն գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ վարչական դատարանը, քննելով թիվ ՎԴ/7078/05/18 վարչական գործով «Լարվար» արտադրական կոոպերատիվի հայցն ընդդեմ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, երրորդ անձինք՝ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ և «Թորիկ» ՍՊԸ՝ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործողությունները՝ կապված «Լարվար» արտադրական կոոպերատիվին տարածքից վտարելու հետ, ոչ իրավաչափ ճանաչելու և ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին «Լարվար» արտադրական կոոպերատիվի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու, ինչպես նաև «Թորիկ» ՍՊԸ-ի անվամբ կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, 2019 թվականի մարտի 19-ի վճռով հայցը բավարարել է:

ՀՀ վարչական դատարանը հաստատված է համարել, ի թիվս այլնի, հետևյալ փաստերը. 1) 2014 թվականի դեկտեմբերի 5-ին «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, պարտապանի և «Լարվար» արտադրական կոոպերատիվի (գրավատու) միջև կնքվել է անշարժ գույքի գրավի պայմանագիր, որով պարտապանի պարտավորությունների համար գրավադրվել է գրավատուին

սեփականությամբ պատկանող անշարժ գույքը. 2) 2016 թվականի նոյեմբերի 29-ին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտապանը ճանաչվել է սնանկ (թիվ ԵԱԲԴ/0370/04/16 սնանկության գործ). 3) «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ գրավատու կոպերատիվի նախագահը տեղեկացվել է վարկային պարտավորությունների չկատարման հիմքով գրավադրված գույքի նկատմամբ դատական կարգով կամ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հնարավոր գործընթաց նախաձեռնելու մասին. 4) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մարտի 1-ի որոշմամբ բավարարվել է «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի դիմումը և վերջինիս թույլատրվել է արտադատական կարգով իրացնել պարտապանին պատկանող գույքը, նույն որոշմամբ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ին թույլատրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-252-րդ հոդվածներով սահմանված պայմանների պահպանմամբ, արտադատական կարգով իրացնել գրավի առարկաները, այդ թվում նաև՝ գրավատուին պատկանող խնդրո առարկա անշարժ գույքը (թիվ ԵԱԲԴ/0370/04/16 սնանկության գործ). 5) 2018 թվականի մայիսի 18-ին կազմված աճուրդային վաճառքի արդյունքների վերաբերյալ արձանագրությամբ անշարժ գույքի մասով «Երևանի «Ադամանդ» Ապրանքա-հումքային Բորսա» ՓԲԸ-ի հարթակում «Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված 2018 թվականի մայիսի 17-ի աճուրդը համարվել է չկայացած՝ որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարելու պատճառով. 6) 2018 թվականի մայիսի 22-ին «Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ի և «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈւՎԿ ՓԲԸ-ի միջև կնքվել է գույքը հանձնելու մասին պայմանագիր, որով աճուրդի տունը «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈւՎԿ ՓԲԸ-ին է հանձնել գրավատուին սեփականությամբ պատկանող անշարժ գույքը. 7) 2018 թվականի մայիսի 25-ին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն քննարկվող անշարժ գույքի նկատմամբ գրանցել է «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈւՎԿ ՓԲԸ-ի սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանը պատճառաբանել է նաև, որ «(...) վարչական մարմին հանդիսացող Կադաստրի մարմինը սույն գործով հայցվորին չի ներգրավել համապատասխան վարչական գործի վարույթին և վերջինիս դրա մասին ծանուցելու օրենքով սահմանված իր պարտականությունը չի իրականացրել, որի արդյունքում չի ապահովվել հայցվորի լսված լինելու իրավունքը՝ զրկելով վերջինիս օրենքով նախատեսված իրավունքների լիարժեք իրականացման և պաշտպանության հնարավորությունից», «(...) [2016 թվականի դեկտեմբերի 28-ի] գրությունը չի կարող համարվել բռնագանձման ծանուցում (...) այն պատճառով, որ դրանով որոշակի և

հստակ կերպով չի բացահայտվել գրավառուի մտադրությունը գույքը արտադատական կարգով բռնագանձելու մասին, ինչը հնարավորություն կտար պարտապանին և գրավատուին իրենց շահերից բխող ձևով և եղանակներով իրացնելու պայմանագրով և օրենքով իրենց վերապահված իրավունքները», «(...) բռնագանձման ծանուցումը պետք է հաջորդեր Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (...) որոշմանը, քանի որ հենց այդ որոշմամբ է սահմանվել արտադատական կարգով գրավի առարկան իրացնելու հնարավորությունը, այնինչ՝ սույն դեպքում (...) գրությունը նախորդել է թիվ ԵԱՔԴ/0370/04/16 որոշման կայացմանը», «(...) ներկայացված դիմումին կից բացակայել է համապատասխան ապացույցն առ այն, որ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ն նախքան գույքի արտադատական կարգով իրացումը պահպանել է հայցվորին բռնագանձման ծանուցում ուղարկելու պարտադիր պայմանը, հետևաբար՝ գրավառուի սեփականության իրավունքի պետական գրանցումը ենթակա էր մերժման»:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վերը նշված վճռի դեմ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել է՝ վճիռը թողնելով անփոփոխ՝ պատճառաբանելով նաև, որ «[2016 թվականի դեկտեմբերի 28-ի] (...) գրությունը չի կարող համարվել բռնագանձման ծանուցում, հետևաբար այն չի կարող համարվել հայցվոր[ի] կողմից ստացված, իսկ համապատասխան ապացույցը Կադաստրի պետական կոմիտե ներկայացված», «(...) դիմումին կից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհավաստվեր, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 [թվականի] մարտի 1-ի թիվ ԵԱՔԴ/0370/04/16 դատական ակտով ստացած թույլտվությունից հետո [գրավառուն] բռնագանձման ծանուցում է ուղարկել [գրավատուին]: Այսինքն՝ չի պահպանվել հայցվորին օրենքով սահմանված կարգով բռնագանձման ծանուցում ուղարկելու օրենսդրական պահանջը, ինչի արդյունքում էլ տեղի ունեցած իրավունքի պետական գրանցումը չի կարող համարվել իրավաչափ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2022 թվականի հունիսի 24-ի որոշմամբ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը բավարարել է. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը բեկանել է և փոփոխել՝ «Լարվար» արտադրական կոոպերատիվի հայցը մերժել է:

Վճռաբեկ դատարանը, հաստատված համարելով նաև վերը նշված փաստերը, միաժամանակ նշել է, որ «(...) գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելը և այն իրացնելն ուղղակի վաճառքի կամ

հրապարակային սակարկությունների միջոցով՝ այն գնորդի կողմից գնելու, իսկ պայմանագրով նախատեսված դեպքում նաև գրավադրված գույքն ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց գրավառուին հանձնելու դեպքերում, տվյալ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթեր հանդիսացող՝ նոտարական կարգով վավերացված քաղաքացիաիրավական պայմանագրերը», «ինչ վերաբերում է ստորադաս դատարանների արտահայտած այն դիրքորոշմանը, որ 28.12.2016 թվականի թիվ 1043-16 գրությունը չի կարող համարվել բռնագանձման ծանուցում այն պատճառով, որ դրանով որոշակի և հստակ կերպով չի բացահայտվել գրավառուի մտադրությունը գույքն արտադատական կարգով բռնագանձելու մասին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Կադաստրը, որպես լիազորված մարմին, իրականացնում է գույքի նկատմամբ իրավունքների և (կամ) սահմանափակումների պետական գրանցում: Ընդ որում, նշված գործառույթը վերջինս իրականացնում է համապատասխան դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում՝ իրավունքի գրանցման հիմքում դնելով իրավունքը հաստատող, իրավահաստատող փաստաթղթերի անհրաժեշտ փաթեթը և «Գույքի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իմաստով խոչընդոտների բացակայության դեպքում կատարում է իրավունքի պետական գրանցում: Վարչական մարմնի համար գոյություն չունի որևէ օրենսդրական մեխանիզմ բռնագանձման ծանուցման բովանդակությունը քննարկման առարկա դարձնելու և դրան գնահատական տալու համար (...):»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 249-րդ հոդվածի վիճարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է «բռնագանձման ծանուցում» արտահայտությունը, սակայն չի բացահայտել, թե ինչ պահանջներ, ինչ վավերապայմաններ պետք է պարունակի փաստաթուղթը, որպեսզի որակվի որպես առանց դատարանի դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցում (բռնագանձման ծանուցում):

Ըստ դիմողի՝ բռնագանձման ծանուցագիրը՝ որպես իր իրավական հետևանքներով իրավունքից զրկելուն հանգեցնող փաստաթուղթ, պետք է լինի որոշակի, քանի որ պատշաճ ծանուցումը չի կարող վերագրվել միայն «բռնագանձման ծանուցում» վերնագրված փաստաթուղթը հանձնելուն, պատշաճությունը վերաբերում է նաև հանձնված փաստաթղթի բովանդակությանը, քանզի, եթե այն կազմված լինի վերացական ձևակերպումների ձևով, ապա գրավատուն կզրկվի բռնագանձման ծանուցագրի օրինակա-նությունը վիճարկելու օբյեկտիվ հնարավորությունից:

Դիմողը փաստում է, որ երբ պարտապանը և գրավատուն չեն համընկնում, եթե բռնագանձման ծանուցումը չի լինում որոշակի, գրավատուն հնարավորություն չի ունենում ճշտել՝ որքա՞ն է պարտապանի պարտավորությունը, և արդյոք գրավառուն մինչև բռնագանձման գործընթացն սկսելը պատշաճ ձևով ծանուցել է նաև գրանցում իրականացնող մարմինին:

Դիմողի կարծիքով՝ Օրենսգրքով հստակ սահմանված չէ նաև, թե ինչ պահանջների պետք է համապատասխանի բռնագանձման ծանուցումը. Արդյոք պետք է այդ փաստաթղթում հստակ բացահայտվի գրավառուի մտադրությունը գույքն արտադատական կարգով բռնագանձելու մասին, թե՞ բավարար է նաև նշում, որ եթե պարտավորությունն ինչ-որ ժամկետում չկատարվի, ապա գրավառուն կարող է նախաձեռնել դատական կամ արտադատական կարգով բռնագանձման գործընթաց:

Դիմողի պնդմամբ՝ օրենսդրական բացը կամ որ նույնն է՝ բռնագանձման ծանուցման վավերապայմանների անորոշությունը, հիմք է տալիս ներպետական դատարաններին բոլոր այն փաստաթղթերը, որոնց վերնագիրը նշված է բռնագանձման ծանուցում, դիտարկել որպես Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթուղթ՝ առանց բացահայտելու այդ փաստաթղթի բովանդակությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշում է, որ «(...) բռնագանձման ծանուցում ուղարկելու հանգամանքն օրենսդիրը դիտարկել է բավարար սեփականության իրավունքի դադարեցման պետական գրանցում կատարելու համար, սակայն բռնագանձման ծանուցման [անորոշ լինելու] պայմաններում ըստ էության հնարավոր չէ երաշխավորել սեփականության իրավունքի և գրավառուի դատարան դիմելու իրավունքի արդյունավետ պաշտպանությունը»:

Դիմողը նշում է նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասին տրված մեկնաբանությունից հետևում է, որ չնայած վարչական մարմինը, գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքը դադարեցնելով և այլ անձի սեփականության իրավունքը գրանցելով, կայացնում է վարչական ակտ, սակայն չունի պատշաճ վարչարարության իրականացման, այդ թվում նաև՝ գրավատուի լսված լինելու իրավունքն ապահովելու պարտավորություն, ինչպես նաև բռնագանձման ծանուցման բովանդակությանը որևէ գնահատական տալու պարտավորություն: Ըստ դիմողի՝ նորմի այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ եթե առկա է նոտարական կարգով կնքված պայմանագիր, ապա վարչական մարմինն այլևս հարուցված վարչական վարույթի շրջանակում չպետք է իրականացնի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չպետք է ապահովի անձի լսված լինելու իրավունքը, հակասում է Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված՝ պատշաճ վարչարարության սկզբունքին:

Դիմողը նշում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորումն ուղղակի միջամտություն է նախատեսում անձի սեփա-

կանության իրավունքին, չի ամրագրում պատշաճ վարչարարության իրականացման, գրավատուի լաված լինելու իրավունքի ապահովման և բռնագանձման ծանուցումն անձամբ ստացված լինելու հավաստիացման կարգ:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ պատասխանող), անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ օրենսդրի կողմից սահմանված չեն ծանուցման հատուկ վավերապայմաններ, նշում է, որ «(...) Օրենսգիրքը հստակ է բռնագանձման դատական և արտադատական կարգով իրականացման հարցում՝ նախատեսելով գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու համաձայնության բացակայության դեպքում միայն գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջների բավարարում դատարանի վճռով:

Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ որոշ դեպքերում բռնագանձման ծանուցումը իր բովանդակությամբ կարող է լինել ոչ որոշակի, դա չի կարող հանգեցնել ծանուցման վիճարկվող դրույթի հակասահմանադրականության, քանի որ դրույթն ինքնին հստակ է և կանխատեսելի՝ տալով նախնական համաձայնություն արտադատական կարգով գույքի նկատմամբ բռնագանձում տարածելուն, գրավատուն հստակորեն գիտակցել է, որ նույնիսկ բռնագանձման երկու ընթացակարգեր նախատեսելու պարագայում, բռնագանձման ծանուցումը վերաբերում է գույքը արտադատական կարգով բռնագանձմանը, քանի որ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջների բավարարում դատարանի վճռով նախատեսվում է միայն գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավի պայմանագրով նախատեսված չլինելու դեպքում»:

Պատասխանողի պնդմամբ՝ գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու դեպքում անհրաժեշտ է, որ անձն իր համաձայնությունը հայտնի կա՛մ անմիջականորեն գրավի պայմանագրով, կա՛մ գրավի պայմանագրից առանձին՝ գրավոր համաձայնությամբ: Նման իրավակարգավորմամբ օրենսդիրն անձի կամքի հստակ արտահայտման երաշխիք է սահմանել. կամքի արտահայտումը պետք է իրականացվի բացառապես գրավոր, այն է՝ օբյեկտիվ նյութական կրիչի վրա: Հետևաբար՝ անձը նախապես համաձայնում է իր պարտավորությունները պատշաճ չկատարելու դեպքում հնարավոր իրավական հետևանքներին, և այս մասով այդ հետևանքները կանխատեսելի են վերջինիս համար:

Ըստ պատասխանողի՝ օրենսդրի կողմից գրավառուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության ամրագրումը նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը: Միևնույն ժամանակ օրենսդրի նպատակն է եղել կանխել

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 4(108)2022
 48

անբարեխիղճ գրավատուի կողմից իր իրավունքների հնարավոր չարաշահումները, նվազեցնել գրավառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկերը, պահպանել գրավառուի պահանջի բավարարման ապահովումը, ինչպես նաև խուսափել այն բոլոր հնարավոր իրավիճակներից, երբ գրավառուի հանդեպ ունեցած գրավատուի պարտավորության կատարումը կարող է դառնալ անհնարին:

4. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

արդյո՞ք Օրենսգրքի և Օրենքի վիճարկվող դրույթներն ապահովում են Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության և Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ինչպես նաև արդյո՞ք Օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է սեփականության իրավունքը: Ընդ որում՝ նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավագործությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը, ինչպես նաև ժառանգելու իրավունքը: Միաժամանակ Սահմանադրությունը նախատեսում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքների ապահովման հարցում հանրային

իշխանության պոզիտիվ պարտականությանը, 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշմամբ արձանագրել է, որ այն ներառում է հետևյալը.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը:

Ավելին, Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-92, ՍԴՈ-630, ՍԴՈ-649, ՍԴՈ-650, ՍԴՈ-667, ՍԴՈ-669, ՍԴՈ-735, ՍԴՈ-815, ՍԴՈ-901, ՍԴՈ-903, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1189, ՍԴՈ-1203, ՍԴՈ-1210 և այլն) անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին, կարևորել է այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ անձն իր սեփականության իրավունքն իրականացնելիս կարող է պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով գրավադրել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով: Նկատի ունենալով, որ սույն գործով վիճարկվող դրույթները փոխկապակցված են Օրենսգրքի՝ գրավի և, մասնավորապես՝ գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու իրավահարաբերությունները կարգավորող դրույթների հետ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում դրա սահմանադրականությունը գնահատել Օրենսգրքի վերաբերելի կարգավորումների համատեքստում:

Նշված իրավահարաբերություններում գույքի սեփականատիրոջ կամքի և համաձայնության արտահայտման վերաբերյալ Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 19-ի ՍԴՈ-1294 որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«(...) նախ՝ կնքելով գրավի պայմանագիրը՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հնարավոր դադարման վերաբերյալ,

Երկրորդ՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում արտադատական կարգով գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորության վերաբերյալ: Ընդ որում, համաձայն [O]րենսգրքի 249-րդ հոդվածի՝ նման համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ գրավատուի և գրավառուի միջև կնքված առանձին համաձայնությամբ,

Երրորդ՝ գրավադրված գույքի վրա գրավառուի կողմից արտադատական կարգով բռնագանձում տարածելուց առաջ գրավատուն հնարավորություն ունի կա՛մ միջոցներ ձեռնարկել գրավով ապահովված պարտավորությունը կատարելու համար և դրանով կանխել գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորուստը, կա՛մ դատական կարգով վիճարկել արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը»:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1294 որոշմամբ նաև փաստել է, որ վերոհիշյալ երեք հնարավոր իրավիճակներից առաջին երկուսում (որոնք կարող են համընկնել գրավի պայմանագրում արտադատական կարգով բռնագանձման պայման նախատեսվելու դեպքում) գրավադրվող գույքի սեփականատիրոջ կամարտահայտությունը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, և այդպիսի ակտիվ գործողությունների կատարումը պարտադիր պայման է: Երրորդում սեփականատիրոջ կամքը կարող է արտահայտվել պասիվ գործողությամբ, երբ տեղեկանալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին՝ նա չի ձեռնարկում արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելուն ուղղված՝ օրենքով սահմանված որևէ գործողություն: Վերջինիս դեպքում Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն սեփականատիրոջ իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության իրավակարգավորումները:

Սույն գործով դիմողի կողմից վիճարկվում է, ի թիվս այլնի, Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը, որը նախատեսում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգին վերաբերող իրավակարգավորումներ: Նշված դրույթով սահմանված՝ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման վերաբերյալ գրավառուի կողմից գրավատուի ծանուցման իրավահարաբերություններն ունեն մասնավոր բնույթ: Գրավատուի սեփականության և

դատական պաշտպանության հիմնական իրավունքների պարտավորեցնող ներգործությունն անմիջականորեն չի տարածվում գրավառուի վրա, քանի որ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ թե՛ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման վերաբերյալ գրավառուի կողմից գրավատուի ծանուցման հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավանորմերը, թե՛ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրվող մեկնաբանությունները պետք է հաշվի առնեն գրավատուի հիմնական իրավունքները: Այլ կերպ՝ գրավատուի հիմնական իրավունքների պաշտպանությունը պետք է ապահովված լինի նաև քաղաքացիական իրավունքի նորմերի միջոցով, այդ թվում՝ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի նորմատիվ կարգավորման շրջանակում:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1294 որոշմամբ առանձնացրել է գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիքները, որոնք հետևյալն են.

«1) գրավատուի պատշաճ ծանուցումը գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում),

2) արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը,

3) գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելը գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո,

4) գրավառուի կողմից գրավի առարկայի իրացումը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով»:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին գրավատուի ծանուցման հարցին՝ Սահմանադրական դատարանը 2022 թվականի նոյեմբերի 1-ի ՍԴՈ-1667 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին գրավատուի ծանուցման վերաբերյալ իրավակարգավորումները չպետք է կրեն ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն գրավատուի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի ապահովմանը և պաշտպանությանը: Այսինքն՝ նշված ծանուցմանը վերաբերող կարգավորումները և դրանց կիրառումը պետք է ապահովեն գրավատուի կողմից իրեն հասանելի իրավական միջոցների գործադրման, մասնավորապես՝ գրավով ապահովված պարտավորությունը կատարելու, ինչպես նաև արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավոր-

րությոն: Վերոգրյալ նպատակն իրագործելու համար օրենսդրությամբ պետք է նախատեսված լինեն գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի վերաբերյալ այնպիսի կարգավորումներ, որոնք կբացառեն ծանուցման թերի/ոչ պատշաճ կառուցակարգի հետևանքով գրավատուի՝ բռնագանձման գործընթացի մասին իրազեկված չլինելու հնարավորությունը՝ վերջինիս համար ապահովելով օրենքով սահմանված կարգով իր սեփականության իրավունքի պաշտպանությունը գործնականում իրականացնելու պայմաններ:

Միաժամանակ, գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին գրավատուի ծանուցման հարցի համատեքստում սեփականության իրավունքի պաշտպանությունը սերտորեն կապված է դատական պաշտպանության իրավունքի հետ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Դատական պաշտպանության իրավունքը սահմանադրական հիմնական այն իրավունքներից է, որի իրականացմամբ ապահովվում է նաև մի շարք այլ իրավունքների պատշաճ իրականացումը, դրանց պաշտպանությունը: Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բովանդակության բացահայտմանն ուղղված մի շարք իրավական դիրքորոշումներ:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրել է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք: Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակ արձանագրել է դատական պաշտպանության իրավունքի՝ անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը, ինչպես նաև այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք լինելը: Միաժամանակ, Սահմանադրական

դատարանն արձանագրել է մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ երաշխիքներ ստեղծելու պետության պարտականությունը:

2020 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1559 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ կենսագործումն ապահովելու համար պետք է օրենսդրորեն երաշխավորել ինչպես դատարանի մատչելիության, դատարան դիմելու հնարավորության ապահովման, այնպես էլ՝ գործն անկախ և անաչառ դատարանի կողմից արդարության պահանջների՝ մրցակցության և հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու իրավական հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը 2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշման մեջ նշել է, որ անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից ընդհանրապես առաջնահերթ կարևոր է, թե որքանով է մատչելի (հասանելի) արդարադատությունը, ինչպիսի՞ իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար, նաև դրանով պայմանավորված՝ դատավարական (քրեական, քաղաքացիական և վարչական) կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար: Առանց անձի՝ դատարան դիմելու կամահայտ դրսևորման, դատական պաշտպանության իրավունքի իրացումը և ընդհանրապես արդարադատության իրականացումն իրավաբանորեն անիրագործելի են: Դատարան դիմելու իրավունքի իրացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Չնայած այդ իրավունքն անմիջականորեն նախատեսված չէ Սահմանադրությամբ, այնուհանդերձ, բխում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից: Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար:

Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումը երաշխավորելու տեսանկյունից Սահմանադրական դատարանը, առաջին հերթին, կարևորել է արդարադատության մատչելիության (հասանելիության) գնահատումը, ինչպես նաև դատարան դիմելու իրավունքն իրականացնելու համար առաջադրված իրավական պայմանների բնույթը: Ավելին՝ Սահմանադրական դատարանն անձի՝ դատարան դիմելու իրավունքի իրականացման երաշխավորումը դիտարկել է որպես սահմանադրական իրավունքների և ազատությունների դատական կարգով պաշտպանության առաջնահերթ նախապայման:

Անդրադառնալով գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիքներին՝ Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 19-ի ՍԴՈ-1294 որոշմամբ, որպես գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիք, առաջնահերթ կարևորել է գրավատուի պատշաճ ծանուցման ապահովումը, այնուհետև՝ դրա հիման վրա գրավատուի կողմից արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն այս համատեքստում կարևորել է օրենքով սահմանված՝ գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց միայն երկու ամիս հետո գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու պահանջի պահպանումը, որը ևս գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիք է: Այս իրավական երաշխիքներն են, որ խնդրո առարկա իրավահարաբերություններում համակարգային առումով ուղղված են անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացման ապահովմանը:

Սահմանադրական դատարանը մեկ այլ՝ 2022 թվականի նոյեմբերի 1-ի ՍԴՈ-1667 որոշմամբ արձանագրել է, որ «Օրենսգրքի [249-րդ և 252-րդ] հոդվածների բովանդակությունից ակնհայտ է, որ օրենսդիրը դրանցով ամրագրված իրավակարգավորումների հիմքում դրել է գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման պատշաճ իրավական երաշխիքներ նախատեսելու նպատակը՝ այդ տեսանկյունից առաջնահերթ կարևորելով գրավատուի պատշաճ ծանուցման, ինչպես նաև դրա հիման վրա՝ գրավատուի՝ բռնագանձման օրինականությունը *դատական կարգով վիճարկելու* և բռնագանձումը դադարեցնելու իրավական հնարավորության ապահովումը:

Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է հստակ երկամսյա ժամկետ՝ գրավատուի կողմից իր իրավունքների պաշտպանությանն ուղղված վերոնշյալ իրավական երաշխիքների իրացումը, գործնականում դրանց կենսագործուն ապահովելու նպատակով, որը ևս գրավատուի հիմնական իրավունքների պաշտպանության կարևոր իրավական երաշխիք է: Այս իրավական երաշխիքները նաև ուղղված են անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ *դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը*, ուստի դրանց պատշաճ իրացման ապահովումն ունի հիմնաքարային նշանակություն»:

Վերահաստատելով իր նախորդ որոշումներով արտահայտած վերը նշված դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սույն սահմանադրաիրավական վեճի լուծման տեսանկյունից:

5.2. Օրենսգրքի վիճարկվող դրույթի և դրա հետ փոխկապակցված՝ Օրենսգրքի վերաբերելի այլ դրույթների համալիր վերլուծությունից հետևում է, որ՝

1) գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում (Օրենսգրքի 248-րդ հոդված)։

2) գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին (Օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մաս)։

3) գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն պետք է գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցի գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում), իսկ այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է գրանցման (այդ թվում՝ պետական գրանցման), գրավառուն մինչև գրավի բռնագանձման գործընթացն սկսելը, ինչպես նաև գրավի բռնագանձման գործընթացը դադարեցնելու կամ ավարտվելու դեպքում պարտավոր է այդ մասին պատշաճ ձևով ծանուցել նաև գրանցում իրականացնող մարմնին (Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մաս)։

4) բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել։ Նշված երկամսյա ժամկետի պահպանման պահանջը չի գործում, եթե պարտապանը և գրավատուն (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) բռնագանձման ծանուցումն ստանալուց հետո սահմանված կարգով գրավոր համաձայնություն են տվել գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ (Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մաս)։

5) գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով, եթե նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ չի սահմանվել (Օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մաս)։

6) գրավ դրված գույքի՝ օրենքով սահմանված կարգով իրացման (վաճառքի) ընթացքում, եթե աճուրդը չկայացած է համարվել աճուրդի ընթացքում որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով, գրավառուն յոթ օրվա ընթացքում իրավունք ունի պահանջել գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերը (Օրենսգրքի 250-րդ հոդվածի 2-րդ մաս)։

Փաստորեն, Օրենսգիրքն ուղղակի նշում է պարունակում գրավ դրված գույքի արտադատական կարգով բռնագանձման և իրացման երեք եղանակի մասին՝ 1) գույքի իրացում (վաճառք) հրապարակային սակարկություններով, 2) գրավ դրված գույքն ուղղակի վաճառքի միջոցով երրորդ անձին ի սեփականություն հանձնում, 3) գրավ դրված գույքը գրավառուին ի սեփականություն հանձնում։ Ընդ որում, անկախ գրավ դրված գույքի արտադատական կարգով բռնագանձման և իրացման եղանակից՝ գրավառուն պարտավոր է պատշաճ ձևով ծանուցել գրավատուին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին։ Այսինքն՝ արտադատական կարգով բռնագանձման վերաբերյալ գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու պահանջի պահպանումը պայմանավորում է դրան հաջորդող և դրա հետ փոխկապակցված մյուս ընթացակարգերի իրավաչափությունը թե՛ գույքը հրապարակային սակարկություններով իրացնելու (վաճառելու), թե՛ գրավ դրված գույքն ուղղակի վաճառքի միջոցով երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, և թե՛ գրավ դրված գույքը գրավառուին ի սեփականություն հանձնելու դեպքում։

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, գրավառուի համար սահմանելով գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավի համաձայնությամբ նախատեսված լինելու դեպքում գրավադրված գույքն արտադատական կարգով բռնագանձելու հնարավորություն, միաժամանակ նախատեսել է բռնագանձման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության՝ գրավատուին հասանելիության որոշակի երաշխիքներ՝ ելնելով անձի սեփականության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման հնարավորություն ապահովելու անհրաժեշտությունից։

Սահմանադրական դատարանը գրավատուի՝ գրավադրված գույքն արտադատական կարգով բռնագանձելու գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և դրանով պայմանավորված՝ նշված գործընթացի դեմ իր իրավունքների իրավական պաշտպանության մեխանիզմներից օգտվելու համար երաշխիք է համարում Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված կարգավորումը, որով օրենսդիրը հստակորեն ամրագրել է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցելու գրավառուի պարտականությունը: Նշված իրավակարգավորումից ուղղակիորեն բխում է, որ գրավատուին հասցեագրված բռնագանձման ծանուցումը պետք է լինի բավականաչափ որոշակի, արտահայտի գրավառուի հստակ կամահայտնությունը՝ գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ, չունենա վերացական ձևակերպում, կառուցված չլինի ենթադրությունների հիման վրա: Նշված եզրահանգման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ բռնագանձման ծանուցումն այն փաստաթուղթն է, որն ստանալով՝ անձը հնարավորություն է ունենում գործնականում իրացնելու իր իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ օրենսդրությամբ նախատեսված իրավական երաշխիքները:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացում սեփականության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման համար գրավատուն պետք է տիրապետի նախատեսվող բռնագանձման գործընթացի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը, քանի որ միայն այդ դեպքում գրավատուն կարող է արդյունավետորեն գործադրել իր հիմնական իրավունքների ապահովմանը և պաշտպանությանն ուղղված՝ օրենսդրությամբ նախատեսված մեխանիզմները: Հետևաբար՝ բռնագանձման ծանուցումը պետք է ունենա այնպիսի բովանդակություն, որը գրավատուի մոտ կձևավորի համոզմունք, որ բռնագանձման ծանուցումն ստանալուն հաջորդող ժամանակահատվածում իր պասիվ վարքագծի, այն է՝ գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման իրավական երաշխիքներից չօգտվելու անխուսափելի հետևանքը լինելու է գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձումը: Հակառակ պարագայում, եթե բռնագանձման ծանուցումն ստանալով՝ գրավատուն չկարողանա հստակ պատկերացում կազմել իր անգործության հետևանքների մասին (օրինակ, արդյո՞ք գրավառուն հաստատակամ է գրավադրված գույքը բռնագանձելու հարցում, արդյո՞ք բռնագանձումն իրականացվելու է դատակա՞ն, թե՞ արտադատական կարգով և այլն), ապա այդ ծանուցումը չի ստեղծի անհրաժեշտ պայմաններ

գրավատուի իրավունքների ապահովման իրավական երաշխիքների կենսագործման համար, ուստի՝ չի ծառայի իր նպատակին:

Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի 249-րդ հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը սահմանել է, թե որն է նշված հոդվածի իմաստով պատշաճ ծանուցումը: Նշված դրույթի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված պատշաճ ծանուցում կամ բռնագանձման մասին ծանուցումը գրավատուին կամ պարտապանին պատշաճ կարգով հանձնված է համարվում, եթե ծանուցումը կատարվել է Օրենսգրքի 20.1 գլխով սահմանված կարգով: Իսկ նշված գլխում ներառված 330.1-ին հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ օրենքով կամ պայմանագրով կամ կանոնադրությամբ կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի թողարկման ազդագրով ծանուցման համար նախատեսված պարտադիր ընթացակարգեր ու պայմաններ նախատեսված չլինելու դեպքում ծանուցումը համարվում է պատշաճ, եթե կատարվել է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, առձեռն փոխանցմամբ, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով: Փաստորեն, օրենսդիրն Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված բռնագանձման ծանուցմանը ներկայացրել է թե՛ բովանդակային, թե՛ ծանուցման կարգին վերաբերող պահանջներ, որոնք չպահպանելը հանգեցնում է բռնագանձման ծանուցման բացակայության՝ դրանով իսկ բացառելով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձումը, իսկ նման պայմաններում կատարված արտադատական կարգով բռնագանձման գործընթացը չի կարող լինել օրինական:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից Օրենսգրքում գրավատուի համար նախատեսվել են գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և դրանով պայմանավորված՝ սեփականության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովող անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ վիճարկվող դրույթով օրենսդիրը չի բացահայտել, թե ինչ տեղեկատվություն պետք է պարունակի փաստաթուղթը, որպեսզի որակվի որպես առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին ծանուցում, Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ իր բազմաթիվ որոշումներում արդեն իսկ անդրադարձել է որոշակիության սկզբունքին՝ նշելով, մասնավորապես, հետևյալը.

- «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող

համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (18.04.2006թ. ՍԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՍԴՈ-753),

- « (...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՍԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015թ. ՍԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (03.05.2016թ. ՍԴՈ-1270),

- «(...) իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (03.05.2016թ. ՍԴՈ-1270):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (**case of Busuioac v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004**) վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները:

Մեկ այլ գործով կայացրած վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ չնայած սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց. իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է (**case of the Sunday Times v. the United Kingdom, application no. 6538/74, 26/04/1979**):

Օրենսգրքի վիճարկվող դրույթը, ինչպես նշվեց, սահմանում է, որ գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Այդ դրույթում նշված բռնագանձման գործընթացի վերաբերյալ պատշաճ ծանուցումը, ի թիվս այլնի, ենթադրում է այնպիսի բովանդակությամբ փաստաթղթի առկայություն, որը կարտահայտի գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավառուի հստակ կամահայտնությունը: Հետևաբար՝ օրենսդիրն Օրենսգրքում բավարար հստակությամբ սահմանել է, թե ինչ է ենթադրում գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման վերաբերյալ գրավատուի ծանուցումը, ուստի՝ անձը ողջամիտ սահմաններում ի վիճակի է կանխատեսելու իր վարքագծի հետևանքները և հնարավորություն ունի իր վարքագիծը ներդաշնակեցնել սահմանված պահանջներին: Միաժամանակ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ համապատասխան փաստաթուղթն Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված բռնագանձման ծանուցում համարելու հարցի պարզումը, ելնելով տվյալ գործի փաստական հանգամանքներից, իրավակիրառ պրակտիկայի, մասնավորապես՝ եռաստիճան դատական համակարգի իրավասության տիրույթում է, և քննարկվող իրավակարգավորման կապակցությամբ միասնական պրակտիկայի ձևավորումը կնպաստի իրավական կանխատեսելիության բարձրացմանը:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը որոշակիության առումով սահմանադրականության խնդիր չի հարուցում և միաժամանակ ապահովում է գրավատուի սեփականության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգ:

5.3. Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո քննարկման առարկա դարձնելով Օրենքի վիճարկվող դրույթի (հաշվի առնելով դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը)՝ Սահմանադրության 60-րդ և 61-րդ հոդվածներին՝ համակցված Սահմանադրության 75-րդ հոդվածի հետ, համապատասխանության հարցը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը, իսկ նույն օրենքի 4-րդ գլխով նախատեսված պետական գրանցման առանձնահատկությունների դեպքերում՝ նաև այդ գլխով սահմանված փաստաթղթերը:

Օրենքի՝ «Պետական գրանցման առանձնահատկությունները» վերնագիրը կրող 4-րդ գլխում ներառված 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար գրավառուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն նաև գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, իսկ եթե գրավառուն իրավաբանական անձ է, ապա նաև հիփոթեքի առարկան որպես սեփականություն գրավառուին հանձնելու մասին իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ օրենսդիրն Օրենքի 40-րդ հոդվածով սահմանել է գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթում սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից, բացի իրավահաստատող փաստաթղթերից, նաև այլ փաստաթղթերի, այդ թվում՝ գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենի և բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը

հաստատող փաստաթղթի ներկայացման պահանջ: Այսինքն՝ հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցումն իրականացվում է միայն գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու պահանջի կատարումն ապահովելու և դրա վերաբերյալ համապատասխան ապացույցներն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու պարագայում:

Նշված դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որի համաձայն՝ այդ դրույթով սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը և բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, չպետք է ներկայացվեն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին այն դեպքում, երբ գրավ դրված գույքը գրավառուին է հանձնվել գրավ դրված գույքի՝ արտադատական կարգով բռնագանձման շրջանակում կազմակերպված աճուրդը չկայացած համարվելու պայմաններում, և գրավառուն դիմել է հիփոթեքի առարկայի նկատմամբ իրեն անցնող սեփականության իրավունքի գրանցումը կատարելու համար:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը և բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու պահանջն ուղղված է գրավատուի սեփականության իրավունքի ապահովմանը և պաշտպանությանը, քանի որ այդ փաստաթղթերը հիմնավորում են բռնագանձման գործընթացի վերաբերյալ գրավատուի իրազեկված լինելը, ինչն էական նշանակություն ունի վերջինիս կողմից գրավով ապահովված պարտավորությունը կատարելու, ինչպես նաև արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունն իրացնելու տեսանկյունից: Միաժամանակ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին քննարկվող փաստաթղթերը ներկայացնելը հնարավորություն է տալիս բացառելու անշարժ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքի դադարումը՝ բռնագանձման գործընթացի վերաբերյալ վերջինիս ծանուցված չլինելու և օրենքով նրան վերապահված իրավունքներն իրականացնելու հնարավորություն չունենալու պայմաններում:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն Օրենսգրքի վերաբերելի իրավանորմերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման արդյունքում գրավի առարկա անշարժ գույքը գրավառուին ի սեփականություն կարող է

հանձնվել ինչպես անմիջապես՝ առանց գույքը որևէ այլ եղանակով իրացնելու փորձերի կատարման, այնպես էլ հրապարակային սակարկությունների կազմակերպումից հետո՝ այն դեպքում, երբ աճուրդը չկայացած է համարվել աճուրդի ընթացքում որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով, և գրավառուն պահանջում է գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերը:

Հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ գրավառուի սեփականության իրավունքի գրանցման վարույթում բռնազանձման ծանուցման և այդ ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթի նշանակությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասին պետք է տրվի այնպիսի մեկնաբանություն, որի համաձայն՝ այդ դրույթով սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ գրավատուին հանձնված բռնազանձման ծանուցման պատճենը և բռնազանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, պետք է ներկայացվեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին՝ անկախ այն հանգամանքից, թե գրավադրված անշարժ գույքի արտադատական կարգով բռնազանձման հատկապես ինչ ընթացակարգի արդյունքում է այդ գույքը գրավառուն ընդունում ի սեփականություն, և ինչ իրավահաստատող փաստաթղթեր են ներկայացվում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում իրականացնող մարմին:

Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի նման մեկնաբանությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարանի դիմելու բռնազանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթին գրավատուն որևէ կարգավիճակով չի ներգրավվում և այդ վարույթի ընթացքում իր դիրքորոշումը հայտնելու հնարավորություն չի ունենում:

Այսպես՝ Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, սահմանելով վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալու վարչական մարմնի պարտականությունը, նույն

հողվածի 2-րդ մասով սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում լուսմներ կարող են չանցկացվել, իսկ 3-րդ մասով՝ այն դեպքերը, երբ լուսմներ չեն անցկացվում: Միաժամանակ նույն հողվածի 4-րդ մասի համաձայն՝ լուսմներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Օրենքի 1-ին հողվածի 1-ին մասից հետևում է, որ այդ օրենքով սահմանվում են, ի թիվս այլնի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները: Օրենքի 8-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը, իսկ նույն օրենքի 4-րդ գլխով նախատեսված պետական գրանցման առանձնահատկությունների դեպքերում՝ նաև այդ գլխով սահմանված փաստաթղթերը: Օրենքի 24-րդ հողվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է իրավունքի պետական գրանցում հայցող իրավատիրոջ կողմից անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) ներկայացված դիմումը, իսկ Օրենքի 27-րդ հողվածի 1-ին մասը նախատեսում է, որ դիմումը մուտքագրվելուց հետո գրանցող մարմինն ուսումնասիրում է իրավունքի պետական գրանցման համար ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և նույն օրենքով նախատեսված պետական գրանցման վարույթի կասեցման, դադարեցման կամ պետական գրանցումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում կատարում է իրավունքի պետական գրանցում նույն օրենքի 13-րդ հողվածով նախատեսված տվյալները մատյանում գրառելու միջոցով: Միաժամանակ իրավունքի պետական գրանցման վերը նշված կարգից տարբերվող կարգավորումներ սահմանված չեն գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթի համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվում է բացառապես փաստաթղթերի հիման վրա, իսկ այդ վարույթի շրջանակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմինը միայն ուսումնասիրում է ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը, պարզում Օրենքով նախատեսված պետական գրանցման վարույթի կասեցման, դադարեցման կամ պետական գրանցումը մերժելու հիմքերի առկայությունը (բացակայությունը) և ընդունում համապատասխան որոշում: Այսինքն՝ քննարկվող վարչական վարույթը

դասվում է օրենքով նախատեսված այն վարույթների շարքին, որոնց շրջանակում լուսններ չեն անցկացվում:

Նման իրավակարգավորումների առկայությամբ առավել է ընդգծվում այն պահանջը, որ գրավադրված անշարժ գույքի արտադատական կարգով բռնագանձման արդյունքում գրավառուի սեփականության իրավունքի պետական գրանցումը հնարավոր է իրականացնել միայն այն դեպքում, երբ գրավառուի կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին են ներկայացվել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը և բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, քանի որ տվյալ գործընթացում օրենսդիրը սահմանել է գրավատուի իրավունքների պաշտպանության երաշխիքներ, որոնց իրացումը հնարավոր է միայն բռնագանձման գործընթացի վերաբերյալ վերջինիս ծանուցման դեպքում: Ընդ որում՝ գրավատուին հասցեագրված, գրավի առարկային կամ գրավով ապահովված պարտավորությանը վերաբերող ցանկացած գրություն (փաստաթուղթ) չի կարող համարվել քննարկվող դրույթի իմաստով բռնագանձման ծանուցում, այլ դրա բովանդակությունը պետք է ուղղակիորեն արտահայտի գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու գրավառուի կամքը, ինչը նշանակում է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմինն իրեն վերապահված լիազորություններն իրականացնելու շրջանակում պետք է յուրաքանչյուր դեպքում գնահատի, թե արդյոք կոնկրետ դեպքում ներկայացված փաստաթուղթը գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցում է՝ հաշվի առնելով դրա բովանդակությունը:

Օրենքի վիճարկվող նորմին իրավակիրառ պրակտիկայում տրվել է վերը նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն, որի արդյունքում քննարկվող վարույթի շրջանակում Օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը գրավառուի կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու անհրաժեշտությունը հերքվել է: Արդյունքում ստեղծվում է իրավիճակ, երբ կարող է դադարել գրավադրված անշարժ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այն պայմաններում, երբ վերջինս պատշաճ ձևով չի ծանուցվել բռնագանձման գործընթացի վերաբերյալ, ինչի հետևանքով զրկված է եղել այդ գործընթացի դեմ իրավական պաշտպանության մեխանիզմների գործադրման հնարավորությունից:

Սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշման մեջ նշել է. «[Սահմանադրության 75-րդ հոդվածի] տեսանկյունից կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սուսկ, այլև նման կարգի **արդյունավետությունը**, այսինքն՝ օրենքի

նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը»:

Մինչդեռ Օրենքի վիճարկվող նորմն իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ կիրառելու պայմաններում գրավատուի սեփականության և դատական պաշտպանության իրավունքների իրականացման կարգը չի կարող համարվել արդյունավետ, քանի որ արդյունքում գրավատուն կարող է զրկվել ինչպես գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու, այնպես էլ բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու իրավունքներն իրականացնելու հնարավորությունից: Հետևաբար՝ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում չեն ապահովվում անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ սեփականության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման համար:

5.4. Կիրառելով Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշումը սույն սահմանադրաիրավական վեճի նկատմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակում ՀՀ դատական դեպարտամենտից պահանջված և ստացված թիվ ՎԴ/7078/05/18 վարչական գործի ուսումնասիրությամբ պարզվում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ ըստ էության կիրառվել է այն մեկնաբանությամբ, որ այն դեպքում, երբ գրավ դրված անշարժ գույքի՝ արտադատական կարգով բռնագանձման շրջանակում կազմակերպված աճուրդը չկայացած համարվելու պայմաններում գրավ դրված գույքը հանձնվում է գրավառուին ի սեփականություն, վերջինիս անցնող սեփականության իրավունքի գրանցումը կատարելու համար անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին չպետք է ներկայացվեն գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, ինչպես նաև բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, և ավելին, վարչական մարմինը չունի բռնագանձման ծանուցման բովանդակությանը գնահատական տալու լիազորություն: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հաստատված համարելով այն փաստական հանգամանքը, որ գրավառուի գրությամբ գրավատուն տեղեկացվել է վարկային պարտավորությունների չկատարման հիմքով գրավադրված գույքի նկատմամբ դատական կարգով կամ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հնարավոր գործընթաց նախաձեռնելու մասին, միաժամանակ նշել է, որ տվյալ դեպքում Օրենքի 40-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները նոտարական կարգով վավերացված պայմանագրի ներկայացված լինելու պայմաններում չեն գործում, բացի դրանից, վարչական մարմնի համար գոյություն չունի որևէ օրենսդրական մեխանիզմ

բռնագանձման ծանուցման բովանդակությունը քննարկման առարկա դարձնելու և դրան գնահատական տալու համար:

Մինչդեռ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համաձայն՝ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասին չի կարող տրվել այնպիսի մեկնաբանություն, որով գրավ դրված անշարժ գույքի՝ արտահատական կարգով բռնագանձման շրջանակում կազմակերպված աճուրդը չկայացած համարվելու պայմաններում գրավ դրված գույքը գրավառուին ի սեփականություն հանձնվելու դեպքում վերջինիս անցնող սեփականության իրավունքի գրանցումը կատարելու համար անհրաժեշտ չէ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին, ի լրումն իրավահաստատող փաստաթղթերի, ներկայացնել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, ինչպես նաև բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը:

Հաշվի առնելով վիճարկվող դրույթին Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ նախատեսված դիրքորոշումների հիման վրա տրված վերը նշված մեկնաբանությունը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի գործով Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ գրավ դրված գույքի՝ արտահատական կարգով բռնագանձման արդյունքում գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին պետք է ներկայացվի նաև գրավադրված գույքի վրա արտահատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավառուի հստակ կամահայտնությունն արտահայտող բռնագանձման ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1668



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ԱԼԲԵՐՏ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ՝ ՄԻՆՉԵՎ 08.12.2011 Թ. ՀՕ-319-Ն ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՈՐԾԱԾ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

4(108)2022
◆ ՏԵՂԵԿՎՈՒՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
70

Քաղ. Երևան

22 նոյեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Ալբերտ Եդիգարյանի ներկայացուցիչներ Կ. Տոնոյանի, Ա. Դաշյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ալբերտ Եդիգարյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ

հողվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 6-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1995 թվականի նոյեմբերի 16-ին և ուժի մեջ է մտել 1995 թվականի նոյեմբերի 28-ից:

Օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածով սահմանված էր.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

(...)»:

Ընդունումից ի վեր Օրենքի 17-րդ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ (խմբ. 08.12.11 ՀՕ-319-Ն, լրաց. 07.05.15 ՀՕ-33-Ն, լրաց., փոփ. 08.12.21 ՀՕ-393-Ն):

Գործի քննության առիթը Ալբերտ Եղիզարյանի (այսուհետ՝ նաև դիմող)՝ Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ՍԴԱՈ-180 աշխատակարգային որոշմամբ «Ալբերտ Եղիզարյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված դատական ակտերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված այլ իրավանորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Ըստ դիմողի՝ սահմանադրաիրավական վեճի առարկա «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ մինչև 14 տարեկան երեխայի ծնողի կողմից ՀՀ քաղաքացիությունը կորցնելու դեպքում երեխան ևս կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե ձեռք

է բերում այլ պետության քաղաքացիություն: Դիմողի պնդմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին սահմանված չէր, որ երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը ՀՀ նախագահի հրամանագրի հիման վրա, ինչպես սահմանել է Վճռաբեկ դատարանը:

Դիմողը նշում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի պահանջն այն մասին, որ մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ է ՀՀ նախագահի հրամանագիր, սահմանվել է միայն 07.05.2015 թվականին ընդունված ՀՕ-33-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 13.06.2015 թվականից, ինչից բխում է, որ մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը դադարեցնելու համար ՀՀ նախագահի հրամանագիրն անհրաժեշտ էր միայն 13.06.2015 թվականից հետո ծագած իրավահարաբերություններում: Սակայն թիվ ՎԴ/2279/05/17 վարչական գործով ընդունված որոշմամբ Վճռաբեկ դատարանը վիճարկվող նորմին տվել է այնպիսի մեկնաբանություն, որի համաձայն՝ ՀՀ նախագահի հրամանագիրն անհրաժեշտ է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի ընդունման պահից սկսած: Միայն այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում կատարված լրացմամբ սահմանվել է, որ երեխան քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիությունը դադարեցնելու հետևանքով, այլ կերպ՝ ՀՀ նախագահի հրամանագրով, ըստ դիմողի, վկայում է, որ կա՛մ մինչև 07.05.2015 թ. ՀՕ-33-Ն օրենքի ընդունումը երեխայի կողմից քաղաքացիությունը կորցնելու համար անհրաժեշտ չէր ՀՀ նախագահի հրամանագիր, կա՛մ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 17-րդ հոդվածն ուներ իրավական որոշակիության խնդիր, և անհրաժեշտ էր այն հստակեցնել:

Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող դրույթը՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մասը, բավարար չափով որոշակի չէ, հնարավորություն չի տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին, քանզի հստակ չէ՝ արդյո՞ք մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը դադարեցնելու համար պարտադիր է, որ ծնողը դիմում ներկայացնի ՀՀ նախագահին, և ՀՀ նախագահն ընդունի հրամանագիր:

Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում հաղորդված բովանդակությունը հանգեցրել է իր անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտման, ինչպես նաև իր համար առաջացրել է ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնելու/Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու պարտականություն: Ըստ դիմողի՝ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին հակասահ-

մանադրական բովանդակություն հաղորդված չլինելու դեպքում վերը նշված պարտականությունը իր համար չէր առաջանա:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Օրենքի իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող) նշում է, որ անձի՝ այլ պետության քաղաքացիություն ընդունելը դեռևս չի հանգեցնում իր Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն, քանի որ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով:

Պատասխանողը նշում է, որ քաղաքացիության դադարեցման հիմքերից քաղաքացիությունը փոխելու դեպքում անձը ներկայացնում է համապատասխան դիմում, որը բավարարվում կամ մերժվում է: Այնուհետև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հարցը լուծում է ՀՀ նախագահը՝ իր հրամանագրի հիման վրա: Հետևաբար՝ անձը դադարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալ այն դեպքում, երբ վերջինիս քաղաքացիությունը դադարեցվել է օրենքով սահմանված կարգով, այն է՝ ՀՀ նախագահի հրամանագրի հիման վրա:

Պատասխանողը գտնում է, որ Օրենքի 17-րդ հոդվածի իրավակարգավորումներից ակնհայտ է, որ դրույթով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու ակտը տեղի է ունենում ՀՀ նախագահի՝ քաղաքացիության դադարեցման վերաբերյալ հրամանագրի առկայության պայմաններում, քանի որ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով:

Ելնելով վերոնշյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենքի վիճարկվող դրույթը բավարար չափով որոշակի է և համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով վարչական դատարան՝ Ալբերտ Եղիզարյանը պահանջել է ճանաչել իր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու իրավահարաբերության բացակայությունը: Վարչական դատարանի 13.06.2018 թ. վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ վարչական դատարանի 21.06.2019 թ. որոշմամբ Ա. Եղիզարյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է, վարչական դատարանի 13.06.2018 թ. վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Վճռաբեկ դատարանը, քննելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության վճռաբեկ բողոքը վերաքննիչ վարչական դատարանի 21.06.2019 թ. որոշման դեմ՝ ըստ հայցի Ա. Եղիզարյանի ընդդեմ ՀՀ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿԱԳԻՐ ◆ 4(108)2022

ուստիկանության անձնագրային և վիզաների վարչության՝ իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին, 03.03.2022 թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է՝ բեկանել է վերաքննիչ վարչական դատարանի 21.06.2019 թ. որոշումը և օրինական ուժ տվել վարչական դատարանի 13.06.2018 թ. վճռին:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյոք Օրենքի վիճարկվող դրույթն ունի՞ ինքնավար բովանդակություն, թե՞ պետք է դիտարկվի/գնահատվի Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) վերաբերելի կարգավորումների հետ փոխկապակցվածության համատեքստում՝ հաշվի առնելով նաև Օրենքի վիճարկվող դրույթին՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործողության պայմաններում, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ քաղաքացիությունը փոխելու սահմանադրական իրավունքին և սահմանադրական իրավունքների սահմանափակում նախատեսող նորմերի որոշակիության սկզբունքին համահունչ լինելու առումներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխայի (եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության՝ ինքնաշխատ կամ ոչ ինքնաշխատ եղանակով դադար(եց)ման հարցի համատեքստում:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը, հաշվի առնելով նաև վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, գնահատել, մասնավորապես, Սահմանադրության 47 և 79-րդ հոդվածներին համապատասխանության առումով:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի, հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում ընդհանուր գծերով անդրադառնալ քաղաքացիության իրավունքի և վերջինիս բաղադրատարր՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը:

Սահմանադրության 47-րդ հոդվածով ամրագրված Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքն արտացոլում է անձի և պետության կայուն իրավական կապը: Քաղաքացիության ինստիտուտը պետության և

քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն, կանխորոշում պետության և անհատի փոխհարաբերությունների բովանդակությունը: Այլ կերպ՝ սահմանադրաիրավական մակարդակում անձի իրավունքների և պարտականությունների ծավալն ուղղակիորեն կախված է անձի և պետության միջև առկա կապի բնույթից: Քաղաքացիությունը ոչ միայն հիմնարար իրավունք է, այլև անհրաժեշտ նախապայման անհատի մի շարք այլ իրավունքների իրացման համար: Ձեռք բերելով պետության քաղաքացիություն՝ անձը պարտավորվում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որը համահունչ կլինի տվյալ պետության Սահմանադրությանը և օրենքներին, իսկ պետությունը սահմանադրաիրավական պարտավորություն է կրում իր հովանավորության և պաշտպանության ներքո պահել իր քաղաքացիներին:

Սահմանադրության 47-րդ հոդվածով ամրագրված կարգավորումների բովանդակային վերլուծությունից բխում է, որ քաղաքացիության իրավունքը բաղկացած է մի քանի բաղադրատարրերից՝

ա) յուրաքանչյուրի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը,

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը,

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացուն քաղաքացիությունից զրկելու արգելքը:

Սահմանադրության 47-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված է, որ **Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից** (համանման դրույթ արտացոլված էր նաև 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 30.1-ին հոդվածի 2-րդ մասում): Քաղաքացիությունը փոխելու իրավունքը քաղաքացիության հիմնարար իրավունքի բաղադրիչն ու անքակտելի մասն է: Անձն է որոշում, թե որ պետության իրավագործության և պաշտպանության ներքո է ցանկանում լինել: Պետության հետ կայուն իրավական կապը, որը հատուկ է քաղաքացիությանը, չի կարող դրսևորվել որևէ պետության իրավագործության ներքո անձին հարկադրաբար պահելու միջոցով: Միաժամանակ, քաղաքացիությունը փոխելու իրավունքը բացարձակ չէ, և հաշվի առնելով քաղաքացիության իրավունքին բնորոշ հատկանիշները, մասնավորապես՝ երկկողմանի փոխադարձ իրավունքների և պարտականությունների առկայությունը՝ պետությունն իր հերթին պետք է արտահայտի իր կամքն անձի քաղաքացիությունը փոխելու առնչությամբ. ընդ որում՝ Սահմանադրությամբ հստակ ամրագրված են քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակման նպատակները: Անձի քաղաքացիությունը փոխելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝

ա) պետական անվտանգության,

բ) հանցագործությունների կանխման կամ բացահայտման,

գ) այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը անդրադարձ է կատարված Սահմանադրական դատարանի 2011 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-945 որոշման մեջ, որում նշված է. «Բացահայտելով ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը ներառում է նաև այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու մտադրությամբ և այլ պետության քաղաքացիության ձեռքբերման երաշխիքների առկայությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը, որը ենթակա է իրացման քաղաքացիությունը փոխելու վերաբերյալ առկա իրավակարգավորումներին համապատասխան»:

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 23-րդ հոդվածով սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հիմքերը: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից զրկվելու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

4) Օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն: Օրենքի (գործող խմբագրությամբ) 24-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար նախատեսված է այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու կամ ունենալու հանգամանքը: Անձը, որը ցանկանում է դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և չունի այլ պետության քաղաքացիություն, պետք է օտարերկրյա պետության իրավասու մարմնի տված՝ տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին գրավոր հավաստում (տեղեկանք) ունենա, որի հիման վրա էլ կդադարեցվի նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը (1-ին, 3-րդ մասեր):

Այսպիսով, քաղաքացիությունը փոխելը քաղաքացիությունը դադարեցնելու հիմքերից մեկն է, որով անձի և պետության միջև իրավական կապը դադարում է՝ բնորոշ իրավունքներով և պարտականություններով հանդերձ, և

որի կենսագործման համար էական նշանակություն ունի անձի՝ այլ պետության քաղաքացիություն ունենալու կամ ձեռք բերելու հանգամանքը:

5.2. Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Սույն դրույթն արտացոլված է Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ)՝ «Երեխայի քաղաքացիությունը ծնողների քաղաքացիության փոփոխման կամ որդեգրման դեպքում» վերտառությամբ 3-րդ գլխում: Այդ առնչությամբ վիճարկվող օրինադրույթի վերլուծությունից հետևում է, որ *օրենսդիրը մինչև 14 տարեկան երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը պայմանավորել է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են նշված երեխայի ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը, ինչպես նաև այդ երեխայի՝ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը:*

Մինչև 14 տարեկան երեխայի՝ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու պահանջն ինքնանպատակ չէ. միտված է *երեխայի ապաքաղաքացիությունը բացառելուն:* Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապաքաղաքացիության ինստիտուտին և այդ համատեքստում՝ երեխաների ապաքաղաքացիության հարցին: Ապաքաղաքացիության դեպքում անձը զրկվում է քաղաքացուն վերապահված իրավունքներից և քաղաքացիության պետության կողմից քաղաքացուն տրամադրվող պաշտպանությունից:

Սահմանադրությունն արգելում է Հայաստանի Հանրապետությանն իր քաղաքացուն զրկել քաղաքացիությունից (47-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասություն): Նշված սահմանադրաիրավական կարգավորման նպատակը բխում է միջազգային կոնվենցիաներից և ուղղված է քաղաքացիություն չունեցող անձանց թիվը կրճատելուն: «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի կոնվենցիան այն հիմնական միջազգային փաստաթուղթն է, որն ուղղված է ապաքաղաքացիության կանխարգելմանը և նվազեցմանը: Այսպես՝ նշված կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ ցանկացած պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է իր տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ: Այդպիսի քաղաքացիություն շնորհվում է հիշյալ կոնվենցիայով նախատեսված դեպքերում:

Նշված կոնվենցիայի տրամաբանությունից բխում է, որ անձի քաղաքացիության կորստի համար կարևոր է, որ անձն ունենա կամ ձեռք բերի այլ պետության քաղաքացիություն: Պետության քաղաքացին, որը ցանկանում է ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն, չի կորցնում իր քաղա-

քացիությունը, քանի դեռ ձեռք չի բերել այլ պետության քաղաքացիություն կամ չի ստացել այդ պետության քաղաքացիության ձեռքբերման հավաստում:

Վերոնշյալի համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունեն երեխաների ապաքաղաքացիությանը վերաբերող իրավակարգավորումները: Այսպես՝ «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք: Նշված կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով՝ առանց անօրինական միջամտության, հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր ինքնությունը՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե երեխան անօրինական կերպով գրկվում է իր ինքնության որոշ կամ բոլոր տարրերից, մասնակից պետությունները տրամադրում են համապատասխան աջակցություն և պաշտպանություն՝ շուտափույթ կերպով նրա ինքնությունը վերականգնելու նպատակով:

Քաղաքացիությունը երեխայի ինքնության կարևոր կողմն է և կարևորագույն իրավունք է՝ պայմանավորելով երեխայի կողմից այլ իրավունքներից ազատորեն օգտվելու հնարավորությունը: Միաժամանակ, երեխաներն իրենց իրավունքների և ազատությունների խախտումների առնչությամբ ամենախոցելի խումբն են և խիստ սահմանափակ հնարավորություն ունեն ինքնուրույն պաշտպանելու դրանք: «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայում արտացոլված երեխայի լավագույն շահի սկզբունքի ուժով ցանկացած մարմին ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտում պարտավոր է գնահատել և հաշվի առնել երեխայի լավագույն շահը՝ որպես առաջնային նկատառում երեխայի քաղաքացիությանը վերաբերող բոլոր գործողություններում կամ որոշումներում, ինչը բազմիցս շեշտվել է նաև կոնվենցիայով նախատեսված՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ քաղաքացիությանն առնչվող զեկույցներում: Այս սկզբունքի իրացման նպատակով անհրաժեշտ է բավարար երաշխիքներ սահմանել նորմատիվ իրավական ակտերում, հատկապես երեխաների ապաքաղաքացիության վտանգը չեզոքացնելու նպատակով:

«Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի կոնվենցիայի բոլոր պայմանավորվող պետությունները «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայի կողմ են, որի համաձայն՝ պայմանավորվող պետությունները պարտավոր են ապահովել, որ երեխայի քաղաքացիության հետ կապված ձեռնարկվող բոլոր գործողությունները բխեն երեխայի լավագույն շահից: «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի կոնվենցիայով առանձնահատուկ կարգավորում է նախատեսված երեխաների

վերաբերյալ՝ նպատակ ունենալով հնարավորինս կրճատել ապաքաղաքացիությունը նաև երեխաների շրջանակում: Մասնավորապես՝ ուշադրության է արժանի հիշյալ կոնվենցիայի 1-ին հոդվածի 3-րդ կետը, որի համաձայն՝ «(...) որևէ Պայմանավորվող պետության տարածքում ամուսնությունից ծնված երեխան, որի մայրն ունի այդ պետության քաղաքացիությունը, ծնվելիս ձեռք է բերում այդ քաղաքացիությունը, այլապես նա կդառնա քաղաքացիություն չունեցող անձ»: Երեխաների շրջանում ապաքաղաքացիության բացառմանն են ուղղված նաև հիշյալ կոնվենցիայի 2-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 2-րդ կետը և 6-րդ հոդվածը:

Երեխաների շրջանում ապաքաղաքացիության դեպքերի բացառմանն են ուղղված նաև Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը: Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Սահմանադրական այս կարգավորումը, հիմնված լինելով քաղաքացիության ձեռքբերման արյան սկզբունքի վրա, նպատակ է հետապնդում երաշխավորելու երեխայի քաղաքացիությունը՝ Սահմանադրության ուժով այդ հանգամանքը կապակցելով ծնողների քաղաքացիության հետ: Երեխաների ապաքաղաքացիության կարգավիճակում չհայտնվելուն է ուղղված նաև Սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Հաշվի առնելով սահմանադրական և միջազգային-իրավական վերաբերելի կարգավորումները՝ Օրենքով ևս նախատեսվել են մի շարք հատուկ կարգավորումներ, որոնք նպատակ են հետապնդում բացառելու երեխաների շրջանում ապաքաղաքացիությունը: Այսպես՝ Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 9-րդ հոդվածն ամրագրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման հիմքերը, որտեղ, ի թիվս այլնի, նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը ծննդով: Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 11-րդ հոդվածի համաձայն՝ երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ (1-3-րդ մասեր): Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 12-րդ հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայի նախաբանում երեխան հռչակված է որպես ֆիզիկական և մտավոր անհասունության պատճառով հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության կարիք ունեցող առանձնահատուկ իրավասություններով, որի իրավունքները ունեն հատուկ պաշտպանության կարիք, որպիսի հանգամանքը հաշվի առնելով՝ օրենսդիրը երեխայի քաղաքացիությունը դադարեցնելու կանոնակարգումները սահմանել է որպես առանձնահատկություն՝ մարդասիրական նկատառումներով առաջնային համարելով երեխայի լավագույն շահի ապահովմանը չխոչընդոտելը:

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթը վերաբերում է *մինչև 14 տարեկան երեխայի*՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն: Ըստ այդմ՝ օրենսդիրն առանձնացրել է երեխաների համապատասխան տարիքային խումբ՝ մինչև 14 տարեկան: Միաժամանակ, ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը փոխվելու հարցի առնչությամբ սահմանվել է այն տարիքը՝ 14 տարեկանից բարձր, որը լրացած լինելու պայմաններում երեխան համարվում է բավարար ընկալում ունեցող (Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 22-րդ հոդվածին համապատասխան՝ նշված դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է երեխաների համաձայնության առկայության դեպքում):

5.3. Օրենսդիրը մինչև 14 տարեկան երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը պայմանավորել է նաև այնպիսի հանգամանքով, ինչպիսին է նշված *երեխայի ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը*: Այդ համատեքստում առաջ է գալիս երեխայի նկատմամբ վերջինիս ծնող(ներ)ի կողմից իր(ենց) քաղաքացիությունը կորցնելու հետևանքների տարածման հարցը: Այդ առնչությամբ տարբերակվում են քաղաքացիության ձեռքբերման կամ դադարեցման *ինքնաշխատ և ոչ ինքնաշխատ եղանակները*:

Միջազգային վերաբերելի փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխայի կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ երբեմն ծնողի քաղաքացիության փոխելն օրենքի ուժով ազդում է նաև երեխայի քաղաքացիության վրա: Այս հանգամանքը հիմնավորվում է այն փաստարկով, որ երեխան իրական կապ չի կարող ստեղծել/ունենալ այն պետության հետ, որի քաղաքացիությունն իր ծնողն արդեն կորցրել է: Ինքնաշխատ եղանակների պարագայում քաղաքացիության (կարգավիճակի) փոփոխումը տեղի է ունենում *օրենքի ուժով (ex lege)*: Նման դեպքերում քաղաքացիությունը ձեռք է բերվում կամ դադարում, երբ բավարարվում են օրենքով սահմանված չափանիշները, օրինակ, քաղաքացիության ձեռք-

բերումը երեխայի՝ տվյալ պետության տարածքում ծնվելու արդյունքում: Ոչ ինքնաշխատ (ավտոմատ) ռեժիմների դեպքում նախքան քաղաքացիության (կարգավիճակի) փոխելը պահանջվում են անձի կամ պետական մարմնի ակտիվ գործողություններ:

Վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը նաև վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է համարում անդրադառնալ Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) վերաբերելի այլ կարգավորումներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման հիմքերը սահմանված են Օրենքով, ինչն անմիջականորեն բխում է Սահմանադրության կարգավորումներից: Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերաբերյալ ընդհանուր դրույթ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում է Օրենքով: **Անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով:**

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 23-րդ հոդվածով սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հիմքերը:

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 26-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահն իր հրամանագրով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հարցերը, սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը: Այդ առնչությամբ Սահմանադրության՝ «Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը» վերտառությամբ 134-րդ հոդվածով ամրագրված է, որ **Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը** (ընդ որում՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 55-րդ հոդվածի 15-րդ կետով ամրագրված էր, որ Հանրապետության նախագահը օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ կապված հարցերը): Սահմանադրական հիշյալ կարգավորումներին համապատասխան՝ Հանրապետության նախագահն է այն միակ սուբյեկտը, որն իրավասու է, մասնավորապես, քաղաքացիություն շնորհել և քաղաքացիությունը դադարեցնել:

Այսպիսով, քաղաքացիության դադարեցման հիմքերից մեկը քաղաքացիությունը փոխելն է, որի համար սահմանված է ընդհանուր կարգ առ այն, որ ցանկացած անձ իրավունք ունի փոխել իր քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն, որի համար անհրաժեշտ են անձի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում: Այլ կերպ՝ անձը կարող է իրացնել իր քաղաքացիությունը փոխելու իրավունքը՝ հստակ արտահայտված կամահայտնության և օրենքով սահմանված ընթացակարգի հիման վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչը բխում է համապարասխան սահմանադրահիրավական կարգավորումներից:

Օրենքի վիճարկվող իրավակարգավորման բովանդակային վերլուծությունից բխում է, որ այն հատուկ կարգավորում է, քանզի վերաբերում է երեխայի քաղաքացիությանը՝ պայմանավորված ծնողների քաղաքացիությամբ: Նշված իրավակարգավորման առանձնահատկությունն այն է, որ նախատեսում է նյութաիրավական պայմաններ, որոնց առկայության դեպքում երեխան կարող է կորցնել քաղաքացիությունը, այսինքն՝ մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը դադարեցնելու առնչությամբ օրենսդիրը, հաշվի առնելով երեխայի տարիքը՝ գիտակցական մակարդակով պայմանավորված, նախատեսել է երկու հիմնական պայման՝ երեխայի ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստ և երեխայի՝ այլ պետության քաղաքացիության ձեռքբերում, ինչով պայմանավորված՝ վիճարկվող իրավակարգավորումը տարբերվում է չափահաս տարիքի հասած անձի քաղաքացիությունը դադարեցնելու պայմաններից (Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է միայն այլ պետության քաղաքացիության ձեռքբերումը):

Հատկանշական է, որ Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 17-րդ հոդվածն ընդգրկված է «Երեխայի քաղաքացիությունը ծնողների քաղաքացիության փոփոխման կամ որդեգրման դեպքում» վերտառությամբ 3-րդ գլխում, որով կարգավորվում են նաև ծնողների կամ ծնողներից մեկի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու, որդեգրման ժամանակ՝ երեխայի քաղաքացիության, ծնողների հայտնի չլինելու դեպքում՝ երեխայի քաղաքացիության, երեխայի նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն հաստատված լինելու դեպքում՝ երեխայի քաղաքացիության պահպանման հետ կապված հարաբերությունները:

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 19-րդ հոդվածն ամրագրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պահպանումը որդեգրման դեպքում, որի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: *Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումով:*

Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 21-րդ հոդվածով նախատեսվում է երեխայի քաղաքացիության պահպանումն այն դեպքում, երբ այդ երեխայի նկատմամբ հաստատված է խնամակալություն կամ հոգաբարձություն. Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխան, որի նկատմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից: *Նման դեպքում երեխան կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից ծնողների դիմումով, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի (2010 թվականի խմբագրությամբ) 3-րդ գլխով նախատեսված իրավակարգավորումները վերաբերում են երեխայի քաղաքացիությունը փոխելուն, կարելի է փաստել, որ մյուս բոլոր դեպքերում (երեխայի քաղաքացիության պահպանումը որդեգրման դեպքում, երեխայի քաղաքացիության պահպանումը խնամակալության կամ հոգաբարձության հաստատման դեպքում) *երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել միայն ծնողների/օրինական ներկայացուցիչների դիմումով:* Այսինքն՝ օրենսդիրը, առաջնորդվելով **երեխայի լավագույն շահով** առ այն, որ երեխան ինքնաբերաբար չկորցնի իր պետության քաղաքացիությունը և արդյունքում չդառնա քաղաքացիություն չունեցող անձ, անհրաժեշտ է համարում ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կամահայտնությունը՝ երեխայի քաղաքացիությունը փոխելու վերաբերյալ:

Սահմանադրության 37-րդ հոդվածն ամրագրում է երեխայի իրավունքները, որի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, **առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:**

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը գնահատելիս կարևորում է քաղաքացիության ինստիտուտի էությունն ու նշանակությունը հաշվի առնելու հանգամանքը, մասնավորապես՝ այն առումով, որ քաղաքացիությունը անձի (տվյալ դեպքում՝ երեխայի) և պետության միջև կայուն իրավական կապ է՝ իրեն բնորոշ փոխադարձ իրավունքներով և պարտականություններով, ուստի՝ այդ իրավական կապի դադարեցումը չի կարող միակողմանի լինել:

Սահմանադրական դատարանի 2011 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-945 որոշման մեջ նշված է. «Որպես կանոն, քաղաքացիությունը բնութագրվում է որպես անձի և պետության միջև առկա իրավական կայուն կապ, ինչն արտահայտվում է փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության համակցության մեջ: Քաղաքացիության ինստիտուտի նման բովանդակությունը ենթադրում է, որ քաղաքացի-պետություն հարաբերություններում, ուր նշված սուբյեկտները միմյանց նկատմամբ ունեն փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ, այդ հարաբերություններն ընդհատելու կապակցությամբ կողմերից որևէ մեկի միակողմանի կամարտահայտությունը դեռևս բավարար հիմք չէ անձի քաղաքացիության դադարման համար: Քաղաքացիության ինստիտուտի նշված բովանդակությունից է բխում նաև ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածով պետությանը հասցեագրված այն արգելքը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից: Նման արգելք նախատեսված է նաև միջազգային իրավական փաստաթղթերով» (Սահմանադրական դատարանի նշված որոշմամբ Օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելն ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն») և 13.1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը («Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա») (Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության համար միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի ճանաչվելու առնչությամբ) ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող):

Սահմանադրական դատարանը սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար կարևորում է խնդրո առարկա հարցին անդրադարձը՝ իրավական որոշակիության ապահովման առումով: Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված է որոշակիության սկզբունքը, որի համաձայն՝

հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին, մասնավորապես, նշելով՝

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշում),

- «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշությունը սույն գործի քննության շրջանակներում ենթակա է քննարկման ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավակարգավորման, ինչպես նաև իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում: Նման մոտեցումը պայմանավորված է Սահմանադրական դատարանի, մասնավորապես, ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1270 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումներով, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ» (2017 թվականի մարտի 14-ի ՍԴՈ-1357 որոշում),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝

նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (**The Sunday Times v. the United Kingdom** (Application no. 6538/74, 26/04/79, § 49):» (2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշում (սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը վերահաստատվել է Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452, 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշումներով),

- «(...) իրավական որոշակիության սկզբունքի ապահովման առումով ընդհանուր տրամաբանությունն հանգում է այն գաղափարին, որ թեև իրավական որոշակիությունն անհրաժեշտ է, այնուամենայնիվ, այդ սկզբունքը չի բացառում իրավական ակտերում այնպիսի ձևակերպումների կամ եզրույթների առկայությունը, որոնք գնահատողական բնույթ ունեն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավել հստակեցվում են իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում» (2021 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-1592 որոշում):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիությունը չպետք է բացարձականացնել, և անորոշության որոշակի տարրեր պարունակող իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, որպիսի պայմաններում անհրաժեշտ որոշակիության ծավալը լրացնելու ու իրավական կարգավորման կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառին:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/2279/05/17 վարչական գործով 03.03.2022 թ. որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու իրավասությունը վերապահված է ՀՀ նախագահին: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Նախագահին իր հրամանագրով է լուծում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու, խմբային ձեռքբերման և դադարեցման հարցերը, ինչպես նաև սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը: Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորուստը կարող է լինել բացառապես ՀՀ նախագահի կողմից քաղաքացիության դադարեցման վերաբերյալ

հրամանագրի արձակման դեպքում, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով կամ նույն օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի կարգավորմամբ մինչև 14 տարեկան երեխան քաղաքացիությունը կորցնում է հետևյալ պայմանների առկայության դեպքում՝ նրա ծնողները կորցրել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը (նրանց քաղաքացիությունը դադարեցվել է օրենքով սահմանված կարգով), երեխան ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն, ինչպես նաև երեխայի քաղաքացիությունը դադարեցվել է օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ նախագահի հրամանագրով»:

Սույն դիմումով վիճակվող օրինադրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության առնչությամբ, ի պատասխան սույն գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավորի գրության՝ ՀՀ ոստիկանության 07.10.2022 թ. թիվ 8-83265 գրության մեջ, մասնավորապես, նշված է. «(...) ՀՀ քաղաքացիության դադարեցման համար օրենքը սահմանում է ՀՀ նախագահի համապատասխան իրավական ակտի պարտադիր առկայության պահանջ, որը հնարավոր է բացառապես քաղաքացու և իրավասու պետական մարմնի կողմից որոշակի գործողություններ կատարելու միջոցով (դիմում ներկայացնելու, դրա հիման վրա իրականացված վարչարարության և արդյունքում ՀՀ նախագահի կողմից հրամանագրի արձակմամբ):

(...) Օրենքի ուժի մեջ մտնելու պահից ի վեր բոլոր երեխաների քաղաքացիությունը դադարեցվել է բացառապես ՀՀ Նախագահի հրամանագրով՝ օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

(...) երեխաների ՀՀ քաղաքացիությունը դադարեցվել է ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար օրենսդրությամբ սահմանված ընդհանուր հիմունքներով՝ որպես դիմում ներկայացնելու սուբյեկտ դիտարկելով երեխայի օրինական ներկայացուցչին»:

Ի պատասխան սույն գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավորի մեկ այլ գրության՝ ՀՀ ոստիկանության՝ 25.10.2022 թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությանը կից ներկայացվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործողության պայմաններում մինչև 14 տարեկան երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու գործից և նրա քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագրի պատճեններ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿԱԿԻՐ ◆ 4(108)2022

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 4(108)2022
88

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով վիճարկվող իրավակարգավորման առնչությամբ նյութաիրավական պայմանները հստակ ամրագրված են Օրենքի նորմում, իսկ մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը դադարեցնելու (փոխելու) ընթացակարգն իրավակիրառ պրակտիկայում բխեցվել է Օրենքի վիճարկվող իրավակարգավորման՝ վերաբերելի այլ իրավակարգավորումների հետ փոխկապակցվածության մեջ դիտարկելու/գնահատելու, համակարգային մեկնաբանության արդյունքում՝ հաշվի առնելով քաղաքացիության ինստիտուտի էությունն ու բովանդակությունը: Հետևաբար՝ Օրենքի վիճարկվող դրույթը սահմանադրականության առումով խնդրահարույց չէ: Նշյալի հաշվառմամբ Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասին՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործողության պայմաններում, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հանգել է նրան, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխայի (եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը չի դադարում ինքնաշխատ եղանակով, որպիսի մոտեցումը ևս Օրենքի վիճարկվող իրավակարգավորման՝ վերաբերելի այլ իրավակարգավորումների հետ համակարգային մեկնաբանության պայմաններում սահմանադրականության առումով խնդրահարույց չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

22 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1669



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԹԻՎ CAM 1016 01 ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ.
Հովհաննիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրա-
պետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2022
թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային
համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՒՐ
◆ 4(108)2022

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1783-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2022 թվականի նոյեմբերի 24-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին՝ բյուջետային աջակցությամբ ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորման նպատակով:

2. Ըստ դիմումին կից ներկայացված Ֆինանսների նախարարության հիմնավորման՝ բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը, հետևաբար՝ վարկային միջոցների ժամանակին ստացումը կարևոր նշանակություն ունի պետական բյուջեի կատեգորիաներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման տեսանկյունից:

Բյուջետային աջակցության միջոցների ստացման համար նախապայման է հանդիսանում երկկողմ փոխհամաձայնեցված քաղաքականության գործողությունների աղյուսակով սահմանված՝ մի շարք ոլորտներում միջոցառումների և բարեփոխումների իրականացումը: Նշվում է, որ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից Ծրագիրն իրականացվում է Ասիական զարգացման բանկի հետ համատեղ և, հետևաբար, բարեփոխումների շրջանակը ևս նույնական է վերջինիս հետ՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված 100 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ Համաձայնագրի քաղաքականության աղյուսակի հետ:

Ծրագրի շրջանակը, մասնավորապես, ներառում է.

- հարկաբյուջետային պլանավորման, թափանցիկության, ռիսկերի կառավարման, ինչպես նաև պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը,

- պետական ներդրումների, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության համակարգի բարեփոխումները,

- պետական գնումների համակարգի արդիականացումը,

- կանաչ տնտեսության քաղաքականության մշակումը, կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացումն ու կանաչ ֆինանսական գործիքների կիրառության ընդլայնումը,

- կառավարության պարտքի կառավարման համակարգի բարելավումը,

- ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացումը,

- կորպորատիվ թափանցիկության ընդլայնումը հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման իրավական շրջանակի վերանայմամբ:

3. 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ C20220628 որոշման համաձայն՝ Զարգացման ֆրանսիական գործակալությունը (ԶՖԳ կամ Վարկատու) համաձայնել է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հարյուր միլիոն եվրո (100.000.000 եվրո) առավելագույն ընդհանուր գումարի չափով Վարկային միջոցներ՝ Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

Համաձայնագրով վճարման ենթակա յուրաքանչյուր գումարի արժույթը եվրոն է՝ բացառությամբ 14.6-րդ կետով (Վճարման վայրը) նախատեսված դեպքերի:

4. Համաձայնագիրն ունի հավելվածներ և հավելվածների ներածական դրույթներ, որոնք կազմում են Համաձայնագրի մաս և ունեն նույն իրավաբանական ուժը, մասնավորապես՝ Հավելված 1Ա. «Սահմանումները», Հավելված 1Բ. «Մեկնաբանումը», Հավելված 2. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 3Ա. «Ֆինանսավորման պլանը», Հավելված 3Բ. «Քաղաքականության աղյուսակը», «Քաղաքականության մատրիցա», Հավելված 4. «Նախապայմանները», Հավելված 5Ա. «Մասհանման հայտի ձևը», Հավելված 5Բ. «Մասհանման և դրույքաչափի հաստատման ձևը», Հավելված 5Գ. «Դրույքաչափի փոխարկման հայտի ձևը», Հավելված 5Դ. «Դրույքաչափի փոխարկման հաստատման ձևը» և Հավելված 6. «Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության կայքում և վարկատուի կայքում»:

5. Վարկային միջոցների նպատակն է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության՝ Ծրագրի իրականացման համար նախատեսված բյուջեն, ինչպես նկարագրված է 2-րդ հավելվածում (Ծրագրի նկարագրությունը), 3Ա

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
◆ 4(108)2022

հավելվածում (*Ֆինանսավորման պլանը*) նկարագրված ֆինանսավորման պլանին և 3Բ հավելվածում (*Քաղաքականության աղյուսակը, Քաղաքականության մատրիցա*) նկարագրված պետական քաղաքականության աղյուսակին համապատասխան:

6. Վարկային միջոցները Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում են Վարկի տրամադրման ժամանակահատվածում՝ երկու (2) Մասհանմամբ, և առաջարկվող Մասհանման գումարը պետք է լինի առնվազն հիսուն միլիոն եվրո (50. 000.000 եվրո) կամ Վարկային սահմանաչափի մնացորդին հավասար գումար, եթե այդպիսի գումարը հիսուն միլիոն եվրոյից (50. 000.000 եվրո) պակաս է:

Մասհանումների միջոցները պետք է փոխանցվեն Հայաստանի կենտրոնական բանկում Հայաստանի Հանրապետության հաշվին, որի վերաբերյալ մանրամասները Հայաստանի Հանրապետության կողմից պետք է պատշաճ ծանուցվեն Վարկատուին՝ Մասհանման Հայտում:

7. Համաձայնագրի 5.1-ին կետով սահմանված է, որ եթե Շուկայի ապակայունացման դեպքն ազդում է եվրագոտու միջբանկային շուկայի վրա, և հնարավոր չէ ֆիքսված Տոկոսադրույքի դեպքում Մասհանման նկատմամբ կիրառելի ֆիքսված Տոկոսադրույքը որոշելը, կամ լողացող Տոկոսադրույքի դեպքում Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում կիրառելի EURIBOR-ը որոշելը, ապա Վարկատուն այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությանը, և նկարագրված իրավիճակի դեպքում համապատասխան Մասհանման կամ Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար, ըստ իրավիճակի, կիրառելի Տոկոսադրույքը կլինի՝ Թույլատրելի սահմանաչափի, և տարեկան տոկոսադրույքի գումարը, որը հավասար է Վարկատուի կողմից համապատասխան Մասհանումը (Մասհանումները) ֆինանսավորելու հետ կապված ծախսերին՝ անկախ այն աղբյուրից, որն այն կարող է ողջամտորեն ընտրել: Այդ դրույքաչափի մասին Հայաստանի Հանրապետությունը ծանուցվում է հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում՝ նախքան ֆիքսված Տոկոսադրույքի մասով այդ Մասհանման հետ կապված վճարման ենթակա տոկոսների առաջին Վճարման ամսաթիվը կամ լողացող Տոկոսադրույքի մասով Տոկոսների հաշվարկման տվյալ ժամանակահատվածում վճարման ենթակա տոկոսների Վճարման ամսաթիվը:

8. Համաձայնագրով սահմանված է, որ Համաձայնագրի 5.2-րդ կետի (*Հրապարակված դրույքաչափի փոխարինում*) դրույթները գերակայում են 5.1-ին կետի (*Շուկայի ապակայունացումը*) դրույթների նկատմամբ:

Համաձայնագրի 13.1-ին կետով սահմանված յուրաքանչյուր դեպք կամ հանգամանք համարվում է Պարտավորությունների չկատարման դեպք:

Պարտավորությունների չկատարման դեպք տեղի ունենալուց հետո և ցանկացած ժամանակ Վարկատուն կարող է, առանց որևէ պաշտոնական պահանջ ներկայացնելու կամ որևէ դատական կամ արտադատական վարույթ սկսելու, Հայաստանի Հանրապետությանը գրավոր ծանուցելու միջոցով՝ չեղարկել Վարկային սահմանաչափի մնացորդը և (կամ) հայտարարել, որ վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը ցանկացած հաշվեգրված կամ վճարման ենթակա տոկոսի հետ միասին, ինչպես նաև Համաձայնագրով վճարման ենթակա բոլոր մյուս գումարները ենթակա են անհապաղ վճարման:

9. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

9.1. ստորագրման ամսաթվից ոչ ուշ Վարկատուին տրամադրել Համաձայնագրի 4-րդ հավելվածի (Նախապայմանները) I մասով սահմանված բոլոր փաստաթղթերը,

9.2. յուրաքանչյուր Վճարման ամսաթվին վճարել Մասհանման (Մասհանումների) համար հաշվեգրված տոկոսագումարը,

9.3. վճարել Համաձայնագրի 4.3-րդ կետով (Ժամկետանց վճարման և պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը) սահմանված ցանկացած չմարված տոկոս Վարկատուի կողմից ներկայացված պահանջից անմիջապես հետո կամ չմարված գումարի վճարման ժամկետին հաջորդող յուրաքանչյուր Վճարման ամսաթվին,

9.4. ստորագրման ամսաթվից սկսած 6 ամիս հետո՝ Վարկատուին վճարել տարեկան զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) պարտավորության վճար, որը հաշվարկվում է Վարկային սահմանաչափի մնացորդի գումարի նկատմամբ, որը համամասնորեն գնահատվում է օրերի փաստացի քանակի համար և ավելացվում է Վարկատուի կողմից տրամադրվող Մասհանման գումարի չափով՝ ակնկալվող Մասհանման հայտի համաձայն,

9.5. արտոնյալ ժամկետը լրանալուց հետո, յուրաքանչյուր Վճարման ամսաթվին, երեսուն (30) կիսամյակային վճարումներով՝ սկսած 2028 թվականի մայիսի 15-ից մինչև 2042 թվականի նոյեմբերի 15-ը, Վարկատուին վճարել Վարկային միջոցների մայր գումարը,

9.6. մինչև Մասհանման ժամանակահատվածի ավարտը չկատարել կանխավճարի ձևով Վարկային միջոցների ամբողջական կամ դրա որևէ մասի վճարում, իսկ Մասհանման ժամանակահատվածի ավարտին հաջորդող օրվանից կանխավճարի ձևով Վարկային միջոցների ամբողջական կամ դրա

որևէ մասի վճարումը կատարել Համաձայնագրի 8.1-ին կետի 1-ին մասի «ա»-«զ» պարբերություններում սահմանված պայմանների պահպանմամբ,

9.7. կանխավճարի ձևով չվճարել կամ չչեղարկել Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց որևէ մաս՝ բացառությամբ Համաձայնագրով հստակորեն նախատեսված դեպքերի և կարգի,

9.8. եթե Համաձայնագրում փոփոխություն անելու անհրաժեշտություն է առաջանում, ապա Վարկատուին հատուցել բոլոր այն ծախսերը (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները), որոնք ողջամտորեն առաջացել են այդպիսի անհրաժեշտությանն արձագանքելու, այն գնահատելու, դրա շուրջ բանակցելու կամ համապատասխանելու համար. այս վճարներն ու ծախսերը կսահմանափակվեն մինչև տասնհինգ հազար եվրո (15.000 եվրո)՝ առանց Հայաստանի ԱԱՀ-ի,

9.9. Վարկատուին հատուցել բոլոր այն ծախսերն ու ծախքերը (ներառյալ՝ իրավա-բանական ծառայությունների համար վճարները), որոնք այն կրել է Համաձայնագրով նախատեսված իր ցանկացած իրավունքի իրականացման կամ պահպանման համար,

9.10. ուղղակիորեն վճարել կամ անհրաժեշտության դեպքում Վարկատուին հատուցել վերջինիս կողմից կատարված՝ կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի և ծախքերի (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները) գումարները, Համաձայնագրի և դրա ցանկացած հնարավոր փոփոխության հետ կապված բոլոր պետական տուրքերը, գրանցման և նմանատիպ այլ հարկերի ծախսերը,

9.11. ապահովել, որ Համաձայնագրի համաձայն Վարկատուին արվող բոլոր վճարումները զերծ լինեն Պահվող հարկերից,

9.12. Հայաստանի Հանրապետության հաշվին Վարկատուին հատուցել բոլոր այն ծախքերը և (կամ) Հարկերը, որոնք վճարվել են Վարկատուի կողմից (եթե կիրառելի է)՝ բացառությամբ Ֆրանսիայում վճարման ենթակա որևէ Հարկի,

9.13. Համաձայնագրի 10-րդ կետով (Հայտարարությունները և երաշխիքները) սահմանված բոլոր հայտարարություններն ու երաշխիքները հոգուտ Վարկատուի կատարել և տալ Ստորագրման ամսաթվին,

9.14. երաշխավորել, որ պարտավորությունների չկատարման որևէ դեպք չի շարունակվի կամ ամենայն հավանականությամբ տեղի չի ունենա,

9.15. անհապաղ ձեռք բերել կիրառելի իրավունքով կամ կարգավորմամբ պահանջվող ցանկացած Թույլտվություն՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով վավերացումով, ապահովել դրա հետ համապատասխանություն և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ այն ուժի մեջ պահելու և դրա գործողության համար, որպեսզի կարողանա կատարել Համաձայնագրով նախատեսված ՀՀ պարտավորությունները և ապահովել դրանց օրինակա-

նությունը, վավերականությունը, կատարումն ու ընդունելիությունը որպես ապացույց,

9.16. իրականացնել Ծրագիրը՝ համաձայն լայնորեն ընդունված անվտանգության սկզբունքների և գործող տեխնիկական չափանիշների, և պահպանել Ծրագրի ակտիվները՝ կիրառելի բոլոր օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, ինչպես նաև գործառնական և սպասարկման լավ պայմաններում, և օգտագործել այդպիսի ակտիվներն իրենց նպատակին և կիրառելի բոլոր օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան,

9.17. չլրամշակել կամ չփոփոխել Ֆինանսավորման պլանը՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության, և ֆինանսավորել Ֆինանսավորման պլանով չնախատեսված ցանկացած լրացուցիչ ծախս այն պայմաններով, որոնք կապահովեն Վարկի մարումը,

9.18. ապահովել, որ Համաձայնագրով նախատեսված իր վճարման պարտավորությունները մշտապես առնվազն ըստ pari passu սկզբունքի դասակարգվեն Հայաստանի Հանրապետության մյուս ներկա և ապագա չապահովված և ոչ առաջնահերթ վճարման պարտավորությունների հետ, որևէ այլ վարկատուի չտրամադրել առաջնահերթություն կամ երաշխիքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նույն առաջնահերթությունը կամ երաշխիքները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կողմից հօգուտ Վարկատուի՝ վերջինիս կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում,

9.19. լիազորել Վարկատուին և նրա ներկայացուցիչներին տարեկան կտրվածքով ստուգումներ իրականացնել, որի նպատակն է Ծրագրի և Մշտադիտարկման աղյուսակի իրականացումն ըստ տեխնիկական և ինստիտուցիոնալ հայեցակետերի գնահատելը, և այդպիսի ստուգումներ իրականացնելիս համագործակցում և Վարկատուին և նրա ներկայացուցիչներին է տրամադրում ողջամիտ ամբողջական աջակցություն և տեղեկություններ. այդ ստուգումների ժամկետները և ձևաչափը սահմանվում են Վարկատուի կողմից Հայաստանի Հանրապետության հետ խորհրդակցելուց հետո,

9.20. Վարկատուին տրամադրել այնպիսի տեղեկություն, որը Վարկատուն կարող է ողջամտության սահմաններում պահանջել՝ կապված Հայաստանի Հանրապետության արտաքին և ներպետական պարտքերի, ինչպես նաև երաշխավորված վարկի կարգավիճակի հետ,

9.21. Վարկատուին տրամադրել այնպիսի իրադարձության կամ հանգամանքի մանրամասները, որը համարվում է կամ կարող է համարվել Պարտավորությունների չկատարման դեպք կամ կարող է ունենալ էական բացասական ազդեցություն, ինչպես նաև տեղեկություններ՝ այդ դեպքի բնույթի և այն կարգավորելու համար ձեռնարկված կամ ձեռնարկվելիք բոլոր գործողությունների վերաբերյալ (առկայության դեպքում)՝ դրանց մասին տեղեկանալուց անմիջապես հետո,

9.22. առանց Վարկատուի նախնական համաձայնության չբացահայտել Համաձայնագրի բովանդակությունը որևէ երրորդ կողմի, բացառությամբ Համաձայնագրի 15.9-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված դեպքերի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1670

4(108)2022



ՏԵՂԵԿՎԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԹԻՎ CAM 1016 01 ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ
ՍԴՈ-1670 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-1670 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-1670 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազ-

4(108)2022
ՏԵՂԵԿՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
97

գային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1670 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Ջարգացման ֆրանսիական գործակալության միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմին

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող

դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝

իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների

առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի

համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2 դեկտեմբերի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ.
Հովհաննիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2022 թվականի
նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաբյուջետային կայունության և
ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում

4(108)2022

ՏԵՂԵԿՎԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1784-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին՝ Հայաստանում ֆինանսական շուկաների ընդլայնման և հարկաբյուջետային կառավարման և կայունության ամրապնդման նպատակով:

Վարկային համաձայնագիրն ունի չորս հավելված. Հավելված 1. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 2. «Մարման ժամանակացույց», Հավելված 3. «Վարկային միջոցների առհանումը» և Հավելված 4. «Ծրագրի իրականացումը և այլ հարցեր»:

2. Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ)՝ 2022 թվականի հունվարի 1-ով թվագրված՝ Սովորական գործառնությունների վարկավորման կանոնների (Վարկավորման կանոններ) բոլոր դրույթները Վարկային համաձայնագրի նկատմամբ կիրառելի են նույն ուժով ու գործողությամբ այնպես, ինչպես դրանք ամբողջությամբ սահմանված լինեին Վարկային համաձայնագրում, այնուամենայնիվ, Վարկային համաձայնագրի 1-ին հոդվածի 1.01 բաժնով նախատեսված փոփոխություններով:

Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածի 1-ին պարբերության մեջ նկարագրված ծրագրային մոտեցման հիմնական նպատակն է Հայաստանում ընդլայնել ֆինանսական շուկաները և ամրապնդել հարկաբյուջետային կառավարումը և կայունությունը: Ծրագրային մոտեցումը կազմված է երկու

4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ենթաձրագրից, և Ծրագիրը (որոշակի նպատակներ և քաղաքականության միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային կայունության ամրապնդմանը և դրա ֆինանսական ու կապիտալի շուկաների ոլորտի զարգացմանը) դրա առաջին ենթաձրագիրն է:

Ծրագրի շրջանակը ներառում է՝ ա) հարկաբյուջետային կառավարման, պետական պարտքի և հարկաբյուջետային ռիսկի կառավարման, ինչպես նաև ենթակառուցվածքային ներդրումների կայունության ամրապնդումը, բ) պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքների բարելավումը, և գ) ֆինանսական գործիքների բազայի և ներդրողների շրջանակի ընդլայնումը և կորպորատիվ թափանցիկության մակարդակի բարձրացումը: Ծրագիրն առավել մանրամասն նկարագրված է Քաղաքականության մասին գրության և քաղաքականության մշակման և մշտադիտարկման սխեմայում:

3. ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հարյուր միլիոն ԱՄՆ դոլարի (\$100,000,000) չափով վարկ (Վարկ), ընդ որում՝ նշված գումարը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթներին համապատասխան: Վարկի մայր գումարի մարման ժամկետը 12 տարի է, իսկ վճարման արտոնյալ ժամանակահատվածը՝ ինչպես սահմանված է Վարկային համաձայնագրի 2.01 բաժնի «գ» պարբերությամբ: Վարկի մայր գումարի մարումն սկսվում է 2026 թվականի փետրվարի 15-ից և ավարտվում է 2037 թվականի օգոստոսի 15-ին:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը Ծրագրի իրականացման մարմինն է և պատասխանատու է Ծրագրի ընդհանուր իրականացման, այդ թվում՝ քաղաքականության բոլոր միջոցառումների հետ համապատասխանության, միջոցների մասհանման և հաշվառում վարելու համար, իսկ լիազոր մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Էկոնոմիկայի նախարարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը և Արդարադատության նախարարությունը, Ծրագրի՝ իրենց համապատասխան բաղադրիչների առումով:

5. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. պարբերաբար՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին՝ սկսած 2026 թվականի փետրվարի 15-ից մինչև 2037 թվականի օգոստոսի 15-ը, ԱԶԲ-ին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են Վարկի՝ առհանված և չվճարված մայր գումարի նկատմամբ՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն տոկոսա-

դրույքով, որը հավասար է հետևյալ գումարին՝ ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույք (SOFR), և 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով սահմանված կարգով, հանած 0.10%՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով, և մարման ժամկետի ռիսկի համար հավելավճարի 0.10%՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով (Հոդված II, բաժիններ 2.02 և 2.04, Հավելված 2, պարբերություն 1),

5.2. վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի նկատմամբ (հանած պարբերաբար առհանվող գումարները)՝ սկսած Վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից (Հոդված II, բաժին 2.03),

5.3. յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին՝ սկսած 2026 թվականի փետրվարի 15-ից մինչև 2037 թվականի փետրվարի 15-ը, վերադարձնել Վարկային հաշվից առհանված՝ Վարկի մայր գումարը 4.166667% մասնաբաժնով, իսկ 2037 թվականի օգոստոսի 15-ին 4.166659% մասնաբաժնով (Հոդված II, բաժիններ 2.04 և 2.05, Հավելված 2, պարբերություն 1),

5.4. ապահովել, որ վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի իրականացման համար կատարված ծախսերը ֆինանսավորելու համար՝ Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան (Հոդված III, բաժին 3.01),

5.5. վարկային միջոցները առհանել Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթներին համապատասխան, ընդ որում՝ նշված հավելվածը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել՝ Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ-ի միջև ձեռք բերված համաձայնությամբ (Հոդված III, բաժին 3.02),

5.6. Ծրագիրն իրականացնելիս կատարել Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածով սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (Հոդված IV, բաժին 4.01),

5.7. Վարկավորման կանոնների 7.01 և 7.04 բաժիններում նշված հաշվետվությունների և տեղեկատվության շրջանակներում ԱԶԲ-ին տրամադրել կամ ապահովել, որ տրամադրվեն ԱԶԲ-ի կողմից ողջամտորեն պահանջվող այն բոլոր հաշվետվություններն ու ամբողջ տեղեկատվությունը, որոնք վերաբերում են համարժեք դրամական միջոցներին ու դրանց օգտագործմանը, և Ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ թիրախների իրագործմանը և Քաղաքականության միջոցառումների իրականացմանը (Հոդված IV, բաժին 4.02),

5.8. եթե Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա վերադարձնել Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով այդ օրվա դրությամբ առհանված և չվճարված

գումարը՝ Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին պարբերությանը համապատասխան (Հավելված 2, պարբերություն 2, կետ «ա»),

5.9. Եթե Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա Վարկի մայր գումարի առաջին մարման օրվանից հետո ցանկացած առհանման դեպքում վերադարձնել գումարները այդ առհանմանը հաջորդող՝ Վարկի մայր գումարի մարման յուրաքանչյուր օր՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին պարբերության աղյուսակում նշված՝ մայր գումարի տվյալ մարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող մայր գումարի մարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը. մարման ենթակա այդ գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են՝ Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի 4-րդ պարբերության մեջ նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը (Հավելված 2, պարբերություն 2, կետ «բ»),

5.10. մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա նախորդող 2 օրացուցային ամսվա ընթացքում կատարված առհանումները համարվում են որպես առհանված և չվճարված՝ առհանման օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվա դրությամբ, որոնք վճարել առհանման օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվանից սկսած մայր գումարի մարման յուրաքանչյուր օր (Հավելված 2, պարբերություն 3),

5.11. բացառությամբ Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածում սահմանված ձևի կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքերի՝ մասհանել վարկային միջոցները Վարկային մասհանումների ձեռնարկին համապատասխան (Հավելված 3, պարբերություն 1),

5.12. Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ ներկայացնելուց առաջ ներկայացնել ՀԿԲ-ում բացված հաշիվը (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են Վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները (Հավելված 3, պարբերություն 3, կետ «ա»),

5.13. Դեպոզիտային հաշվի հետ կապված վարել առանձին հաշիվներ և գրանցամատյաններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան, և ԱԶԲ-ի պահանջով ապահովել այնպիսի անկախ աուդիտորների կողմից Դեպոզիտային հաշվի վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում, որոնց որակավորումները, փորձառությունը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի

համար, համապատասխանում են աուդիտի միջազգային ստանդարտներին կամ դրանց ազգային համարժեքին, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար և դրանք կազմելուց հետո կարճ ժամկետում, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան ԱԶԲ-ի պահանջից 6 ամիս անց, այդպիսի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների օրինակները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունները տրամադրել ԱԶԲ-ին՝ անզերեմով (Հավելված 3, պարբերություն 3, կետ «բ»),

5.14. չառհանել վարկային միջոցներ Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի առդիրում նշված որևէ ապրանքի ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով (Հավելված 3, պարբերություն 4),

5.15. անկախ վարկային համաձայնագրի որևէ այլ դրույթից կամ բացառությամբ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքերի՝ որևէ առհանում չկատարել Վարկային հաշվից, եթե Հայաստանի Հանրապետությունը չի կատարել Քաղաքականության միջոցառումները՝ Վարկային միջոցները հատկացնելու համար, և Քաղաքականության այդ միջոցառումներն այլևս ուժի մեջ չեն (Հավելված 3, պարբերություն 5),

5.16. վարկային միջոցների որևէ առհանում չկատարել Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի առդիրում սահմանված ծախսերի դեպքում (Հավելված 3-ի առդիր),

5.17. ԱԶԲ-ին տեղեկացնել բազմակողմ և երկկողմ օգնություն տրամադրող այլ կազմակերպությունների հետ քաղաքականության վերաբերյալ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են նշանակություն ունենալ Ծրագրի իրականացման համար, ինչպես նաև ԱԶԲ-ին հնարավորություն տալ մեկնաբանություններ ներկայացնելու այդ քննարկումների արդյունքում առաջացած քաղաքականության հետ կապված ցանկացած առաջարկության վերաբերյալ, ինչպես նաև նախքան այդպիսի որևէ առաջարկի վերջնական տարբերակի մշակումը և իրականացումը հաշվի առնել ԱԶԲ-ի տեսակետները (Հավելված 4, պարբերություն 3),

5.18. ապահովել, որ համարժեք դրամական միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համապատասխան որոշակի ծրագրերի և գործողությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով (Հավելված 4, պարբերություն 4),

5.19. ապահովել, որ Լիազոր մարմինները ուսումնասիրեն Ծրագրի՝ իրենց համապատասխան բաղադրիչների նպատակների շրջանակը, իրականացման հետ կապված կարգավորումները, ազդեցությունն ու ձեռքբերումները և այդ մասին հաշվետվություն ներկայացնեն Ծրագրի իրականացման մարմին՝ Ծրագրի իրականացման մարմին հնարավորություն ընձեռելով կատարելու ԱԶԲ-ին հաշվետվություն ներկայացնելու՝ իր համար սահմանված պահանջները՝ Վարկային համաձայնագրի ժամկետներին համապատասխան (Հավելված 4, պարբերություն 6):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

2 դեկտեմբերիի 2022 թվականի
ՍԴՈ-1671

4(108)2022



ՏԵՂԵԿՎՊԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1671 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաքյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈՒ-1671 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաքյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈՒ-1671 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ 4(108)2022

նադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1671 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու

համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝

Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի

համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատրամաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն,

որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլա-
փրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավա-
րարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն
իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ
հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես
գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր:
Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը
չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու
իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի
կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա
թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2 դեկտեմբերի 2022թ.

4(108)2022

ՍԵՆԵՎԱԳԻ

ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

4(108)2022



ՏԵՂԵԿՎԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

6 դեկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Ա. Ավանեսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի հունիսի 13-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրում ամրա-

գրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 1590-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի հոկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հունիսի 13-ին Դոհայում՝ առողջապահության և բժշկական հետազոտությունների ոլորտում համագործակցությունն ավելի ամրապնդելու, երկու երկրներում առողջապահական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, տրամադրվող առողջապահության որակի չափանիշների, դասակարգման և մակարդակի պահպանման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներ զարգացնելու նպատակով:

2. Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը ստեղծում են համատեղ կոմիտե, որը բաղկացած է Կողմերի կողմից նշանակված հավասար թվով ներկայացուցիչներից: Կոմիտեն անհրաժեշտության դեպքում անցկացնում է իր հանդիպումները Հայաստանի Հանրապետությունում և Կատարի Պետությունում՝ հաջորդաբար, Համաձայնագրի կատարումը վերահսկելու և Համաձայնագրով նախատեսված համագործակցության մանրամասները լրացուցիչ մշակելու համար:

4(108)2022
 ◆ ՏԵՆԵԿԱԿԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. Համաձայնագրով սահմանված նպատակներին հասնելու համար կատարական Կողմի հետ, ցանկացած այլ արտակարգ կամ կարևոր ոլորտների հետ մեկտեղ համագործակցել առողջապահության ոլորտում, տեխնոլոգիաների, առողջապահական համակարգերի և առողջության առաջնային պահպանման համակարգերի կիրառման հետ կապված հետազոտությունների, երկու երկրներում առողջապահական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև երկու երկրներում թողարկված բժշկական և գիտական թերթերի, ամսագրերի, հրապարակումների և տեղեկագրերի փոխանակման, հաղորդակցությունը, վիճակագրական մեթոդները և տեղեկության փոխանակումը ներառելու նպատակով՝ բժշկական տեղեկատվական համակարգերի և համաճարակաբանության ստանդարտացման, ինչպես նաև տրամադրվող առողջապահության որակի չափանիշների, դասակարգման և մակարդակի պահպանման բնագավառներում (հոդված 1),

3.2. համաձայնել կատարական Կողմի հետ՝ համագործակցելու Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասում ներառված, սակայն դրանով չսահմանափակված ոլորտներում, որոնք են՝ առողջապահության ենթակառուցվածք, հիվանդությունների կանխարգելում և բուժում, թվային առողջապահություն, բժշկական կրթություն, վերապատրաստում և շարունակական մասնագիտական զարգացում, գենոմիկա, գենետիկա և անհատականացված բժշկություն, հակամանրէային դիմադրություն, հանրային առողջապահություն, առողջության ապահովագրություն, նյարդագիտություն, բժշկական զբոսաշրջություն, իսկ Համաձայնագրից բխող համագործակցությունը կունենա Համաձայնագրի 2-րդ հոդվածի II մասում շարադրված ձևերից որևէ մեկը (հոդված 2),

3.3. հոգալ ՀՀ ծախսերը ինքնուրույն՝ Համաձայնագրի համապատասխան ծրագրերի և գործողությունների իրականացման հետ կապված, եթե կատարական Կողմի հետ այլ որոշում չի կայացվել, կամ այդ նպատակով ֆինանսավորման այլ միջոցներ առկա չեն (հոդված 3),

3.4 կատարական Կողմի հետ ստեղծել համատեղ կոմիտե, որը բաղկացած է Կողմերի կողմից նշանակված հավասար թվով ներկայացուցիչներից (հոդված 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով,

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի հունիսի 13-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

6 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1672

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
6-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1672 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի հունիսի 13-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈՒ-1672 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի հունիսի 13-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈՒ-1672 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 4(108)2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆

այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1672 որոշմամբ 2022 թվականի հունիսի 13-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու

համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմա-

նադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթա-

շարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատրոնային փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք

անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակու-

4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

թյուն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«6» դեկտեմբերի 2022թ.

4(108)2022



ՏԵՂԵԿՎՊԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
«ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՎՐՈՊԱ» ԾՐԱԳՐԻՆ (2021-2027) ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 դեկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է.
Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-
տանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նա-
խարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի
սեպտեմբերի 14-ին և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված
«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղ-

4(108)2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
135

ծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1843-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի սեպտեմբերի 14-ին և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի դեկտեմբերի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի սեպտեմբերի 14-ին (Երևանում) և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին (Բրյուսելում)՝ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովման նպատակով:

Համաձայն Համաձայնագրի 1-ին հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է մշակութային և ստեղծագործ ոլորտներում Եվրոպական միության (այսուհետ՝ Միություն) Ծրագրին, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի ԵՄ 2021/818 կանոնակարգով (այսուհետ՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգ) և որպես ասոցացված երկիր մասնակցում է Ծրագրի մշակութային տիրույթի բոլոր գործողություններին, ինչպես նաև միջոլորտային տիրույթում ներառված՝ Ծրագրի հարթակի ստեղծմանն օժանդակող գործողություններին: Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է Ծրագրին՝ Միության ցանկացած ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը կարգավորող շրջանակային համաձայնագրով սահմանված պայմաններին և Համաձայնագրում նշված ժամկետներին ու պայմաններին, Համաձայնագրի 1-ին հոդվածում

նշված իրավական ակտին, ինչպես նաև Ծրագրի իրականացմանն ու գործողությունների առավել արդիական տարբերակներին վերաբերող ցանկացած այլ կանոններին համապատասխան:

2. Համաձայնագիրն ունի 2 հավելված՝ Հավելված I. «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրում Հայաստանի ֆինանսական հատկացումը կարգավորող կանոնները (2021-2027)» և Հավելված II. «Ֆինանսների խելամիտ կառավարումը ֆինանսական շահերի պաշտպանությունը և բարելավումը»:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. ստեղծել համապատասխան կառույցներ և մեխանիզմներ և Ծրագիրն իրականացնելու նպատակով ընդունել համակարգման և գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մյուս միջոցները՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն. մասնավորապես ստեղծել «Ստեղծագործ Եվրոպա» հարթակ՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի 7(1)(դ) հոդվածին և Հանձնաժողովի կողմից տրամադրված ուղեցույցին համապատասխան (հոդված 2, կետ 3),

3.2. կատարել ֆինանսական հատկացում Ծրագրի իրականացման մշտադիտարկման համար պատասխանատու Ստեղծագործ Եվրոպա կոմիտեում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների համար՝ այն հարցերով, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը (հոդված 2, կետ 4),

3.3. անգլերենն օգտագործել հայտերի, պայմանագրերի և հաշվետվությունների, ինչպես նաև Ծրագրի այլ վարչական հարցերի հետ կապված ընթացակարգերի առնչությամբ Հանձնաժողովի հետ կապ հաստատելու համար (հոդված 2, կետ 8),

3.4. ֆինանսական միջոցներ հատկացնելու հրավերին համապատասխան՝ հրավերի օրվանից ոչ ուշ, քան 45 օր հետո՝ եվրոյով, տարեկան միանվագ վճարի տեսքով, տրամադրել գործառնական հատկացման (հաշվարկվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգով) և մասնակցության վճարի (հաշվարկվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով և Հավելված I-ի I կետով սահմանված կարգով և մասնաբաժիններով) տեսքով ֆինանսական հատկացում (հոդված 3, կետեր 2-7 և 9, Հավելված I, կետ I),

3.5. Համաձայնագիրն իրականացնել 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորություններին համապատասխան (հոդված 5),

3.6. համաձայնել, որ Համաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան Համաձայնագրի դադարեցման դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո և նախքան Համաձայնագրի գործողության դադարումը նախաձեռնած նախագծերը, գործողությունները կամ աշխատանքները կշարունակվեն մինչև դրանց ավարտը՝ Համաձայնագրով սահմանված պայմանների համաձայն և տարեկան ֆինանսական հատկացումը N տարվա համար, որի ընթացքում Համաձայնագիրը դադարեցվում է, ամբողջությամբ կվճարվեն Համաձայնագրով սահմանված պայմանների համաձայն (հոդված 6, կետ 6, մասեր ա, բ),

3.7. ֆինանսական հատկացումը վճարելու մասով ցանկացած հետաձգման դեպքում՝ վճարման ժամկետի օրվանից սկսած, ժամկետանց գումարի մասով վճարել տույժ (Հավելված I, կետ II, ենթակետ 3, պրբ. 2),

3.8. վճարել վճարման ժամկետի օրը չվճարված գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքը, որն Եվրոպական կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորվող հիմնական գործառնությունների նկատմամբ կիրառվող այն տոկոսադրույքն է, ինչպես հրապարակված է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում, որը գործում է վճարման ժամկետի ամսվա առաջին օրացուցային օրվա դրությամբ՝ ավելացրած մեկ և կես տոկոսային կետ (Հավելված I, կետ II, ենթակետ 3, պրբ. 3),

3.9. երաշխավորել, որ Եվրոպական միության՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ցանկացած ֆիզիկական անձի կամ այդտեղ հիմնադրված իրավաբանական անձի, որոնք Միությունից ստանում են դրամական միջոցներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող կամ հիմնադրված՝ Միության դրամական միջոցների գործածման գործընթացում ներգրավված երրորդ կողմի տարածքում տեխնիկական, գիտական, ֆինանսական կամ այլ տեսակի վերանայում և աուդիտ իրականացնելու իրավունքը՝ Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կամ մարմինների համար կիրառվող ակտերին համապատասխան և ինչպես նախատեսված է համապատասխան համաձայնագրերում և (կամ) պայմանագրերում. այդպիսի վերանայում և աուդիտ կարող է իրականացվել Եվրոպական միության հաստատությունների և մարմինների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական հաշվիչ դատարանի գործակալների կամ Եվրոպական հանձնաժողովի պաշտոնատար անձանց կողմից (Հավելված II, հոդված 1, կետ 1),

3.10. ապահովել, որ Եվրոպական միության հաստատությունների և մարմինների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական հաշվիչ դատարանի պաշտոնյաները, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից լիազորված այլ անձինք ունենան վայրերի, աշխատանքների և փաստաթղթերի (ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակներ) և աուդիտն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունների,

համապատասխան հասանելիություն, այդ թվում՝ երաշխավորելով աուդիտի ենթարկվող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ աուդիտի ենթարկվող երրորդ անձի կողմից պահվող ցանկացած փաստաթղթի տպագիր/էլեկտրոնային օրինակ և քաղվածքներ կամ թվային կրիչի բովանդակությունը ստանալու իրավունքը (Հավելված II, հոդված 1, կետ 2),

3.11. Եվրոպական հանձնաժողովին և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին (ԽՊԵԳ) տալ իրավասություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնելու վարչական քննություններ, այդ թվում՝ տեղում իրականացվող ստուգումներ և ուսումնասիրություններ. այդ վարչական քննություններն իրականացվում են Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կիրառելի ակտերով սահմանված ժամկետներին և պայմաններին համապատասխան (Հավելված II, հոդված 2, կետ 1),

3.12. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները ողջամիտ ժամկետներում Եվրոպական հանձնաժողովին կամ ԽՊԵԳ-ին տեղեկացնեն իրենց հայտնի դարձած և Միության ֆինանսական շահերի վրա ազդող խախտումների, խարդախությունների և այլ ապօրինի գործունեության հետ կապված ցանկացած փաստի կամ կասկածի մասին (Հավելված II, հոդված 2, կետ 2),

3.13. ապահովել Հանձնաժողովի պաշտոնյաների և ԽՊԵԳ-ի աշխատակիցների տեղում պատշաճ ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով պահանջվող գործառույթների վերաբերյալ ամբողջ տեղեկություններին և փաստաթղթերին, այդ թվում՝ համակարգչային տվյալներին հասանելիությունը (Հավելված II, հոդված 2, կետ 6),

3.14. ֆիզիկական անձի, իրավաբանական անձի կամ երրորդ կողմի տեղում իրականացվող ստուգումների կամ ուսումնասիրությունների դեմ առարկելու դեպքում, ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, գործելով Հայաստանի Հանրապետության կանոններին և կարգավորումներին համապատասխան, Եվրոպական Հանձնաժողովին կամ ԽՊԵԳ-ին տրամադրեն անհրաժեշտ աջակցություն, որպեսզի նրանք կարողանան կատարել տեղում ստուգումներ կամ ուսումնասիրություններ իրականացնելու իրենց պարտականությունները. այս աջակցությունը ներառում է համապատասխան կանխարգելիչ միջոցների ձեռնարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, մասնավորապես՝ ապացույցների ապահովման մասով (Հավելված II, հոդված 2, կետ 7),

3.15. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մարմինները համագործակցեն Եվրոպայի գլխավոր դատախազության հետ՝ թույլատրելով վերջինիս կատարել Եվրոպական միության ֆինանսական շահերի վրա ազդող հանցագործություններ կատարող անձանց և հանցակիցներին քննելու, հետապնդելու և դատապարտելու իրենց պարտականությունները՝ կիրառելի օրենսդրությանը համապատասխան (Հավելված II, հոդված 2, կետ 13),

3.16. ապահովել պետություններից բացի, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար Ծրագրից բխող որևէ պահանջի առնչությամբ Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված՝ նյութական պարտավորություն սահմանող որոշումների կատարումը Հայաստանի Հանրապետությունում (Հավելված II, հոդված 3, կետ 1),

3.17. ապահովել Միության ծրագրերի, աշխատանքների, գործողությունների կամ նախագծերի առնչությամբ պայմանագրում կամ համաձայնագրում պարունակվող արբիտրաժային դրույթի կիրառման արդյունքում ընդունվող Եվրոպական միության արդարադատության դատարանի վճիռների ու հրամանների կատարումը Հայաստանի Հանրապետությունում նույն կերպ, ինչպես Եվրոպական հանձնաժողովի՝ Համաձայնագրի II հավելվածի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված որոշումները (Հավելված II, հոդված 3, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՒՐ
◆ 4(108)2022

1. 2022 թվականի սեպտեմբերի 14-ին և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

16 դեկտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1673

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾ
ԵՎՐՈՊԱ» ԾՐԱԳՐԻՆ (2021-2027) ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
16-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1673 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի սեպտեմբերի 14-ին և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՍԴՈ-1673 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի սեպտեմբերի 14-ին և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՍԴՈ-1673 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐՈՒՄ ◆ 4(108)2022

Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1673 որոշմամբ 2022 թվականի սեպտեմբերի 14-ին և 2022 թվականի հոկտեմբերի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանն ղիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանն ղիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ղիմումը Սահմանադրական դատարանն է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** ղիմումները Սահմանադրական դատարանն կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանն ներկայացվող ղիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով ղիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն առանց նախապայմանների.

- այդ հարցով ղիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով ղիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե

Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համա-

պատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին

նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատարանի

տակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյույլ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյույլ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«16» դեկտեմբերի 2022թ.

4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

150

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի հունվարի 5-ի N 7-Ա որոշմամբ հավանություն է տվել 2019 թվականի

հոկտեմբերի 1-ին Երևանում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2022 թվականի հունվարի 14-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի հունվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 15-ի ՍԴԱՌ-31 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, գործի դատաքննությունը նշանակվել է 2022 թվականի մարտի 15-ին:

Գործը դատաքննության նախապատրաստելիս ««Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) բնագիր անգլերեն և հայերեն թարգմանված տեքստերի միջև վեր են հանվել էական անհամապատասխանություններ: Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությամբ տեքստում առկա թերությունները վերացնելու վերաբերյալ գրությանն ի պատասխան՝ սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը, ելնելով Համաձայնագրի տեքստի ծավալից, խնդրել է Համաձայնագրի հայերեն պատշաճ պաշտոնական թարգմանությամբ տեքստը Սահմանադրական դատարան ներկայացնելու ժամկետը երկարաձգել: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի ՍԴԱՌ-53 աշխատակարգային որոշմամբ հիշյալ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև կասեցման հիմքերը վերանալը:

2022 թվականի նոյեմբերի 11-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանի գրությունը, որին կից ներկայացվել է Համաձայնագրի՝ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական թարգմանությամբ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից պաշտոնապես հաստատված հայերեն տեքստը:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի նոյեմբերի 22-ի ՍԴԱՈ-181 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ գործի վարույթը կասեցնելու հիմքերը վերացել են, և գործի վարույթը վերսկսվել է:

Ուսումնասիրելով Համաձայնագիրը, սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրը ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում՝ փոխադարձ առևտրային հարաբերությունների զարգացման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում Կողմերի միջև տնտեսական համագործակցության խթանման համար շահավետ միջավայրի և պայմանների ստեղծման, ինչպես նաև Կողմերի միջև առևտրային և ներդրումային խոչընդոտների վերացման, բիզնեսի ծախսերի նվազեցման և տնտեսական արդյունավետության բարձրացման նպատակով:

2. Համաձայնագիրն ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ), Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության (ԵԱՏՄ անդամ պետություններ), Սինգապուրի Հանրապետության միջև (Կողմեր):

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջինիս ուժի մեջ մտնելու համար Կողմերի համապատասխան ներքին բոլոր իրավական ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումների փոխանակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

3. Համաձայն Համաձայնագրի՝ Կողմերը ստեղծում են ազատ առևտրի գոտի՝ ՍԱԳՀ 1994-ի (1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագիրը և ԱՀԿ համաձայնագրի (1994 թվականի ապրիլի 15-ի՝ «Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» Մարաքեշի համաձայնագիր) 1Ա հավելվածում ընդգրկված՝ դրա մեկնաբանման համար ծանոթագրությունները) XXIV հոդվածին համապատասխան:

4. Համաձայնագիրն ունի հավելվածներ և առդիրներ, որոնք կազմում են դրա անբաժանելի մասը, մասնավորապես՝ Հավելված 2-1. «Սակագնային պարտավորությունների ցանկեր», Առդիր 2-1-1. «ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ցանկ», Առդիր 2-1-2. «Սինգապուրի սակագնային պարտավորությունների ցանկ», Հավելված 4-1. «Ծագման հավաստագիր (ՁԵՎ EAS)», Հավելված 4-2. «Ծագման հավաստագրի (ձև EAS) լրացման հրահանգներ», Հավելված 4-3. «Ծագման մասին հայտարարագիր», Հավելված 4-4. «Արտադրանքի դասակարգման հատուկ կանոններ», Հավելված 10-1.

◆ 4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

«Պետական գնումների վերաբերյալ օրենքների ու կանոնակարգերի հրապարակումը», Հավելված 11-1. «Մրցակցության հարցերով պատասխանատու մարմինների պաշտոնական կայքերը», Հավելված 11-2. «Մրցակցության հարցերով պատասխանատու ոլորտային մարմինների պաշտոնական կայքերը», Հավելված 14-1. «Արբիտրաժային կանոնները», Հավելված 14-2. «Արբիտրների վարքագծի կանոնները»:

Համաձայնագրի 2-1-1 (ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ցանկ) և 2-1-2 (Սինգապուրի սակագնային պարտավորությունների ցանկ) առդիրները կազմում են Համաձայնագրի 2-1 հավելվածի անբաժանելի մասը և ներկայացված են առանձին փաստաթղթերով:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

5.1. սինգապուրյան Կոդմի ապրանքներին տրամադրել ազգային ռեժիմ՝ ՍԱԳՀ 1994-ի III հոդվածին համապատասխան, և այդ կապակցությամբ ՍԱԳՀ 1994-ի III հոդվածը, ինչպես նաև ՍԱԳՀ 1994-ի III հոդվածին համապատասխան ռեժիմի տրամադրման պարտավորությունից ցանկացած բացառում, ազատում և հրաժարում ներառված են Համաձայնագրում և կազմում են դրա մասը (հոդված 2.4),

5.2. եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա նվազեցնել կամ վերացնել սինգապուրյան Կոդմի տարածքի ծագման ապրանքների համար մաքսատուրքերը Համաձայնագրի 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկեր) նշված Հայաստանի Հանրապետության սակագնային պարտավորությունների ցանկերին համապատասխան (հոդված 2.6, կետ 1),

5.3. եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա չավելացնել գոյություն ունեցող մաքսատուրքերից ոչ մեկը կամ չսահմանել նոր մաքսատուրքեր, որոնց արդյունքում սինգապուրյան Կոդմի տարածքի ծագման ապրանքների համար մաքսատուրքերի չափը կգերազանցի Համաձայնագրի 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկեր) նշված սակագնային պարտավորությունների մակարդակը (հոդված 2.6, կետ 2),

5.4. Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում սինգապուրյան Կոդմին տեղեկացնել Համաձայնագրի 2.8 հոդվածի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքների ու կանոնակարգերի մասին, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել նման կիրառելի օրենքներում ու կանոնակարգերում կատարված ցանկացած փոփոխության մասին (հոդված 2.8, կետ 2),

5.5. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն իրենց պաշտոնական կայքերում հասանելի դարձնեն Հայաստանի

Հանրապետության կողմից սահմանված՝ ներմուծմանն ու արտահանմանն առնչվող վճարների և հավաքագրումների մասին տեղեկությունները (հոդված 2.9, կետ 2),

5.6. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ներմուծման լիցենզավորման ընթացակարգերը, որոնք սահմանվել են Ներմուծման լիցենզավորման մասին համաձայնագրի (ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում ընդգրկված՝ «Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին» համաձայնագիր) 1-3-րդ հոդվածներում, իրականացվեն թափանցիկ և կանխատեսելի ձևով ու կիրառվեն Ներմուծման լիցենզավորման մասին համաձայնագրին համապատասխան (հոդված 2.11, կետ 1),

5.7. բացառությամբ Համաձայնագրի 4-րդ գլխով նախատեսված դեպքերի՝ ապահովել, որ ապրանքները ճանաչվեն Հայաստանի Հանրապետության ծագման ապրանքներ, եթե դրանք համապատասխանում են Համաձայնագրի 4.3 հոդվածում սահմանված չափորոշիչներին (հոդված 4.3),

5.8. ապահովել անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներին ու կանոնակարգերին և Փարիզի կոնվենցիայի 10bis հոդվածին համապատասխան (հոդված 8.11),

5.9. նախատեսել մտավոր սեփականության իրավունքների պատշաճ ու արդյունավետ ապահովումը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին ու կանոնակարգերին և ԹՐԻՓՍ համաձայնագրի (ԱՀԿ համաձայնագրի 1Գ հավելվածում ընդգրկված՝ «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիր) 41-ից 61-րդ հոդվածներին համապատասխան, ինչպես նաև ապահովել իրավունքների պահպանության ընթացակարգերը՝ ԹՐԻՓՍ համաձայնագրի III մասի համաձայն՝ այնպես, որ հնարավոր լինի ձեռնարկել արդյունավետ միջոցներ մտավոր սեփականության իրավունքների խախտման ցանկացած գործողության դեմ (հոդված 8.12),

5.10. հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգային առաջնահերթությունները և հասանելի ռեսուրսները՝ համաձայնել ընդլայնել շրջակա միջավայրի ոլորտում համագործակցությունը և իրականացնել փոխշահավետ համատեղ նախագծեր այն ոլորտներում, որոնք կարող են նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը, ինչպես նաև վերոհիշյալ համագործակցության գործողություններն իրականացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների հիման վրա՝ փոխհամաձայնեցված պայմաններով՝ Համաձայնագրի 12.3 հոդվածի 3-րդ կետում սահմանված ձևով, իսկ գործողությունների ֆինանսավորումը որոշել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում (հոդված 12.3, կետեր 2 և 3),

5.11. նշանակել կոնտակտային անձ, որն ընդհանուր առմամբ պատասխանատու է Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցով սին-

գապուրյան Կողմի և Համատեղ կոմիտեի հետ հաղորդակցության ապահովման համար, եթե այլ բան հատուկ նշված չէ Համաձայնագրի մյուս դրույթներում, ինչպես նաև նշանակել Հայաստանի Հանրապետության կոնտակտային անձին՝ Հայաստանի Հանրապետության ներքին ընթացակարգերին համապատասխան, և սինգապուրյան Կողմին ծանուցել այդ նշանակման մասին՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից իննսուն (90) օրվա ընթացքում՝ կոնտակտային անձի ցանկացած փոփոխության մասին պատշաճ կերպով ծանուցելով սինգապուրյան Կողմին (հոդված 15.3):

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

20 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1674

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1674 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի հոկտեմբերի 11-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈՒ-1666 որոշմամբ **Ո Ր Ո Շ Ե Լ է**.

«1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: (...):»:

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի դեկտեմբերի 20-ի ՍԴՈՒ-1674 որոշմամբ որոշել է, որ «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի ՍԴՈՒ-1674 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

4(108)2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
156

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1674 որոշմամբ «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում

է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղա-

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

նակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկու-

թյան ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղեկավարում անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղեկավարում անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղեկավարում անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղեկավարում անձանց պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղեկավարում անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղեկավարում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղեկավարում ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղեկավարում ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղեկավարում ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղեկավարում իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղեկավարում իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանն ղեկավարում իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներ-

կայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատրոնային փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնակա-

նացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հանեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխա-

տակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

4(108)2022



ՏԵՂԵԿՎԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«20» դեկտեմբերի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ
ՕՐԵՆՍԳՐՔԻ (ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 2005 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ) 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 դեկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Գայանե Մանուկյանի ներկայացուցիչներ՝ Ա. Ղազարյանի, Կ. Տոնոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ

հողվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) ուժի մեջ է մտել 1970 թվականի հունվարի 1-ից, ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին:

Օրենսգրքի «Ամուսնությունը դադարելու ժամանակը» վերտառությամբ 40-րդ հոդվածը սահմանում է.

«Ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից»:

Գործի քննության առիթը Գայանե Մանուկյանի (այսուհետ՝ նաև Դիմող)՝ 2021 թվականի հունիսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 5-ի ՍԴԱՈ-171 աշխատակարգային որոշմամբ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴԱՈ-256 աշխատակարգային որոշմամբ նշված գործի վարույթը կասեցվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով՝ ապացույցներ պահանջելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի ՍԴԱՈ-204 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴԱՈ-211 աշխատակարգային որոշմամբ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33-րդ հոդվածի մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, Դատական դեպարտամենտից ստացված թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործի նյութերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

Թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործով հայցվոր Գայանե Նազարյանը վարչական դատարան է դիմել ընդդեմ կադաստրի կոմիտեի, երրորդ անձինք՝ Դիմողի, Արտյոմ Սարգսյանի, Հասմիկ Աբրահամյանի՝ Երևան քաղաքի Հրաչյա

Քոչար փողոցի 16/1 շենքի 17 բնակարանի հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Դիմողի անվամբ գրանցված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքն անվավեր ճանաչելու և նույն գույքի նկատմամբ իր ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը վարույթ է ընդունվել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքն անվավեր ճանաչելու պահանջի մասով, իսկ մյուս՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասով վարույթ ընդունելը մերժվել է: Վարչական դատարանը գտել էր, որ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշմամբ Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանն անհատույց մասնավորեցվել է Արտյոմ Սարգսյանի անվամբ՝ ընտանիքի երեք անձով՝ որպես վերջիններիս ընդհանուր համատեղ սեփականություն՝ չբացահայտելով, թե ով է որոշման մեջ հիշատակվող Արտյոմ Սարգսյանի կինը: Ըստ վարչական դատարանի՝ որոշման մեջ բացակայել են այն անհատականացնող տվյալները, որոնց հիմքով հնարավոր կլիներ պարզել, թե նշված որոշմամբ Արտյոմ Սարգսյանից բացի ում անվամբ է սեփականաշնորհվել հիշյալ հասցեի անշարժ գույքը: Վարչական դատարանը հատկանշական է համարել, որ բնակարանի անհատույց մասնավորեցման մասին որոշման կայացման պահին գրանցված է եղել Արտյոմ Սարգսյանի և հայցվոր Գայանե Նազարյանի ամուսնությունը, իսկ նույն ժամանակ առաջինը գտնվել է փաստական ամուսնական կապի մեջ Դիմողի հետ, և հիշյալ որոշման կայացման համար հիմք հանդիսացած՝ Արտյոմ Սարգսյանի ներկայացրած դիմումում վերջինս որպես իր կին նշել է Դիմողին: Հանգելով նրան, որ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշումից պարզ չի եղել, թե այն որոշակիորեն ում է հասցեագրված՝ հայցվոր Գայանե Նազարյանին, թե Դիմողին, վարչական դատարանը եզրակացրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 62-րդ հոդվածի «գ» կետի ուժով պետական գրանցման համար հիմք հանդիսացած մասով հիշյալ որոշումը հանդիսանում է առ ոչինչ վարչական ակտ, որի հիման վրա Դիմողի անվամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելը պետք է մերժվեր տվյալ պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 43-րդ հոդվածի հիմքով:

Եզրակացնելով, որ Դիմողի անվամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի պահանջների խախտմամբ, վարչական դատարանը գտել է, որ այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի հիմքով անվավեր վարչական ակտ է, և 2018 թվականի օգոստոսի 10-ի վճռով հայցը բավարարել է և «Անվավեր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ◆ 4(108)2022

ճանաչել Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17 բնակարան հասցեի անշարժ գույքի նկատմամբ Գայանե Մանուկյանի անվամբ գրանցված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումը»:

Դիմողը վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ վարչական դատարանը 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ բավարարել է՝ վճիռը բեկանել, իսկ գործն ուղարկել ամբողջ ծավալով նոր քննության: Վերաքննիչ վարչական դատարանը գտել էր, որ 2002 թվականի նոյեմբերի 6-ին Դիմողի անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցման, ինչպես նաև դրա հիմքում ընկած վարչական ակտի՝ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման իրավաչափությանն անդրադառնալիս վարչական դատարանը կիրառել էր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը՝ անտեսելով, որ նշյալ վարչական ակտերի ընդունման պահին այն ուժի մեջ չի եղել՝ արձանագրելով Վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, քանի որ վարչական դատարանը վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս, դուրս էր եկել վիճարկվող վարչական ակտի և դրա հիմքում ընկած վարչական ակտի ընդունման պահի դրությամբ գործող օրենսդրական կարգավորումների շրջանակից:

Վերաքննիչ վարչական դատարանը Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման կապակցությամբ արձանագրել էր, որ դրա ընդունման հիմքում դրվել են Երևանի քաղաքապետի 2000 թվականի հունիսի 5-ի «Արտյոմ Սարգսյանի ընտանիքի բնակարանային հարցի մասին» թիվ 651 որոշումը, Երևանի քաղաքապետարանի 2002 թվականի օգոստոսի 21-ի թիվ 001214 օրոգերում, Արտյոմ Սարգսյանի 2002 թվականի հոկտեմբերի 9-ի՝ Երևանի քաղաքապետին հասցեագրված «Բնակ. տարածության սեփականաշնորհման մասին» դիմումում զետեղված տվյալները: Փաստելով, որ օրոգերում որպես Արտյոմ Սարգսյանի կին նշված է Դիմողը, Արտյոմ Սարգսյանի 2002 թվականի հոկտեմբերի 9-ի հիշյալ դիմումում որպես վերջինիս կին նշված է Դիմողը, նաև այն, որ գործի նյութերում առկա է 2002 թվականի հոկտեմբերի 9-ի համաձայնագիրը, որով Հասմիկ Աբրահամյանը և Դիմողը տվել են իրենց համաձայնությունը բնակարանն Արտյոմ Սարգսյանի անվամբ սեփականաշնորհվելու համար՝ վերաքննիչ վարչական դատարանը գտել էր, որ թեև խնդրո առարկա իրավունքի պետական գրանցման հիմքում դրված իրավահաստատող փաստաթղթում չեն հստակեցվել Արտյոմ Սարգսյանի ընտանիքի անդամները (ինքը, մայրը, կինը), սակայն նշյալ որոշման կայացման հիմքում ընկած փաստաթղթերից հստակ բացահայտվում է սեփականաշնորհման սուբյեկտների կազմը՝ «1. Սարգսյան Արտյոմ՝ ինքը, 2. Աբրահամյան Հասմիկ՝ մայրը, 3. Մանուկյան Գայանե՝ կինը»:

Վերաքննիչ վարչական դատարանը եզրահանգել էր, որ ձեռքի տակ ունենալով վերոնշյալ փաստաթղթերը, որոնցում հստակ նշվել էր ընտանիքի կազմը՝ Արտյոմ Սարգսյանը, Հասմիկ Աբրահամյանը և Դիմողը, հնարավոր էր նույնականացնել Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման մեջ ընդգրկված հասցեատերերին:

Վերաքննիչ վարչական դատարանի որոշման դեմ հայցվոր Գայանե Նազարյանը ներկայացրել էր վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ բավարարել էր՝ վերաքննիչ վարչական դատարանի 2019 թվականի հունիսի 14-ի որոշումը բեկանել և օրինական ուժ էր տվել վարչական դատարանի 2018 թվականի օգոստոսի 10-ի վճիռն՝ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանություններով: Նույն որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումների մասով Վճռաբեկ դատարանը նշել էր, որ հայցվոր Գայանե Նազարյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված էր Վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ վերաքննիչ վարչական դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի և Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործով 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից հաստատվել էր, որ.

1) Երևանի քաղաքապետարանի ՔԿԱԳ Շենգավիթ տարածքային բաժնի պետի 2017 թվականի հոկտեմբերի 26-ի «Ամուսնության ակտի գրանցման մասին» տեղեկանքի համաձայն՝ Արտյոմ Սարգսյանի և Գայանե Նազարյանի ամուսնության ակտի գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Շենգավիթ տարածքային բաժնում 1978 թվականի հուլիսի 15-ին, իսկ ամուսնությունը լուծվել է 2006 թվականի դեկտեմբերի 15-ին՝ ՔԿԱԳ Աջափնյակի և Դավթաշենի տարածքային բաժնում:

2) Երևանի քաղաքապետարանի կողմից Արտյոմ Սարգսյանին տրվել է 2002 թվականի օգոստոսի 21-ի թիվ 001214 օրդերը Հրաչյա Քոչար փողոցի թիվ 16/1 տան մուտքի 6-րդ հարկի 2 սենյականոց 39,0 քմ բնակելի, 67,2 քմ ընդհանուր մակերեսով 17-րդ բնակարանն իր երեք անձից բաղկացած ընտանիքով զբաղեցնելու համար: Նշված օրդերը միակ փաստաթուղթն է, որն իրավունք է տալիս զբաղեցնելու հիշյալ բնակելի մակերեսը: Տվյալ

օրդերում որպես Արտյոմ Սարգսյանի կին նշված է 1963 թվականին ծնված Դիմողը:

3) Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման համաձայն՝ «Արտյոմ Սարգսյանը խնդրել է սահմանված կարգով սեփականաշնորհել Հր. Քոչարի փողոցի հ. 16/1 շենքի հ. 17 երկուսենյականոց բնակարանը: Նշված բնակարանն Ա. Սարգսյանին հատկացվել է Երևանի քաղաքապետի 05.06.2000թ. հ. 651 որոշմամբ և ձևակերպվել է օրդեր (հ. 001214)»: Դեկավարվելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» օրենքով՝ որոշվել է թույլատրել Հրաչյա Քոչար փողոցի թիվ 16/1 շենքի 17-րդ (երկուսենյականոց) բնակարանի անհատույց մասնավորեցումն Արտյոմ Սարգսյանի անվամբ՝ ընտանիքի երեք անձով (ինքը, մայրը, կինը)՝ որպես ընտանիքի անդամների ընդհանուր համատեղ սեփականություն:

4) Արտյոմ Սարգսյանը 2002 թվականի հոկտեմբերի 9-ին Երևանի քաղաքապետին հասցեագրված «Բնակ. տարածության սեփականաշնորհման մասին» դիմումով հայտնել է, որ քննարկվող բնակելի տարածությունում վարձակալի հետ միասին բնակելի մակերեսի իրավունքով բնակվում են՝ մայրը՝ Հասմիկ Աբրահամյանը, կինը՝ 1963 թվականին ծնված Դիմողը: Դիմողի համաձայնությամբ է բնակարանն Արտյոմ Սարգսյանի անվամբ սեփականացվել:

5) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2002 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 446470 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-33 մատյանի 199 համարի տակ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման հիման վրա գրանցվել է Արտյոմ Սարգսյանի, Հասմիկ Աբրահամյանի և Դիմողի սեփականության իրավունքը՝ Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ (65,4քմ մակերեսով) բնակարանի նկատմամբ:

6) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 2726588 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-003 4-114 մատյանի 097 համարի տակ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման հիման վրա գրանցվել է Արտյոմ Սարգսյանի, Հասմիկ Աբրահամյանի և Դիմողի սեփականության իրավունքը՝ Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի թիվ 16/1 շենքի 17-րդ (66,9քմ մակերեսով) բնակարանի (համատեղ սեփականություն), ինչպես նաև որոշակի մակերեսով հողամասի (բաժնային սեփականություն) նկատմամբ:

7) Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործով իր որոշման պատճառաբանական մասում նշել է.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հիմքում պետք է ընկած լինեն այդ գույքի նկատմամբ համապատասխան իրավունքները, սահմանափակումները, ծագումը, փոխանցումը, փոփոխումը կամ դադարումը հաստատող անհրաժեշտ և բավարար փաստաթղթեր, որոնց առկայության դեպքում միայն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կարող է լինել իրավաչափ:

(...)

Փաստորեն, Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման հիմքում ընկած՝ մասնավորեցման գործընթացում Գայանե Մանուկյանն է ներկայացվել որպես Արտյոմ Սարգսյանի կին: Հատկանշական է, որ Գայանե Մանուկյանի՝ Արտյոմ Սարգսյանի կինը լինելու վերաբերյալ նշում պարունակում է նաև թիվ 001214 օրդերը, որի մասին նշում է կատարված Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ: Ավելին, հենց Գայանե Մանուկյանն է տվել իր համաձայնությունը բնակարանը Արտյոմ Սարգսյանի անվամբ սեփականացվելու վերաբերյալ:

Մյուս կողմից՝ Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման ընդունման ժամանակ, ըստ գործում առկա՝ Երևանի քաղաքապետարանի ՔԿԱԳ Շենգավիթ տարածքային բաժնի պետի 26.10.2017 թվականի «Ամուսնության ակտի գրանցման մասին» տեղեկանքի, գրանցված է եղել Արտյոմ Սարգսյանի և Գայանե Նազարյանի ամուսնությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա՝ «կինը» նշումը հնարավորություն չի տալիս միանշանակ կերպով նույնականացնել դրա հասցեատիրոջը**, քանի որ մի կողմից այդ որոշման մեջ առկա չեն այլ նույնականացնող տվյալներ, մյուս կողմից՝ գործում առկա են հակասական տվյալներ, քանի որ Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման հիմքում ընկած՝ մասնավորեցման գործընթացում և թիվ 001214 օրդերում որպես Արտյոմ Սարգսյանի կին ներկայացվել է Գայանե Մանուկյանը, ով էլ տվել է իր համաձայնությունը բնակարանն Արտյոմ Սարգսյանի անվամբ սեփականացվելու վերաբերյալ, մինչդեռ այդ որոշման ընդունման ժամանակ Արտյոմ Սարգսյանի հետ օրինական ամուսնության մեջ է գտնվել ոչ թե Գայանե Մանուկյանը, այլ՝ Գայանե Նազարյանը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ինչպես Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման, այնպես էլ սույն գործում առկա մյուս նյութերի ուսումնասիրության արդյունքում **հնարավոր չէ միանշանակ կերպով պնդել, որ այդ որոշման մեջ առկա «կինը» նշումը վերաբերում է հենց Գայանե Մանուկյանին**, այն է՝ պարզ չէ, թե Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշումն այդ մասով ում է ուղղված:

(...)

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա ձևակերպումից տվյալ դեպքում **պարզ չէ, թե դրա հասցեատերն իսկապես Գայանե Մանուկյանն է, թե՛ ոչ, հետևաբար նշված փաստաթղթի հիման վրա Գայանե Մանուկյանի անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի գրանցումն իրավաչափ չէ**: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման՝ Գայանե Մանուկյանին ուղղված լինելու հանգամանքը միանշանակ չլինելն ինքնին ոչ իրավաչափ է դարձնում սույն գործով վիճարկվող պետական գրանցումը՝ **հանգեցնելով հայցի բավարարմանը (...)**»:

8) Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ Ռուզաննա Հակոբյանը և նույն պալատի դատավոր Ստեփան Միքայելյանը, թիվ ՎԵ/12439/05/17 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմանը կից հրապարակել են իրենց հատուկ կարծիքը, որում, ի թիվս մեծամասնության դիրքորոշման հետ անհամաձայնության հիմք ծառայած իրավական այլ փաստարկների, մասնավորապես, վարչական գործով իրավական շահագրգռվածության հարցի վերաբերյալ, նշել են, որ.

«Ամբողջ վերոգրյալի արդյունքում եզրահանգում ենք, որ նման պայմաններում խնդրահարույց է դառնում նաև Գայանե Նազարյանի, սույն գործով վիճարկման հայց ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը, քանի որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ վերջինս «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի իմաստով բնակարանի սեփականաշնորհման ժամանակ կարող էր հանդիսանալ սեփականաշնորհման սուբյեկտ և հավակնել Հր. Քոչար փողոցի թիվ 16/1 շենքի թիվ 17 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն:

(...)

ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած վերը նշված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում ենք, որ **Արտյոմ Սարգսյանի և Գայանե Նազարյանի միջև գրանցված ամուսնության փաստն ինքնին բավարար չէ Գայանե Մանուկյանի անվամբ Հր. Քոչար փողոցի թիվ 16/1 շենքի թիվ 17 բնակարանի նկատմամբ կատարված գրանցումը վերացնելու պահանջով հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը հաստատված համարելու համար**: Ավելին, Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա «կինը» գրառումը ևս չի կարող հիմք հանդիսանալ Գայանե Նազարյանի՝ սույն գործով «շահագրգիռ անձ» լինելը փաստելու համար, ուստի նշված հարցի պարզումը ևս տվյալ դեպքում

գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու համար անհրաժեշտ նախապայման է:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ սույն գործով ըստ էության ճիշտ դատական ակտ կայացնելու համար պարտադիր կերպով պետք է պարզվեն հետևյալ հարցերը.

ա) Գայանե Մանուկյանի անվամբ Հր. Քոչար փողոցի թիվ 16/1 շենքի թիվ 17 բնակարանի նկատմամբ կատարված կոնկրետ որ՝ Առաջին, թե Երկրորդ գրանցումն է տվյալ դեպքում հանդիսանում վիճարկման առարկա,

բ) արդյո՞ք Գայանե Նազարյանը հանդիսանում է սույն գործով վիճարկման հայց ներկայացնելու իրական շահ ունեցող սուբյեկտ՝ «շահագրգիռ անձ»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը հայտնել է, որ Երևան քաղաքի Լենինյան շրջանի ժողովրդական դատարանի 1987 թվականի մայիսի 6-ի վճռով Արտյոմ Սարգսյանին թույլատրվել է ամուսնալուծվել Գայանե Նազարյանից. վճիռն օրինական ուժի մեջ է մտել 1987 թվականի մայիսի 21-ին, սակայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում այն գրանցվել է 2006 թվականի դեկտեմբերի 15-ին: Իր հերթին, Դիմողը և Արտյոմ Սարգսյանը 2000-2008 թվականներին գտնվել են փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ:

Դիմողը նշել է, որ իր հետ համատեղ կյանքի ընթացքում՝ 2002 թվականին Արտյոմ Սարգսյանը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան, որով հայտնել է, որ ինքը, կինը՝ Դիմողը, և մայրը՝ Հասմիկ Աբրահամյանը, միասին բնակվում են Երևան քաղաքի Հր. Քոչարի փողոցի հ. 16/1 շենքի հ. 17 երկու սենյականոց բնակարանում, առկա է վերջիններիս գրավոր համաձայնությունը բնակարանի սեփականաշնորհման վերաբերյալ, և խնդրել է բնակարանը սեփականաշնորհել իրենց անվամբ: Դիմողը հաջորդիվ նշել է նաև, որ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշմամբ դիմումը բավարարվել է. որոշման ընդունման հիմք է հանդիսացել նաև 2002 թվականի օգոստոսի 21-ին տրված թիվ 001214 օրդերը, համաձայն որի՝ նշված հասցեում գտնվող բնակարանը զբաղեցնելու իրավունք ունեն երեք անձինք՝ Արտյոմ Սարգսյանը, Հասմիկ Աբրահամյանը և ինքը՝ Դիմողը:

Ըստ Դիմողի՝ Վճռաբեկ դատարանը գործով որոշում կայացնելիս Արտյոմ Սարգսյանի և Գայանե Նազարյանի ամուսնալուծության պահին է համարել ոչ թե ամուսնալուծության մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այլ այդ վճռի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում համապատասխան գրանցման կատարումը:

Դիմողի պնդմամբ Օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների հակասականությունն իրավական որոշակիության խնդիրներ է առաջացրել իրավակիրառ պրակտիկայում. մի կողմից առկա է լինում դատարանի օրինական

ուժի մեջ մտած վճիռ, որի համաձայն ամուսնությունը լուծված է, և, հետևաբար պետք է ողջամտորեն ակնկալել, որ այդ պահից դադարել է իրավահարաբերությունը, իսկ մյուս կողմից ամուսնությունը դադարած է համարվում գրանցվելու պահից:

Դիմողը նշում է, որ ամուսինների իրավունքները և պարտականությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում համապատասխան գրանցումը կատարելուց հետո միայն դադարած համարելու դեպքում կստացվի, որ դատարանի օրինական ուժի մետ մտած վճիռը ստորադասվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից կատարված պետական գրանցմանը:

Դիմողը գտնում է, որ ամուսնությունը լուծելու դեպքում անձինք դադարում են լինել ամուսիններ, և դադարում է նրանց՝ որպես ամուսիններ, բոլոր իրավունքներն ու պարտականությունները, իսկ Օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված ամուսնության դադարումը պետական մարմնի կողմից ամուսնալուծությունը հաշվառելուն ուղղված գործընթաց է, որի նպատակն ամուսնալուծությունը պետական գրանցման ակտով ամրագրելն է: Հակառակ դեպքում, ըստ Դիմողի, Օրենսգրքի 40-րդ հոդվածը հակասում է Սահմանադրությանը, քանի որ իմաստագրկում է դատական պաշտպանությունը:

Դիմողը գտել է նաև, որ ամուսնությունը՝ որպես երևույթ, և դրա պետական գրանցումը չի կարելի նույնականացնել: Առաջինն ինքնավար հասկացություն է, իսկ դրա առկայությունը որոշվում է բովանդակային իմաստով, մինչդեռ ամուսնության գրանցումն ընթացակարգ է, որի նպատակն է ամուսնության իրավունքը, ինչպես նաև այլոց իրավունքները և հասարակական կարգը պաշտպանելը:

Վիճարկվող դրույթները, ըստ Դիմողի, բավարար չափով որոշակի չեն, հնարավորություն չեն տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին, քանի որ հստակ չէ, թե որ պահից են դադարում ամուսինների միջև իրավահարաբերությունները:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածները չեն բավարարում իրավական որոշակիության, հստակության և կանխատեսելիության չափանիշները, իսկ դրանց իրավակիրառ պրակտիկայի կողմից հաղորդած բովանդակությունը հանգեցրել է Դիմողի սեփականության իրավունքի խախտման, քանի որ նորմերի մեկնաբանման արդյունքում Դիմողը զրկվել է իր սեփականությունից:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև Պատասխանողը) նշում է, որ Օրենսգրքի 40-րդ հոդվածը նախատեսում է ամուսնության դադարման պահը: Ըստ Պատասխանողի՝ օրենսդիրն օգտագործում է «ամուսնության լուծում» և

«ամուսնության դադարում» եզրույթները՝ նպատակ ունենալով ավելի մատչելի դարձնել ինչպես դատական կարգով ամուսնալուծության հետ կապված իրավակարգավորումները, այնպես էլ հստակեցնել, թե ամուսնալուծությունից հետո ո՞ր պահին է ամուսնությունը համարվում դադարած:

Պատասխանողը նշում է, որ դատարանի կողմից ամուսնության լուծմամբ դեռևս ամուսինների իրավունքները և պարտականությունները չեն կարող համարվել դադարած. դատարանի վճիռը պետք է գրանցում ստանա քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում՝ դադարեցնելով ամուսնությունը:

Պատասխանողը գտնում է, որ ամուսնալուծության մասին օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության դեպքում հնարավոր չէ որջամտորեն ակնկալել, որ այդ պահից իրավահարաբերությունը դադարել է, քանի որ Օրենսագրքում առկա է հստակ դրույթ, որով սահմանվում է ամուսնության դադարման պահը, և միայն այդ ընթացակարգի ամբողջական պահպանումն է հանգեցնում ամուսնության դադարմանը: Պատասխանողը նշում է նաև, որ ամուսնալուծությունը միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում հաշվառելու պահից այն դադարած համարելը որևէ կերպ չի կարող դատարանի վճռի ստորադասման պատճառ հանդիսանալ, քանի որ դատարանի կողմից կայացված վճիռն այն իրավական հիմքն է, որով ամուսինները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում կարող են դադարեցնել ամուսնությունը:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը եզրահանգում է, որ Օրենսագրքի 33 և 40-րդ հոդվածները կարգավորում են ամուսինների ամուսնալուծության գործընթացը, և յուրաքանչյուրն ունի իր իրավակարգավորող դերն ու նշանակությունը:

Միաժամանակ, ըստ Պատասխանողի՝ Դիմողն օրենքի համապատասխան նորմերի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե նորմի և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, այլ նրա ներկայացրած պնդումներն ուղղված են վիճարկվող նորմի՝ դատարանների տված մեկնաբանությանը: Նշվում է, որ Դիմողը, ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց, իրականում առաջ է քաշում իրավանորմի կիրառման իրավաչափության հարց:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող նորմի և դրա կիրառման պրակտիկայի սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

4.1. արդյո՞ք վիճարկվող նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանությունը Դիմողի գործով հանգեցրել է Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված նրա սեփականության իրավունքին միջամտության,

4.2. նախորդ հարցին դրական պատասխանելու դեպքում արդյո՞ք վիճարկվող նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանությամբ միջամտությունը համապատասխանում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սույն սահմանադրական վեճի լուծման նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առաջնահերթությամբ անդրադառնալ Դիմողի կողմից վիճարկվող նորմի՝ Դիմողի նկատմամբ կիրառման հանգամանքներին:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ վերահաստատում է 2021 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-1573 որոշմամբ իր արտահայտած դիրքորոշումն առ այն, որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում դիմողի նկատմամբ իրավական հետևանքների առաջացումը դատական ակտում անմիջականորեն չվկայակոչված նորմերով, և հետևաբար, «նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառում» է համարվում նաև այն դեպքը, երբ դատական ակտերում բացակայում է նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթի վկայակոչում, սակայն դատական ակտերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դիմողի համար իրավական հետևանքներ է առաջացրել չվկայակոչված դրույթի սույն որոշմամբ նկարագրված մեկնաբանությամբ կիրառումը:

Դիմողի նկատմամբ սույն գործով վիճարկվող նորմը կիրառվել է երկու առումներով.

1. **Նախ**, վիճարկվող նորմի մեկնաբանության և կիրառման արդյունքում Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Դիմողի անվան և ծննդյան տարեթվի հետ մեկտեղ նշված «կինը» բառը որպես գրանցված ամուսնության մեջ գտնվող «ամուսին» հասկացության փոխարինող, եզրահանգել է, որ բնակարանի անհատույց մասնավորեցման մասին որոշման մեջ նշված «կինը» հասցեատիրոջը նույնականացնել հնարավոր չէ, ինչն էլ հանգեցրել է մասնավորեցված բնակարանի նկատմամբ Դիմողի ունեցած ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելուն, և

2. **Երկրորդ**, Դիմողի՝ մասնավորեցված բնակարանի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելուն ուղղված վարչական դատավարությունն սկսվել է հայցվորի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, քանի որ

վարչական դատարանում և Վճռաբեկ դատարանում դրա քննության ընթացքում գործել է հայցվորի՝ վարչական դատավարությունում «շահագրգիռ անձ» հանդիսանալու շարունակական և անփոփոխ կանխավարկածը:

Անդրադառնալով Դիմողի նկատմամբ վիճարկվող նորմի կիրառման վերը նշված **առաջին** դրսևորմանը՝ Սահմանադրական դատարանը նկատում է, որ թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործով Վճռաբեկ դատարանը քննության առարկա էր դարձրել այն հանգամանքը, թե «արդյոք տվյալ դեպքում պարզ է, թե ով է Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ նշված՝ Արտյոմ Սարգսյանի կինը»: Այս հարցադրման առնչությամբ Վճռաբեկ դատարանը գտել էր, որ թեև բնակելի տարածության օրդերում, ինչպես նաև բնակարանի անհատույց մասնավորեցման գործընթացին վերաբերող փաստաթղթերում որպես Ա. Սարգսյանի «կին» հիշատակվում է Դիմողը, սակայն հաշվի առնելով, որ բնակարանն անհատույց մասնավորեցնելու մասին Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշումը կայացնելիս գրանցված է եղել Արտյոմ Սարգսյանի և Գայանե Նազարյանի ամուսնությունը՝ հնարավոր չէր միանշանակ պնդել, որ հիշյալ որոշման վեջ որպես հասցեատեր նշված «կինը» նույնանում է հենց Դիմողի հետ: Միաժամանակ, Դիմողի սեփականության իրավունքի դադարեցմանն ուղղված վարչական գործի վերջնարդյունքը չի հանգեցրել նաև նույն գործով Գայանե Նազարյանի ենթադրաբար խախտված որևէ իրավունքի կամ ազատության վերականգնման, քանի որ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա՝ «կինը» նշումը **հնարավորություն չի տալիս միանշանակ կերպով նույնականացնել դրա հասցեատիրոջը, քանի որ մի կողմից այդ որոշման մեջ առկա չեն այլ նույնականացնող տվյալներ**, մյուս կողմից՝ գործում առկա են հակասական տվյալներ (...):»:

Թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ թեև վիճարկվող նորմին ձևական առումով վկայակոչում չի կատարվել, սակայն բնակարանն անհատույց մասնավորեցնելու մասին Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշմամբ «կինը» նշման առնչությամբ համապատասխան հասցեատիրոջը որոշակիացնելու հարցում Վճռաբեկ դատարանը վերաբերելի է համարել մասնավորեցման պահին գործող Օրենսգրքի 40-րդ հոդվածը, և դրա կիրառմամբ կասկածի տակ է դրվել Դիմողի սեփականության իրավունքի ծագումը, և այդ հիմքով վերացվել վերջինիս անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ հանգեցնելով հիշյալ բնակարանի նկատմամբ Դիմողի ունեցած ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի դադարեցման:

Արդյունքում՝ Դիմողի գործով վիճարկվող նորմի կիրառմամբ ստացած մեկնաբանությամբ հանգեցվել Երևանի քաղաքապետի 2002 թվականի

հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման հասցեատիրոջը (Արտյոմ Սարգսյանի կնոջ մասով) նույնականացնելու անհնարինության մասին եզրակացության՝ Վճռաբեկ դատարանն օրինական ուժ է տվել գործով վարչական դատարանի վճռին, որով անվավեր է ճանաչվել Դիմողի՝ բնակարանի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դիմողի նկատմամբ վիճարկվող նորմի կիրառման **երկրորդ** դրսևորման արդյունքում Գայանե Նազարյանի ներկայացրած վիճարկման հայցի հիման վրա թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործի՝ Վճռաբեկ դատարանում քննության ընթացքում թեպետ դատարանը հանգել էր Դիմողին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևանի քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանն անհատույց մասնավորեցնելու մասին որոշման մեջ նշված հասցեատիրոջը (Արտյոմ Սարգսյանի կնոջ մասով) նույնականացնելու անհնարինության մասին եզրակացության, այդուհանդերձ դատական վարույթը շարունակվել է վիճարկվող նորմի կիրառման հետևանքով ձևավորված՝ հայցվոր Գայանե Նազարյանի՝ վարչական դատավարությունում «շահագրգիռ անձ» հանդիսանալու մասին կանխավարկածով, որը պայմանավորված է նրանով, որ խնդրո առարկա գույքի մասնավորեցման պահին գործող և սույն գործով վիճարկվող նորմի մեկնաբանության և կիրառման իմաստով Արտյոմ Սարգսյանի հետ գրանցված է եղել հայցվորի ամուսնությունը:

Արդյունքում՝ վիճարկվող նորմի՝ Դիմողի նկատմամբ կիրառման վերը շարադրված երկու դրսևորումները հիմք են հանդիսացել Դիմողի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելով Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանի նկատմամբ նրա ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը սահմանափակելու համար: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը սույն գործի քննությամբ սույն որոշման 4-րդ կետում շարադրված հարցադրումներին անդրադառնում է միայն վիճարկվող նորմի՝ Դիմողի նկատմամբ կիրառման վերը շարադրված երկու դրսևորումներում ստացած մեկնաբանության սահմանադրականության ստուգման շրջանակում:

5.2. Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման խնդրին՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, այդ սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Միաժամանակ, նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը կարևորել է հիշատակված պայմանների առկայությունը՝ իրավունքն իրավաչափ սահմանափակելու համար (տե՛ս նաև 2018 թվականի նոյեմբերի 27-ի ՍԴՈ-1436 որոշումը):

Այս առնչությամբ անձի սեփականության իրավունքին միջամտությունը՝ այն սահմանափակելու ձևով, Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի հետ կարող է համատեղելի լինել, ի թիվս սեփականության սահմանափակման այլ պայմանների առկայության, բացառապես նույն դրույթով նախատեսված երկու սահմանադրական նպատակներից առնվազն մեկը հետապնդելու շրջանակներում՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանի նկատմամբ Դիմողի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքին միջամտությունը հանգեցրել է սեփականության իրավունքի սահմանափակման ամենախիստ աստիճանին՝ սեփականությունից զրկելուն դատարանի կողմից՝ վարչական դատավարության շրջանակներում վիճարկման հայցի բավարարման արդյունքում:

Հաշվի առնելով Դիմողին վերաբերող վարչական գործի հարուցման հիմքը և գործի բնույթը՝ նման դատավարության նպատակը համընկնում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության» սահմանադրական նպատակին: Ի թիվս այլ դատավարական գործիքների՝ հիշյալ սահմանադրական նպատակի բավարարմանն է ուղղված նաև վիճարկման հայցի ինստիտուտը:

Վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա: Նման հայց հարուցելու համար պարտադիր պայման է հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը՝ նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, համաձայն որի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ Վարչական դատավարության օրենսգրքով

սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Անդրադառնալով «շահագրգիռ անձ» հասկացությանը՝ Սահմանադրական դատարանը 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշմամբ նշել է, որ «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ (...) վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն»:

Անդրադառնալով դատարան դիմելու իրավունքին՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԴՈ-906 որոշմամբ նշել է, որ «Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված դրույթների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են:

(...)

Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը:

(...)

(...) Բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: **Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը, որի իրացման դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է:**

(...)

Վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի („Actio popularis“) առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»:

Անդրադառնալով վարչական դատավարությունում «շահագրգռո անձ» հասկացությանը և դրա կարգավիճակի որոշակիացման խնդրին՝ Վճռաբեկ դատարանն առանձին գործերով նշել է, մասնավորապես, հետևյալը.

1. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը: Նշվածից հետևում է նաև, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգռո անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները» (Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7304/05/14 վարչական գործով 2022 թվականի հունվարի 21-ի որոշում):

2. «Սահմանադրությամբ և Կոնվենցիայով («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի

նոյեմբերի 4-ի կոնվենցիա, նշումը Սահմանադրական դատարանինն է) նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ոեալ)» իրավունքներ, որոնք խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անձանց՝ իրենց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունք տրամադրելով հանդերձ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, վերջիններիս համար, սակայն, չի ընձեռում հանրության շահերը պաշտպանելու հնարավորություն, այն է՝ չի թույլատրում անձանց իրականացնել վարչական մարմինների վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության իրավաչափության օբյեկտիվ վերահսկողություն: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար, պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ որոշում, գործողություն կամ անգործություն, այլև նշված ոչ իրավաչափ որոշման, գործողության կամ անգործության արդյունքում անձանց սուբյեկտիվ իրավունքների խախտում կամ խախտման առաջացման վտանգ:

Այսինքն՝ վարչական արդարադատություն, բացառությամբ նույն օրենսգրքով սահմանված դեպքերի, կարող է հայցել միայն այն անձը, ով հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, կամ այլ կերպ ասած՝ այն անձը, ում սուբյեկտիվ իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական արդարադատություն հայցող անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերից յուրաքանչյուրով պետք է պարզվի՝ արդյոք հայցվորը հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, այսինքն՝ «շահագրգիռ անձ», քանի որ միայն իրավական շահագրգռվածության առկայության պարագայում անձը կարող է ակնկալել իր խախտված իրավունքների դատական պաշտպանություն: Ընդ որում, իրավունքների խախտման, կամ այլ կերպ ասած՝ դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ լինելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է հենց հայցվորը» (Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/9190/05/13 վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշում):

3. «Վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1) վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2) վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Այսինքն՝ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնապատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են» (Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով 2013 թվականի ապրիլի 6-ի որոշում):

5.3. Սահմանադրական դատարանը, վերը նշված իրավական կարգավորումները և Սահմանադրական դատարանի դիրքորոշումները կիրառելով Օրենսգրքի վիճարկվող 40-րդ հոդվածի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանության սահմանադրականությունը ստուգելիս, հարկ է համարում արձանագրել, որ Դիմողի նկատմամբ վիճարկվող նորմի կիրառման վերը նկարագրված առաջին դրսևորումը, այսինքն՝ Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանի նկատմամբ իրավունքներ նախատեսող փաստաթղթերում (օրդեր, թիվ 1818-Ա որոշում) նշված «կինը» հասկացությունը որպես «ամուսին» հասկացությանը համարժեք ընդունելը՝ հայցվոր Գայանե Նազարյանի՝ Արտյոմ Սարգսյանի հետ ամուսնությունը գրանցված լինելու փաստի և Դիմողի անվան կողքին «կինը» նշված լինելու պայմաններում, ըստ Վճռաբեկ դատարանի, բնակարանն անհատույց մասնավորեցնելու մասին որոշման հասցեատիրոջ նույնականացման անորոշություն է ստեղծել: Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **«տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա՝ «կինը» նշումը հնարավորություն չի տալիս միանշանակ կերպով նույնականացնել դրա հասցեատիրոջը, քանի որ մի կողմից այդ որոշման մեջ առկա չեն այլ նույնականացնող տվյալներ, մյուս կողմից՝ գործում առկա են հակասական տվյալներ, քանի որ Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման հիմքում ընկած՝ մասնավորեցման գործընթացում և թիվ 001214 օրդերում որպես Արտյոմ Սարգսյանի կին ներկայացվել է Գայանե Մանուկյանը, ով էլ տվել է իր**

համաձայնությունը բնակարանն Արտյոմ Սարգսյանի անվամբ սեփականացվելու վերաբերյալ, մինչդեռ այդ որոշման ընդունման ժամանակ Արտյոմ Սարգսյանի հետ օրինական ամուսնության մեջ է գտնվել ոչ թե Գայանե Մանուկյանը, այլ՝ Գայանե Նազարյանը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ինչպես Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման, այնպես էլ սույն գործում առկա մյուս նյութերի ուսումնասիրության արդյունքում **հնարավոր չէ միանշանակ կերպով պնդել, որ այդ որոշման մեջ առկա «կինը» նշումը վերաբերում է հենց Գայանե Մանուկյանին**, այն է՝ պարզ չէ, թե Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշումն այդ մասով ում է ուղղված»:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող նորմի կիրառման նպատակը եղել է փաստի գնահատումը, ինչը համապատասխան դատարանի, սույն դեպքում՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունների տիրույթում է: Սահմանադրական դատարանն իրավասու չէ կոնկրետ գործով փաստերի գնահատման հարցում փոխարինել համապատասխան, սույն դեպքում՝ Վճռաբեկ դատարանին: Այս պատճառով Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել, թե իրականում որքանով է անհնար եղել Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման հասցեատիրոջ նույնականացումը, և թե պետական բնակարանային ֆոնդի մասնավորեցման իրավահարաբերությունների շահառուի նույնականացման փաստի գնահատման համար վիճարկվող նորմը որքանով է վերաբերելի եղել: Փոխարենը, սույն սահմանադրական վեճի շրջանակում փաստական հանգամանքներին անդրադառնալիս Սահմանադրական դատարանն ամբողջ ծավալով հիմք է ընդունում փաստերին՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված գնահատականը՝ վիճարկվող նորմի սահմանադրականության ստուգումն իրականացնելով բացառապես Վճռաբեկ դատարանի կողմից հաստատված փաստերի սահմաններում:

Այս մոտեցման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանն անհատույց մասնավորեցնելու մասին որոշման մեջ «կինը» նշման առկայությամբ և վիճարկվող դրույթի կիրառմամբ դրա հասցեատիրոջ նույնականացման անհնարինության հաստատումը որոշիչ նշանակություն ունի վիճարկվող նորմի կիրառման երկրորդ դրսևորման համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տեղ գտած **«տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա՝ «կինը» նշումը հնարավորություն չի տալիս միանշանակ կերպով նույնականացնել դրա հասցեատիրոջը»** գնահատականը, ինչպես նաև նույն որոշմամբ արձանագրված՝ վերը նշված իրավահաստատող փաստաթղթի հասցեատիրոջ նույնականացման անհնարինության մասին եզրահանգումները («Երևանի քաղաքապետի 14.10.2002

թվականի թիվ 1818-Ա որոշման մեջ առկա ձևակերպումից տվյալ դեպքում **պարզ չէ, թե դրա հասցեատերն իսկապես Գայանե Մանուկյանն է, թե՛ ոչ**», ինչպես նաև՝ «Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշման, այնպես էլ սույն գործում առկա մյուս նյութերի ուսումնասիրության արդյունքում **հնարավոր չէ միանշանակ կերպով պնդել, որ այդ որոշման մեջ առկա «կինը» նշումը վերաբերում է հենց Գայանե Մանուկյանին**, այն է՝ պարզ չէ, թե Երևանի քաղաքապետի 14.10.2002 թվականի թիվ 1818-Ա որոշումն այդ մասով ում է ուղղված») ուղղակի և որոշիչ ազդեցություն ունեն ոչ միայն Դիմողի իրավունքի պետական գրանցման իրավաչափության, այլ նաև Դիմողի գործով հայցվորի՝ «շահագրգիռ անձի» կարգավիճակ ունենալու համար: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումները վերաբերում են ոչ միայն Դիմողի՝ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման հասցեատերը լինելու անորոշությանը, այլև նույն որոշմամբ առհասարակ որևէ այլ անձի՝ որպես դրա հասցեատեր (բացի Արտյոմ Սարգսյանից և Հասմիկ Աբրահամյանից) նույնականացման հնարավորությանը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Դիմողի սեփականության իրավունքի պետական գրանցման անվավերության պահանջ պարունակող հայցադիմումը քննության է ընդունվել վիճարկվող նորմի այնպիսի մեկնաբանության կիրառմամբ, որ Դիմողի գործով հայցվորը՝ Գայանե Նազարյանը, Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշման կայացման պահին Արտյոմ Սարգսյանի հետ գրանցված ամուսնության մեջ գտնվելու փաստի ուժով ունեցել է վարչական դատավարության օրենսդրության իմաստով «շահագրգիռ անձի» կարգավիճակ՝ հիշյալ փաստաթղթերում «կինը» նշման փաստի բերումով: Վիճարկվող իրավանորմի սույն գործով ստացած մեկնաբանությամբ կիրառումը թույլ է տվել Գայանե Նազարյանին դիտարկել որպես «շահագրգիռ անձ»: Մի հանգամանք, որն առանցքային նախապայման է վարչական դատավարության շրջանակում Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված վարույթի հարուցման համար, քանի որ առանց դրա վարույթն անհնար կլիներ, իսկ վարույթի հետագա փուլերում հայցվորի՝ վարչական դատավարության իմաստով «շահագրգիռ անձի» կարգավիճակ չունենալու բացահայտումը պետք է բացառեր Դիմողի վիճարկվող գույքային իրավունքին միջամտությունը:

Ձեռնպահ մնալով Դիմողի վարչական գործով դատարանների կողմից անձանց դատավարական կարգավիճակի որոշմանն ուղղված լիազորությունների իրականացման վերաբերյալ գնահատականից՝ Սահմանադրական դատարանը, այդուհանդերձ, արձանագրում է, որ այս հարցն ունի կիրառված նորմի մեկնաբանության սահմանադրականության ստուգման համար կարևոր նշանակություն, քանի որ այն որոշիչ գործոն է անձի սեփականության՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախա-

տեսված սահմանափակման սահմանադրական նպատակի նույնականացման համար: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկվող նորմի ստացած մեկնաբանության արդյունքում Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակմանը հանգեցրած միջամտությանը վերաբերող վարչական դատավարությունում հայցվորի՝ «շահագրգիռ անձի» կարգավիճակի հարցին:

Դիմողի նկատմամբ հարուցված վարչական գործը, ի սկզբանե հարուցված լինելով վիճարկվող նորմի մեկնաբանության և կիրառման արդյունքում հայցվորի «շահագրգիռ անձ» լինելու կանխավարկածի հիման վրա, նպատակ է հետապնդել՝ ապահովելու վերջինիս ենթադրյալ խախտված իրավունքի վերականգնումը վարչական արդարադատության միջոցով:

Ավելին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել այն իրողությունը, որ Հայցվորի կողմից վերաքննիչ վարչական դատարանի 2019 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանը 2019 թվականի դեկտեմբերի 9-ին վարույթ էր ընդունել Վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ վերաքննիչ վարչական դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի և Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել էր արդարադատության բուն էությունը:

Եվ թեպետ Վճռաբեկ դատարանի որոշմամբ դադարեցվել է Դիմողի սեփականության իրավունքը հիշյալ բնակարանի նկատմամբ, Վճռաբեկ դատարանի կողմից բնակարանի մասնավորեցման հարաբերություններում իրավահաստատող փաստաթղթերի հասցեատիրոջ նույնականացման անհնարինության գնահատականը, միաժամանակ, բացառել էր նաև (Արտյոմ Սարգսյանից և Հասմիկ Աբրահամյանից բացի) որևէ այլ անձի՝ այդ թվում նաև՝ Դիմողի գործով հայցվորի իրավունքի ճանաչումը մասնավորեցված բնակարանի նկատմամբ: Արդյունքում՝ վիճարկվող նորմի՝ Դիմողի գործով ստացված մեկնաբանությամբ ձևավորված կանխավարկածի բերումով «շահագրգիռ անձի» ենթադրաբար խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված վարույթի հետևանքային ազդեցությունը եղել է (1) Դիմողին իր սեփականության իրավունքից զրկելու միջոցով դրա սահմանափակումը և (2) վիճարկվող գույքի նկատմամբ որևէ այլ անձի սեփականության իրավունքը ծագելու համար Երևանի քաղաքապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1818-Ա որոշմամբ նշված հասցեատիրոջ, այդ թվում՝ հայցվորի հետ, նույնականացման անհնարինությունը:

Նկարագրված իրավական հետևանքին հանգեցրած վարչական դատավարությունը չի հետապնդել Դիմողի գործով հայցվորից բացի որևէ այլ անձի իրավունքների պաշտպանության նպատակ և, քանի որ Դիմողի գործով ներգրավված մյուս երկու համասեփականատերերը՝ Արտյոմ Սարգսյանը և Հասմիկ Աբրահամյանը նման դատավարական պահանջներ առհասարակ չէին ներկայացրել: Ավելին, վերջիններս առհասարակ չէին էլ բողոքարկել վերաքննիչ վարչական դատարանի 2019 թվականի հունիսի 14-ի որոշումը Վճռաբեկ դատարան:

Այսինքն՝ սեփականությունից զրկելու եղանակով անձի սեփականության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի համարվել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանադրական նպատակներից «այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության» հետ, եթե այն չի հետապնդում որևէ անձի իրավունքի կամ ազատության պաշտպանության նպատակ, ինչը և Դիմողի գործով ձևավորված իրավիճակն է՝ ենթադրաբար խախտված իրավունքը կրողի նույնականացման անհնարինության պատճառով: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը չի տեսնում սույն գործում նաև որևէ հանգամանք, որը նրան հիմք կտար եզրահանգելու, որ Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակումը հետապնդել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով «հանրության շահերի պաշտպանության» սահմանադրական նպատակին ուղղված իրավական գործընթաց:

Այսինքն՝ Դիմողի գործով վիճարկվող նորմի կիրառումը հանգեցրել է նույն գործով հայցվորի՝ որպես Դիմողի բնակարանի մասնավորեցման պահին Արտյոմ Սարգսյանի գրանցված ամուսնու, «շահագրգիռ անձ» լինելու անվիճարկելի կանխավարկածին, որն անփոփոխ շարունակել էր գործել նույնիսկ այն պայմաններում, երբ Վճռաբեկ դատարանն արձանագրել էր Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակմանը հանգեցրած վարույթի շրջանակներում իրավական շահագրգռվածություն ունեցող անձի նույնականացման օբյեկտիվ անհնարինությունը: Արդյունքում՝ Դիմողի գործով վիճարկվող նորմի կիրառմամբ դրան տրված մեկնաբանությունը հնարավորություն է ընձեռում սեփականության իրավունքի այնպիսի սահմանափակման, որը համատեղելի չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որևէ սահմանադրական նպատակի հետ, քանի որ այն հավասարապես չի հետապնդել ո՛չ որևէ անձի հիմնական իրավունքի կամ ազատության, ո՛չ էլ՝ հանրության շահերի պաշտպանության նպատակ, քանզի Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի ուժը կորցրած օրենսգրքի 40-րդ հոդվածը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածը համապատասխան

նում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակն ինքնին վարչական դատավարությունում հայցվորի համար «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է նման կարգավիճակը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 40-րդ հոդվածը Դիմողի նկատմամբ կիրառվել է այն մեկնաբանությամբ, որ նրա գործով հայցվորի՝ ամուսնու կարգավիճակը բոլոր դեպքերում երաշխավորել է վերջինիս՝ շահագրգիռ անձ դիտարկվելը՝ անկախ նրանից, թե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը դա բացառել են, թե՛ ոչ: Հետևաբար՝ Դիմողի գործով Օրենսգրքի 40-րդ հոդվածը վերջինիս նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակը վարչական դատավարությունում հայցվորի համար ինքնին «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է այն:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է օրենքով սահմանված կարգով վերանայման:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴՈ-1675

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի «ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՄԴՈ-1675 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի դեկտեմբերի 26-ին Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 40-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՄԴՈ-1675 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) եզրահանգել է՝

«1. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակը վարչական դատավարությունում հայցվորի համար ինքնին «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է այն»:

Կարևորելով Սահմանադրական դատարանի կողմից արված վերլուծությունները և եզրահանգումները՝ այնուամենայնիվ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ հատուկ կարծիք հիշյալ Որոշման վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգրք) ուժի մեջ է մտել 1970 թվականի հունվարի 1-ին, ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին:

Օրենսգրքի՝ «Ամուսնությունը դադարելու ժամանակը» վերտառությամբ 40-րդ հոդվածը սահմանում է.

«Ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից»:

Ըստ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի՝ դիմողը Օրենսգրքի 40-րդ հոդվածը վիճարկում է երկու հիմքերով.

առաջին՝ դիմողի կարծիքով Օրենսգրքի 40-րդ հոդվածը չի բավարարում իրավական որոշակիության պահանջը: Մասնավորապես՝ դիմողը նշում է, որ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 4(108)2022

«Օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների հակասականությունն իրավական որոշակիության խնդիրներ է առաջացրել իրավակիրառ պրակտիկայում. մի կողմից առկա է լինում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի համաձայն՝ ամուսնությունը լուծված է, հետևաբար՝ պետք է ողջամտորեն ակնկալել, որ այդ պահից դադարել է իրավահարաբերությունը, իսկ մյուս կողմից ամուսնությունը դադարած է համարվում գրանցվելու պահից» (26.12.2022 թ. ՍԴՈ-1675 որոշում, էջ 11),

Երկրորդ՝ «Դիմողը նշում է, որ ամուսինների իրավունքները և պարտականությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում համապատասխան գրանցումը կատարելուց հետո միայն դադարած համարելու դեպքում կստացվի, որ դատարանի օրինական ուժի մետ մտած վճիռը ստորադասվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից կատարված պետական գրանցմանը» (26.12.2022 թ. ՍԴՈ-1675 որոշում, էջ 11):

Առաջին հիմքի առնչությամբ հարկ է նշել, որ իրավական որոշակիության հարցերով Սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, մասնավորապես՝ նշել է, որ «Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008 թ. ՍԴՈ-753):

Այդ առումով Օրենսգրքի 40-րդ հոդվածում իմպերատիվ կերպով սահմանված դրույթը, համաձայն որի՝ ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից, բավականաչափ հստակ է և թույլ է տալիս անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, միաժամանակ, հնարավորություն է տալիս կանխատեսել այն հետևանքները, որ կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Հարկ է նշել նաև, որ դիմողը չի վկայակոչել որևէ դատական ակտ, որով վերոհիշյալ դրույթը մեկնաբանվել է այլ բովանդակությամբ:

Ինչ վերաբերում է երկրորդ հիմքին, ապա անհրաժեշտ է նշել, որ դիմողը չի ներկայացրել համապատասխան հիմնավորումներ այն մասին, որ ամուսնալուծության վերաբերյալ դատական ակտի առկայության պայմաններում ամուսնալուծությունը միայն պետական գրանցման պահից դադարած համարվելը հակասում է Սահմանադրության որևէ դրույթի: Չհիմնավորելով վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը՝ դիմողը նշում է, որ Օրենսգրքի 40-րդ հոդվածը «հակասում է Սահմանադրությանը, քանի որ իմաստագրկում է դատական պաշտպանությունը»:

Մինչդեռ, իրավական համակարգում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ դատական ակտով հաստատված իրավունքն ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից: Դրանով որևէ կերպ չեն նսեմացվում դատական ակտերի դերը և նշանակությունը, ինչպես նաև այդ ակտերի պարտադիր լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ դիմումն ակնհայտ անհիմն է, և գործի վարույթն ենթակա էր կարճման, իսկ որոշման եզրափակիչ մասում «շահագրգիռ անձի» կարգավիճակին վերաբերող դրույթներն ուղղակիորեն կապ չունեն վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հետ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ա. ԹՈՒՆՅԱՆ

29 դեկտեմբերի 2022թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԳԱՅԱՆԵ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ (ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԵԼ Է 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ) 40-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի ՍԴՈ-1675 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1675 որոշմամբ (հրապարակվել է 2022 թվականի դեկտեմբերի 29-ին) որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակը վարչական դատավարությունում հայցվորի համար ինքնին «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է այն (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1675 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 4(108)2022

ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ներդրվեց անհատական սահմանադրական դիմումի (գանգատի) ինստիտուտը, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ապահովեց սահմանադրական արդարադատության անմիջական հասանելիություն: Նշված ինստիտուտը Սահմանադրությունում տեղ գտավ նաև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Միաժամանակ ներկայումս Սահմանադրական դատարան դիմում (գանգատ) ներկայացնելու իրավունքի իրականացման և դրա հիման վրա գործի քննության կանոնները սահմանված են Սահմանադրությամբ (168-րդ և 169-րդ հոդվածներ) և դրա հիման վրա ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով: Հետևաբար վերոնշյալ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐԻ ◆ 4(108)2022

իրավունքն անձի կողմից չի կարող իրականացվել ցանկացած միջոցի և ընթացակարգի ընտրությամբ, այլ այն կարող է իրականացվել բացառապես Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված կարգավորումների շրջանակում:

Այսպես՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ **կոնկրետ գործով**, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և **վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերոգրյալից հետևում է, որ անհատական սահմանադրական դիմումով անձը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարց, և դիմումի առարկան ուրվագծում է այն սահմանները, որոնք պետք է պահպանի Սահմանադրական դատարանը նման դիմումի հիման վրա գործը քննելիս: Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդված), ուստի չպետք է դուրս գա դիմումի առարկայի շրջանակից: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը, իմ գնահատմամբ, իրավասու չէ դիմողի փոխարեն բարձրացնել և անհատական դիմումի հիման վրա գործի շրջանակում քննարկման առարկա դարձնել այնպիսի հարց, որը դիմողի կողմից չի ներկայացվել:

Միաժամանակ ելնելով Սահմանադրական դատարանի՝ որպես Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմնի լիազորությունների սահմանադրաիրավական բովանդակությունից՝ հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի որոշումների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկություններին:

Սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որպես կանոն, բովանդակում են տվյալ գործի լուծման հիմքում դրված իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք վերաբերում են.

- ՀՀ Սահմանադրության նորմերի, միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների, օրենքների, ինչպես նաև օրենսդրության այլ ակտերի (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, դրանց սահմանադրական

արժեքանությունից բխող ընկալմանն ու կիրառմանը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը, այդ ամենի արդյունքում՝ վիճարկվող նորմի (իրավական ակտի) սահմանադրականությունը գնահատելուն,

- իրավակիրառական (այդ թվում՝ արդարադատական) պրակտիկան գնահատելուն և այդ պրակտիկայում ՀՀ Սահմանադրության նորմերը, օրենքները և իրավական այլ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությանը,

- սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ու փաստերին գնահատական տալուն» (2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշում):

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի որոշումը պետք է բովանդակի ոչ միայն որոշման ձևակերպումը (օրինակ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի դեպքում՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի վերաբերյալ եզրահանգումը և այլն), այլև դատարանի ընդունած որոշումը հիմնավորող իրավական դիրքորոշումները, այդ թվում՝ այն փաստարկները, որոնք հաստատում կամ հերքում են կողմերի պնդումները: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի որոշման կառուցվածքային մաս կազմող պատճառաբանական և եզրափակիչ մասերը սերտորեն փոխկապված են՝ ապահովելով Սահմանադրական դատարանի որոշման համանման ընկալումն իր համակարգային ամբողջականության մեջ:

Իմ գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասը պետք է բովանդակի Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը՝ Սահմանադրության համապատասխան նորմի մեկնաբանության և տվյալ գործով վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրական բովանդակության բացահայտման համատեքստում, իսկ վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կատարած եզրահանգումը պետք է անմիջականորեն բխի Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ներկայացված վերլուծություններից և արտահայտված դիրքորոշումներից:

2. Տվյալ դեպքում Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով դիմողը խնդրել է Սահմանադրության 31-րդ, 35-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին, այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 40-րդ հոդվածն «**այնքանով, որքանով**

դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված ամուսնությունը և ամուսինների՝ որպես ամուսիններ, իրավունքները և պարտականությունները դադարած է համարում միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից»:

Վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը նշել է հետևյալը.

- Օրենսգրքի 33-րդ և 40-րդ հոդվածների հակասականությունն իրավական որոշակիության խնդիրներ է առաջացրել իրավակիրառ պրակտիկայում: Մի կողմից առկա է լինում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի համաձայն ամուսնությունը լուծված է, իսկ մյուս կողմից ամուսնությունը դադարած է համարվում գրանցվելու պահից.

- վիճարկվող դրույթը բավարար չափով որոշակի չէ, հնարավորություն չի տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին, քանի որ հստակ չէ, թե որ պահից են դադարում ամուսինների միջև իրավահարաբերությունները.

- իրավակիրառ պրակտիկայում առկա են վիճարկվող դրույթի տարաբնույթ մեկնաբանություններ, մասնավորապես, թիվ ԳԴ4/0356/02/09 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ արտահայտվել է իրավական դիրքորոշում առ այն, որ ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծության մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ թիվ ՎԴ/12439/05/17 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտվել է հակասական դիրքորոշում, համաձայն որի՝ ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծության մասին վճիռը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից.

- իրավակիրառ պրակտիկայի կողմից վիճարկվող դրույթին հաղորդված բովանդակությունը հանգեցնում է սեփականության իրավունքի խախտման:

Փաստորեն, Սահմանադրական դատարանում գործի քննության առիթ հանդիսացած դիմումով դիմողը բարձրացնում է վիճարկվող դրույթում իրավական անորոշության խնդիր, որը դրսևորվում է նրանում, որ պարզ չէ, թե որ պահից են դադարում ամուսինների միջև իրավահարաբերությունները՝ դատարանի՝ ամուսնալուծության վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, թե՞ ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից, ինչն էլ, ըստ դիմողի, հանգեցնում է նաև սեփականության իրավունքի խախտման:

Մինչդեռ իմ գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանը քննարկման առարկա է դարձրել ոչ թե դիմումով բարձրացված հարցը, այլ այնպիսի հարց, որի վերաբերյալ նշում դիմումը չի պարունակում: Այսպես՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1675 որոշումը կառուցված է բացառապես վարչական դատավարությունում «շահագրգիռ անձ» հասկացության քննարկման վրա,

որը ոչ թե վիճարկվող դրույթի կարգավորման տիրույթում է գտնվում, այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը, ըստ էության, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համապատասխան դրույթին (ընդ որում, հիմնականում ընդամենը վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներ), որոշման եզրափակիչ մասում եզրահանգում է կատարել Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ: Ընդ որում, Սահմանադրական դատարանի որոշումը չի պարունակում որևէ իրավական դիրքորոշում՝ վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության և Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցի վերաբերյալ, ուստի պարզ չէ, թե Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը չբացահայտելու արդյունքում ինչի հիման վրա է ելել եզրահանգման վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասից կարելի է եզրակացնել, որ Սահմանադրական դատարանը կարևորություն է տվել սույն գործի քննության առարկա չհանդիսացող, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով կարգավորվող հարցին՝ պատճառաբանական մասում քննարկելով «շահագրգիռ անձ» հասկացությունը: Հետևաբար Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1675 որոշումից պարզ չէ, թե որն է Օրենսգրքի 40-րդ հոդվածին Սահմանադրական դատարանի տված մեկնաբանության և Սահմանադրության 60-րդ հոդվածի կապը, այսինքն՝ ինչի հիման վրա է Սահմանադրական դատարանը ելել այն եզրահանգման, որ Օրենսգրքի 40-րդ հոդվածն ունի այն **սահմանադրաիրավական** բովանդակությունը, համաձայն որի՝ ամուսնու կարգավիճակը վարչական դատավարությունում հայցվորի համար ինքնին «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է այն, այն դեպքում, երբ որոշմամբ, ըստ էության, անդրադարձ չի կատարվում վիճարկվող դրույթին և դիմողի կողմից բարձրացված հարցին:

Բացի այդ, հարկ եմ համարում նշել, որ թեև Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը չի բովանդակում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի վերաբերյալ որևէ եզրահանգում, այդուհանդերձ, հաշվի առնելով նշված դրույթի՝ Սահմանադրական դատարանի որոշման առանցքում լինելու հանգամանքը՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանի որոշումը քողարկված ձևով վերաբերում է հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածին:

Միաժամանակ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից

արտահայտված դիրքորոշումների բովանդակությանը՝ կարծում եմ, որ նորմի նման՝ սահմանադրական կարգավորումների հետ չկապված, դրանցից կտրված մեկնաբանում կատարելով՝ Սահմանադրական դատարանը տվյալ դեպքում ստանձնել է մասնագիտացված՝ վարչական դատարանի գործառույթ, ինչի իրավասությունը Սահմանադրական դատարանը չունի: Իմ կարծիքով՝ Սահմանադրական դատարանի կողմից նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական կարգավորումներ և դրանց վերաբերյալ վերլուծություններ (որոնցից կբխի նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը), որպիսիք տվյալ դեպքում Սահմանադրական դատարանի ՄԴԻ-1675 որոշման մեջ առկա չեն:

Միաժամանակ հարկ եմ համարում անդրադառնալ նաև Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի վերլուծությանը վիճարկվող իրավանորմի հետ համակարգային առումով փոխկապակցված լինելու հարցի տեսանկյունից:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա» վերտառությամբ 69-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են նույն օրենքի 68-րդ հոդվածի 7-20-րդ մասերի կանոնները:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

Միաժամանակ նույն օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նշվում է, որ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, ի թիվս այլնի, պարունակում է նաև որոշման կամ եզրակացության ձևակերպումը՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում նշելով նաև անվավեր ճանաչված իրավական ակտի կամ դրա դրույթների հետ փոխկապակցված այլ դրույթների անվավերության մասին:

Վերոնշյալ իրավանորմերից հետևում է, որ վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանի կողմից պարզ-

ման ենթակա կարող է լինել բացառապես տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների սահմանադրականությունը, որոնք համակարգային առումով փոխկապակցված են այդ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթների հետ:

Փաստորեն, տվյալ դեպքում Սահմանադրական դատարանն իրավասու չէր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածին անդրադառնալ նույնիսկ վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցվածության հիմքով, քանի որ նշված դրույթը ներառված է ոչ թե Օրենսգրքում, այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

3. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ոչ թե ամբողջական, այլ՝ նորմատիվ սահմանադրական գանգատի ինստիտուտը, ինչը, մասնավորապես, ենթադրում է, որ թեև սահմանադրական գանգատը կապված է կոնկրետ գործի հետ, սակայն այն կարող է միայն վերաբերել դատական ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտի, և ոչ թե դատական ակտի սահմանադրականությանը: Հետևաբար անձը չի կարող Սահմանադրական դատարանի առջև բարձրացնել, իսկ վերջինս էլ իրավասու չէ անդրադառնալ նորմատիվ իրավական ակտի կիրառման իրավաչափության հարցին¹:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանում ենթակա չեն քննության նաև անհատական այն դիմումները, որոնք կապված են ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են դրանց կիրառման իրավաչափության հարցին, նույնիսկ եթե դիմողը Սահմանադրական դատարանին ըստ ձևի ներկայացնում է վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք²: Ընդ որում, Սահմանադրական դատարանն իր հերթին կրում է պարտականություն՝ չանդրադառնալու վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարցին:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման դեպքում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ

¹ Առավել մանրամասն՝ տե՛ս, օրինակ, European Commission for Democracy through Law (Venice Commission), Revised report on individual access to constitutional justice, CDL-AD(2021)001, 22.02.2021:

² Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի 22.11.2011 թվականի ՍԴՈ-998, 19.05.2015 թվականի ՍԴՈ-1205, 11.04.2017 թվականի ՍԴՈ-1361 որոշումները, 17.03.2009 թվականի ՍԴԱՈ-21, 22.02.2019 թվականի ՍԴԱՈ-17 աշխատակարգային որոշումները:

վերանայող դատական ատյանի գործառույթ՝ դառնալով Վճռաբեկ դատարանի վերադաս՝ չորրորդ դատական ատյան, ինչը ոչ միայն չի բխում Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում ներառված դատարանների գործառույթների տարանջատումը:

Տվյալ դեպքում ՄԴՈ-1675 որոշմամբ «(...) Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համար[ել] անդրադառնալ վիճարկվող նորմի ստացած մեկնաբանության արդյունքում Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակմանը հանգեցրած միջամտությանը վերաբերող վարչական դատավարությունում հայցվորի՝ «շահագրգիռ անձի» կարգավիճակի հարցին»: Մինչդեռ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը, անհատական դիմումի հիման վրա գործի շրջանակում իրավասու է անդրադառնալ բացառապես նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցին, իսկ այն հարցի քննարկումը, թե արդյոք կոնկրետ գործով հայցվորը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իմաստով շահագրգիռ անձ է, թե՛ ոչ, եռաստիճան դատական համակարգի իրավասությունների տիրույթում է:

Շեղանաբար, սույն գործով կայացված որոշմամբ Սահմանադրական դատարանը, շեղվելով դիմումի շրջանակից, ըստ էության քննարկման առարկա է դարձրել Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման իրավաչափության հարցը, որպիսի լիազորությամբ օժտված չէ (ընդ որում, սույն դիրքորոշումը ներկայացնում եմ անկախ Վճռաբեկ դատարանի կողմից սույն դիմումի հիմքում դրված վարչական գործով արտահայտված իրավական դիրքորոշումների և վեճին տրված լուծման առնչությամբ իմ դիրքորոշման):

4. Միաժամանակ անդրադառնալով սույն գործով ներկայացված դիմումին՝ գտնում եմ, որ սույն գործի վարույթը՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի մասով ևս՝, ենթակա էր կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում, իսկ

¹ Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՄԴԱՈ-211 աշխատակարգային որոշմամբ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ Օրենսգրքի 33-րդ հոդվածի մասով, կարճվել է:

նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում՝ հիմնավորելով նաև իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Դիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ դիմողը բարձրացնում է Օրենսգրքի 40-րդ հոդվածի սահմանադրականության հարց՝ նշելով, որ հստակ չէ, թե որ պահից են դադարում ամուսինների միջև իրավահարաբերությունները: Մինչդեռ Օրենսգրքի՝ «Ամուսնությունը դադարելու ժամանակը» վերտառությամբ 40-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում էր, որ ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից:

Նման պայմաններում գտնում եմ, որ վիճարկվող իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականության, վիճարկվող իրավադրույթի և դիմողի իրավունքների հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ դիմումով չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ, հետևաբար գործի վարույթը՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի մասով ևս, ենթակա էր կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով:

5. Ամփոփելով սույն հատուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1675 որոշման պարճառաբանությունները, ըստ էության, չեն վերաբերում անհատական դիմումով վիճարկվող դրույթին, ավելին, դիմողի կողմից ՀՀ վարչական դատարանի վարության օրենսգրքի 3-րդ հոդվածի սահմանադրականության հարց

բարձրացված չլինելու պայմաններում Սահմանադրական դատարանը, դուրս գալով դիմումի շրջանակից, ըստ էության անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով «շահագրգիռ անձ» հասկացությանը, որն անհատական դիմումով վիճարկվող դրույթի կարգավորման առարկայից դուրս է, և ներառված է ոչ թե Օրենսգրքում, այլ՝ մեկ այլ իրավական ակտում: Ավելին, Սահմանադրական դատարանը, ըստ էության, քննարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի կիրառման իրավաչափության հարցը՝ գնահատական փայլով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման իրավաչափությանը, որպիսի իրավասություն Սահմանադրական դատարանին տրված չէ:

Միաժամանակ գտնում եմ, որ սույն գործը չէր կարող քննության ընդունվել և ըստ էության որոշում կայացվել, քանի որ դիմումը՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի մասով, ակնհայտ անհիմն էր, ուստի սույն գործի վարույթը ենթակա էր կարճման նաև այդ դրույթի մասով:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«05» հունվարի 2023թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի «ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ (ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԵԼ Է 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ) 40-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1675 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1675 որոշման (այսուհետ նաև՝ ՍԴՈ-1675 որոշում) վերաբերյալ:

1. Սահմանադրական նորմերով սահմանվում են ինչպես արդարադատություն իրականացնող սուբյեկտային կազմը՝ սահմանադրական մարմինները, այնպես էլ վերջիններիս սահմանադրական առաքելության սահմանադրավական հիմքերը և շրջանակները (Սահմանադրության 162-163-րդ, 167-172-րդ հոդվածներ, 175-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մասնավորապես՝ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ (63-րդ հոդվածի 2-րդ մաս): Այլ կերպ՝ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առարկայից դուրս, թեկուզ և վիճարկվող ակտի/դրույթի հետ առերևույթ, ենթադրյալ փոխկապակցված, սակայն դիմողի կողմից չվիճարկված այլ նորմատիվ իրավական ակտի և դրա դրույթի սահմանադրականության հարց Սահմանադրական դատարանն իրավասու չէ իր նախաձեռնությամբ ստու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 4(108)2022

գելու, գնահատելու, առավել ևս այդ հարցով կայացնելու համապատասխան որոշում՝ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ձևով:

Վերահաստատում և միաժամանակ ընդգծում եմ նաև Սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ ներկայացված հատուկ կարծիքներում քանիցս նշված իմ այն դիրքորոշումը, որ Սահմանադրական դատարանն իր վերոնշյալ սահմանադրական առաքելության իրականացման առումով, սահմանադրաիրավական հիմքերի շրջանակում, չունի ինքնասահմանափակման լիազորություն, որը կարող է հանգեցնել ընդհուպ մինչև սահմանադրական արդարադատության իրականացումից հրաժարման, ինչպես նաև չի կարող իրեն վերագրել այնպիսի լիազորություններ, որոնք Սահմանադրությամբ սահմանված չեն: Վերջինիս ինչպես ուղղակի, այնպես անուղղակի ցանկացած դրսևորում ստեղծում է հակասահմանադրական իրավիճակ:

Այսպես՝ Սահմանադրական դատարանն իրավունք չունի «գայթակղվելու» այլ դատարանների դատական ակտերի օրինականության և իրավաչափության ստուգմամբ, կոնկրետ գործի փաստական հանգամանքների վերլուծությամբ կամ դրանց վերաբերյալ դատական ակտերում արտահայտված դիրքորոշումների «վերձանմամբ» և սեփական լիազորություններից դուրս զուգորդվող գնահատականներ տալով: Հակառակը եռաստիճան դատական համակարգում չորրորդ աստյանի դեր «ստանձնելն է», ինչը չունի սահմանադրական հիմք:

Սահմանադրական դատարանի որոշումները պետք է կայացվեն օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում, հիմնված լինեն վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական պատշաճ վերլուծության վրա, զերծ լինեն, մասնավորապես՝ ներքին հակասություններից, երկիմաստ ու խեղաթյուրող դիրքորոշումներից: Պակաս կարևոր չէ, որ Սահմանադրական դատարանի որոշումներն անհարկի ծանրաբեռնված չլինեն ընդհանրական և կրկնվող դատողություններով, ոչ վերաբերելի դիրքորոշումներով (այդ թվում՝ այլ դատարանի դատական ակտերում ամրագրված համանման դիրքորոշումների սուկ վերարտադրմամբ):

Սահմանադրական դատարանի ձևավորած իրավակիրառ պրակտիկան պետք է լինի միասնական: Այդ պրակտիկայի փոփոխությունն ընկալելի, ընդունելի և իրավաչափ է, եթե այն արդյունք է սահմանադրական փոփոխությունների իրացման կամ գործող Սահմանադրության նորմերի այնպիսի վերաիմաստավորման, երբ Սահմանադրական դատարանի կողմից հիմնավորվում է իր պրակտիկայի փոփոխությունը: Հակառակը կարող է հանգեցնել Սահմանադրական դատարանի օբյեկտիվ գործունեության ողջամիտ կասկածների և նրա նկատմամբ հանրային վստահության անկման:

Սահմանադրական դատարանը, գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի արդյունավետ իրացման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված,

ներառյալ՝ գործի վարույթը կասեցնելու և այն վերսկսելու գործիքակազմերը պետք է կիրառի սահմանադրական օրենքով սահմանված այդ ինստիտուտների էությանը և կարգավորումներին համապատասխան, որով, նախևառաջ, կապահովվի Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքի արդյունավետ՝ սահմանված կարգով և ժամկետներում իրացումը՝ չստեղծելով այդ իրավունքի խաթարման և արգելափակման վտանգներ:

2. Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1675 որոշումը հիմնավոր, հետևաբար՝ ընդունելի չեմ համարում: Այսպես.

ա) սույն գործի քննության առիթ հանդիսացող դիմումով դիմող Գայանե Մանուկյանը (այսուհետ՝ նաև Դիմող) խնդրել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31, 35, 60, 61, 63, 78 եւ 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Ամուսնության եւ ընտանիքի օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 33-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված իմաստը՝ հաղորդած բովանդակությամբ հանդերձ, համաձայն որի՝ ամուսինների, որպես ամուսիններ, իրավունքները և պարտականությունները չեն դադարում ամուսնությունը լուծելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից, և/կամ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31, 35, 60, 61, 63, 78 եւ 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Ամուսնության եւ ընտանիքի օրենսգրքի 40-րդ հոդվածը, այնքանով, որքանով դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված ամուսնությունը և ամուսինների, որպես ամուսիններ, իրավունքները եւ պարտականությունները դադարած է համարում միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից»:

Դիմողը, մասնավորապես, նշել է, որ հիշյալ հոդվածները չեն համապատասխանում իրավական որոշակիության, հստակության և կանխատեսելիության չափանիշներին, որից ելնելով էլ անհստակ է, **թե ո՞ր պահից են ամուսնական իրավահարաբերությունները համարվում դադարած՝ ամուսնալուծության վերաբերյալ համապատասխան դատական ակտի ուժի մեջ մտնելու՞, թե՞ ամուսնալուծությունը պետական գրանցման ակտով ամրագրվելու պահից:** Ըստ դիմողի՝ նշված նորմերին իրավակիրառ պրակտիկայում տրված բովանդակությունը հանգեցրել է իր սեփականության իրավունքի խախտման, քանի որ նորմերի մեկնաբանման արդյունքում գրկվել է իր սեփականությունից (առավել մանրամասն տես՝ ՍԴՈ-1675 որոշման «Դիմողի դիրքորոշումները» բաժնում):

Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴԱՈ-211 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33-րդ հոդվածի մասով, կարճվել է:

Գործով վիճարկվող դրույթի՝ 40-րդ հոդվածի մասով, թեև գործի վարույթը չի կարճվել, սակայն գործի քննության առիթ հանդիսացող դիմումով նշված իրավական նորմը, այդ թվում՝ բարձրացված իրավական հարցադրումների համատեքստում, Սահմանադրական դատարանի կողմից չի ենթարկվել վերլուծության և, ըստ այդմ՝ չի բացահայտվել այդ դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այդ առումով վերջնարդյունքում, ըստ էության, չի գնահատվել դրա սահմանադրականության հարցը:

Գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը պետք է գործեր քննության առիթ հանդիսացող դիմումով բարձրացված սահմանադրաիրավական հարցի շրջանակներում, Սահմանադրության վերաբերելի՝ տվյալ դեպքում Սահմանադրության 35-րդ հոդվածի համատեքստում, բացահայտեր վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ արձանագրելով, որ ամուսնության ազատությունը բովանդակային առումով ներառում է նաև ամուսնալուծության ազատությունը, որից հետո անդրադառնար վիճարկվող դրույթին այն համատեքստում, թե արդյո՞ք դրանում առկա են Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող սահմանափակումներ, անդրադառնար վիճարկվող դրույթով սահմանված՝ ամուսնալուծության իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերին և ընթացակարգերին, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների արդյունավետության ապահովման առումով դրանք գնահատեր Սահմանադրության 75-րդ հոդվածի տեսանկյունից՝ հատկապես հաշվի առնելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը գործադիր իշխանության մարմնի կողմից «հաստատելու» ընթացակարգի սահմանադրականությունը: Վերոհիշյալ հարցերին անդրադառնալուց հետո միայն, ինչը ՍԴՈ-1675 որոշմամբ չի կատարվել, եթե Սահմանադրական դատարանը գտներ, որ վիճարկվող դրույթն ինքնին համապատասխանում է Սահմանադրությանը, ապա պետք է վերլուծեր, բացահայտեր և գնահատեր վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը:

Փոխարենը, Սահմանադրական դատարանն անդրադարձել է վիճարկվող նորմի ստացած մեկնաբանության արդյունքում Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակմանը հանգեցրած միջամտությանը վերաբերող վարչական դատավարությունում հայցվորի՝ «շահագրգիռ անձի» կարգավիճակի հարցին, քանի որ, ըստ Սահմանադրական դատարանի, նշված հարցն ունի կիրառված նորմի մեկնաբանության սահմանադրականության ստուգման համար կարևոր նշանակություն, այն որոշիչ գործոն է անձի սեփականության՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակման սահմանադրական նպատակի նույնականացման համար:

Նշված վերլուծությունը կառուցվել է՝ նաև հղում կատարելով Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին և դրա շուրջ ձևավորված դատական պրակտիկային:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 7-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Եվ ինչպես արդեն վերը նշվել է՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված **տվյալ ակտի այլ դրույթների** սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու հարցում՝ Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1675 որոշմամբ որպես գործի շրջանակներում պարզման հանգամանք սահմանադրականության գնահատման այնպիսի սահման է առանձնացրել, որի վերաբերյալ ոչ միայն սույն գործի քննության առիթ հանդիսացող դիմումով չի բարձրացվել առանձին հարց, այլև առհասարակ չի հանդիսանում սույն գործով վիճարկվող դրույթի՝ 40-րդ հոդվածի կարգավորման առարկան կամ համակարգային առումով փոխկապակցված չէ դրա հետ:

ՍԴՈ-1675 որոշմամբ, ըստ էության, վիճարկվող հոդվածի սահմանադրականության հարցը որոշելիս, որպես էական նշանակություն ունեցող հանգամանք, վերլուծության է ենթարկվել վարչական դատավարությունում հայցվորի՝ «շահագրգիռ անձի» կարգավիճակի հարցը, որը գտնվում է այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի կարգավորման տիրույթում:

Չնայած նշվածին, որոշման եզրափակիչ մասում գնահատվել է ոչ թե Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի, այլ վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի սահմանադրականությունը, որի կարգավորման առարկա է դիտարկվել Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով կարգավորվող «շահագրգիռ անձի» կարգավիճակի հարցը:

Մասնավորապես՝ համապատասխան վերլուծությունների արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 40-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակն ինքնին վարչական դատավարությունում հայցվորի համար «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է նման կարգավիճակը:

Փաստացի, Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1675 որոշմամբ դուրս է եկել վեճի առարկայի և իր լիազորությունների շրջանակից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանը չի իրականացրել սույն գործով վիճարկվող դրույթի՝ 40-րդ հոդվածի սահմանադրաիրավական վերլուծություն, առաջանում է նաև խզում ՍԴՈ-1675 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի միջև: Թեև վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական վերլուծությունն ակներև կդարձներ, որ ՍԴՈ-1675 որոշման եզրափակիչ մասում ամրագրված մեկնաբանությունն աղերս չունի վիճարկվող դրույթի բովանդակության հետ:

Վիճարկվող նորմի բովանդակության չբացահայտման համատեքստում հատկանշական են Սահմանադրական դատարանի կողմից առաջ քաշված իրավական հարցադրումները և դրանց հաջորդող վերլուծության ընթացքը, որոնք վերաբերում են ոչ թե համապատասխան նորմի սահմանադրականության հարցին, այլ բացառապես դրանց՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանության սահմանադրականության հարցին, ինչը ևս խնդրահարույց է:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն անդրադարձել է երկու հարցադրման. «արդյո՞ք վիճարկվող նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանությունը Դիմողի գործով հանգեցրել է Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված նրա սեփականության իրավունքին միջամտության» և «նախորդ հարցին դրական պատասխանելու դեպքում արդյո՞ք վիճարկվող նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանությամբ միջամտությունը համապատասխանում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին»:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով

նան համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմից բխում է, որ Սահմանադրական դատարանի կողմից վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության գնահատումը ինքնուրույն և առանձին գործառույթ չէ, իրականացվում է այն ժամանակ, երբ Սահմանադրական դատարանը, նախևառաջ, վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական վերլուծության արդյունքում բացահայտելով այդ դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, գնահատում է այդ դրույթի սահմանադրականության հարցը: Ավելին՝ այն դեպքում, երբ վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանը կգնահատի որպես Սահմանադրությանը հակասող, ապա այդ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցի պարզումը և գնահատումը կդառնան առարկայազուրկ:

Ըստ այդմ՝ վիճարկվող դրույթի սահմանադրականության պարզումը և գնահատումը կրում են պարտադիր բնույթ, որի հետ փոխկապակցված է ձևավորված իրավակիրառ պրակտիկայի գնահատումը, ուստի **Սահմանադրական դատարանի կողմից կոպիտ սխալ է հարցադրում կատարել և վերլուծություն կատարելիս սեփական լիազորությունները սահմանափակելը միայն վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատման առումով:**

Միևնույն ժամանակ, **ինքնասահմանափակվելով վիճարկվող դրույթի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատման հարցադրմամբ և վերլուծությամբ, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1675 որոշման մեջ չի ամրագրել իր իսկ կողմից բարձրացված հարցադրման պատասխանը՝ «արդյո՞ք վիճարկվող նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանությամբ միջամտությունը համապատասխանում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին», թե՛ ոչ: Սահմանադրական դատարանն, ըստ էության, գնահատել է դրույթի կիրառման իրավաչափության հարցը, կրկին դուրս գալով իր լիազորությունների շրջանակից:**

բ) Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1675 որոշման պատճառաբանական մասի 5.1-ին կետում նշել է, որ «անհրաժեշտ է համարում առաջնահերթությամբ անդրադառնալ Դիմողի կողմից վիճարկվող նորմի՝ Դիմողի նկատմամբ կիրառման հանգամանքներին» և կատարել է ծավալուն անդրադարձ: Այս առումով, սակայն, հարկ է նշել, որ **վիճարկվող դրույթի կիրառված լինելու հանգամանքներին Սահմանադրական դատարանի ըստ էության որոշմամբ անդրադառնալն անընդունելի է, քանի որ ծանրաբեռնում է որոշումը անհարկի դատողություններով, որոնք ստեղծում են տպավորություն, թե Սահմանադրական դատարանն ապացուցում է, որ տվյալ**

գործն ընդունել է քննության, քանի որ դիմումի ընդունելիության նախապայմանները պահպանված են եղել,

գ) Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1675 որոշման պատճառաբանական մասի 5.1-ին կետում ամրագրել է հետևյալ դիրքորոշումը. «Արդյունքում՝ վիճարկվող նորմի՝ Դիմողի նկատմամբ կիրառման վերը շարադրված երկու դրսևորումները հիմք են հանդիսացել Դիմողի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելով Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 16/1 շենքի 17-րդ բնակարանի նկատմամբ նրա ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը սահմանափակելու համար: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը սույն գործի քննությամբ սույն որոշման 4-րդ կետում շարադրված հարցադրումներին անդրադառնում է միայն վիճարկվող նորմի՝ Դիմողի նկատմամբ կիրառման վերը շարադրված երկու դրսևորումներում ստացած մեկնաբանության սահմանադրականության ստուգման շրջանակում»: Հիշյալ դիրքորոշմամբ, ըստ էության, **Սահմանադրական դատարանի պրակտիկայում ներմուծվել է անհայտ և անհասկանալի՝ սահմանադրականության ստուգման նոր շրջանակ** («...Դիմողի նկատմամբ կիրառման ... դրսևորումներում ստացած մեկնաբանության սահմանադրականության ստուգման շրջանակ...»), որն իր ոչ հստակ, անորոշ շարադրանքով տեղիք է տալիս միայն տարակուսանքի, տարաբնույթ ընկալման և չի կարող հավակնել դիտարկվելու որպես Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշում, քանզի չունի սահմանադրաիրավական հիմք,

դ) ՍԴՈ-1675 որոշման մեջ գերակշռում են այն մոտեցումները, որ Սահմանադրական դատարանը «նկատել» (հենց Սահմանադրական դատարանի ձևակերպումն է), վկայակոչել, վերլուծել և գնահատել է, մասնավորապես, թիվ ՎԴ/12439/05/17 վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ամրագրված այն դիրքորոշումները, որոնք առավելապես պարունակում են փաստական հանգամանքների վերլուծություն, փաստերի գնահատումներ և դրանց հետ կապված օրենսդրական մեկնաբանություններ: Մասնավորապես՝ ՍԴՈ-1675 որոշման պատճառաբանական մասի 5.3-րդ կետի 2-րդ պարբերությունում Սահմանադրական դատարանը նշել է. «Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող նորմի կիրառման նպատակը եղել է փաստի գնահատումը, ինչը համապատասխան դատարանի, սույն դեպքում՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունների տիրույթում է: (...) սույն սահմանադրական վեճի շրջանակում փաստական հանգամանքներին անդրադառնալիս Սահմանադրական դատարանն ամբողջ ծավալով հիմք է ընդունում փաստերին՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված գնահատականը՝ վիճարկվող նորմի սահմանադրականության ստուգումն իրականացնելով բացառապես Վճռաբեկ դատարանի կողմից հաստատված փաստերի սահմաններում»: Նախ՝ հարկ է նշել, որ

նման մոտեցումը բնութագրական չէ Սահմանադրական դատարանի որոշումների համար, սակայն **անընդունելի է, որ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ամրագրված այդ դիրքորոշումները հիմք ընդունելով կամ ընդունելի համարելով՝ Սահմանադրական դատարանը, ըստ էության, վերագրում է իրեն:** Այլ է հարցը, երբ այդ դիրքորոշումները վերաբերում են Սահմանադրության մեկնաբանությանը, սակայն անգամ այդ դեպքում Սահմանադրական դատարանը ոչ թե պետք է հիմք ընդունի դրանք, այլ պետք է տա իր վերջնական պարտադիր մեկնաբանությունը: Սա է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու բուն առաքելությունը, այլ ոչ թե Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերարտադրումը՝ այս կամ այն խմբագրումներով: Բացի դրանից, **Սահմանադրական դատարանն իրավասու չէ վերագնահատելու որևէ այլ դատարանի՝ կոնկրետ գործով կայացված դատական ակտի հիմքում դրված փաստերը, նաև այն պատճառով, որ իրավասու չէ այլ դատարանում քննված գործի վերստին քննություն իրականացնելու:** Նշվածներն աղերս չունեն դատարանի վերջնական ակտով անձի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության ստուգման հետ, դուրս են սահմանադրական արդարադատության իրականացման գործառույթի շրջանակից: Այս համատեքստում կրկին ընդգծման ենթակա է, որ Սահմանադրական դատարանի կողմից եռաստիճան դատական համակարգում չորրորդ աստյանի դեր «ստանձնելը» չունի սահմանադրական հիմք,

ե) Սահմանադրական դատարանը ՍԴԴ-1675 որոշման պատճառաբանական մասի 5.3-րդ կետի 11-րդ պարբերությունում սահմանել է. «Այսինքն՝ Դիմողի գործով վիճարկվող նորմի կիրառումը հանգեցրել է նույն գործով հայցվորի՝ որպես Դիմողի բնակարանի մասնավորեցման պահին Արտյոմ Սարգսյանի գրանցված ամուսնու, «շահագրգիռ անձ» լինելու անվիճարկելի կանխավարկածին, որն անփոփոխ շարունակել էր գործել նույնիսկ այն պայմաններում, երբ Վճռաբեկ դատարանն արձանագրել էր Դիմողի սեփականության իրավունքի սահմանափակմանը հանգեցրած վարույթի շրջանակներում իրավական շահագրգռվածություն ունեցող անձի նույնականացման օբյեկտիվ անհնարինությունը: Արդյունքում՝ Դիմողի գործով վիճարկվող նորմի կիրառմամբ դրան տրված մեկնաբանությունը հնարավորություն է ընձեռում սեփականության իրավունքի այնպիսի սահմանափակման, որը համատեղելի չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որևէ սահմանադրական նպատակի հետ, քանի որ այն հավասարապես չի հետապնդել ո՛չ որևէ անձի հիմնական իրավունքի կամ ազատության, ո՛չ էլ՝ հանրության շահերի պաշտպանության նպատակ, քանզի Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի ուժը կորցրած

օրենսգրքի 40-րդ հոդվածը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ»:

Նախ՝ վերը նշված գնահատականը Սահմանադրական դատարանի խնդիրը չէ: Երկրորդ՝ անգամ եթե այն տեսականորեն լիներ Սահմանադրական դատարանի խնդիրը, ապա կստացվեր, որ ամբողջ սեփականաշնորհումը իրավաչափ չի եղել, քանի որ ՍԴՈ-1675 որոշման մեջ նշված գործով կանանցից որևէ մեկը, եթե չի առարկել, պետք է լիներ համասեփականատեր, առավել ևս, եթե համաձայնություն էր տվել բնակարանը ամուսնու անունով «սեփականացնելու» վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի ոչ հստակ դիրքորոշումներին Սահմանադրական դատարանի կողմից երկրորդելը կհանգեցնի տվյալ գործով վկայակոչված երկու կանանց սեփականության հիմնական իրավունքի խախտման, սեփականազրկման, որով, ըստ էության, բնակարանը, հակառակ սեփականաշնորհման համակարգային տրամաբանության, կունենա երեքի փոխարեն ընդամենը երկու սեփականատեր:

3. Անդրադառնալով սույն գործի քննության հիմք հանդիսացող դիմումին, հարկ է նշել, որ այն չի համապատասխանում անհատական դիմումին ներկայացվող պահանջին, մասնավորապես՝ հիմնավորված չէ, թե դիմումատուի սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ պատճառահետևանքային կապ է առկա դիմողի սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև, որպիսի պայմաններում գործի վարույթը ենթակա էր կարճման:

Մասնավորապես, նշելով, որ ամուսինների իրավունքները և պարտականությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում համապատասխան գրանցումը կատարելուց հետո միայն դադարած համարելու դեպքում օրինական ուժի մետ մտած վճիռը ստորադասվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից կատարված պետական գրանցմանը, Դիմողը չի ներկայացրել պատշաճ հիմնավորումներ նորմի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 40-րդ հոդվածը որոշակիության տեսանկյունից չի առաջացնում նորմի սահմանադրականության խնդիր, և անգամ տառացի մեկնաբանությունից հստակ է նորմի բովանդակությունը, այն է՝ դատական ակտը որևէ իրավական հետևանք չի առաջացնում ամուսինների և երրորդ անձանց համար այնքան ժամանակ, քանի դեռ այդ ակտի հիման վրա ամուսնալուծությունը չի գրանցվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ թեև կառուցակարգը հետապնդում է Սահմանադրությամբ կանխորոշված նպատակներ, և համապատասխան դատական ակտը գրանցման ներկայացնելը չի համարվում անհամաչափ բեռ

ամուսինների համար իրավունքների պատշաճ իրացման համատեքստում, այնուամենայնիվ, կարգավորմամբ ամուսինները չունեն ժամանակային սահմանափակում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո այն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ ներկայացնելու համար:

Գործնականում ստացվում է, որ պետության իրավակարգում առկա է ամուսինների ամուսնալուծության մասին դատական ակտ, սակայն այն որևէ հետևանք չի առաջացնում (ինչը կարող է տևել տարիներ): Նշվածը բարդություններ կարող է առաջացնել ինչպես ամուսինների, այդպես էլ՝ այլ անձանց իրավունքների պատշաճ իրացման առումով:

Տեսականորեն նշվածը կարող էր նպատակ ունենալ որոշակի ժամանակ ևս տալ ամուսիններին հաշտվելու համար: Սակայն հաշվի առնելով դատական կարգով ամուսնալուծության պարագայում հաշտվելու համար ամուսիններին ժամանակ տրամադրելու դատարանների իրավասությունը՝ նման նպատակը դառնում է առարկայազուրկ և ոչ լեգիտիմ:

Ուստի՝ գտնում եմ, որ նման կարգավորումը արդյունավետ համարվել չի կարող և Սահմանադրության 75-րդ հոդվածի տեսանկյունից խնդրահարույց է:

Այդ կարգավորումների խնդրահարույց լինելու մասին նաև անուղղակիորեն վկայում են գործող կարգավորումները, որոնք ամրագրված են 2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 18-րդ հոդվածում, համաձայն որի՝ «1. Ամուսնությունը, որը լուծվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնում, համարվում է դադարած ամուսնալուծության պետական գրանցման պահից: 2. Ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Դատարանն ամուսնալուծության մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին»:

4. Հարկ եմ համարում անդրադառնալ նաև ՍԴՈ-1675 որոշմամբ գործի վարույթը կասեցնելու և այն վերսկսելու հիմնահարցերին:

Գտնում եմ, որ սույն գործի վարույթը կասեցնելու և այն վերսկսելու գործիքակազմերը չեն կիրառվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքին համապատասխան:

Գործի քննության առիթ հանդիսացող Գայանե Մանուկյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունիսի 25-ին:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 5-ի ՍԴԱՈ-171 աշխատակարգային որոշմամբ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝

ՀՀ Ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության, դատաքննությունը սկսելու ժամկետ սահմանվել՝ 2021 թվականի սեպտեմբերի 23-ը՝ ժամը 11.00-ն:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴԱՈ-196 աշխատակարգային որոշմամբ, ելնելով լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից՝ գործի քննության ժամկետը երկարաձգվել, գործի դատաքննությունը հետաձգվել է և դատաքննությունը նշանակվել է 2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 11.00-ին:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴԱՈ-238 աշխատակարգային որոշմամբ կրկին՝ ելնելով լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից՝ գործի դատաքննությունը հետաձգվել է և դատաքննությունը նշանակվել է 2021 թվականի դեկտեմբերի 21-ին՝ ժամը 11.00-ին:

2021 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴԱՈ-256 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է հետևյալ հիմնավորմամբ. «Հաշվի առնելով գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանի առաջարկությունն առ այն, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտ է սույն գործով պահանջել լրացուցիչ ապացույցներ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման»:

2021 թվականի դեկտեմբերի 17-ին սույն գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանի կողմից դատական դեպարտամենտ է ներկայացվել գրություն, որով դատավորը խնդրել է տրամադրել Օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների իրավակիրառ պրակտիկայում ունեցած նշանակությունը սահմանող վերաբերելի մեկնաբանություններ պարունակող դատական ակտերն այն հարցի վերաբերյալ, թե ո՞ր պահից են դադարած համարվում ամուսնական հարաբերությունները նախկին ամուսինների միջև:

2022 թվականի հունվարի 24-ի պատասխան գրությամբ դատական դեպարտամենտի ղեկավարը հայտնել է, որ դատական դեպարտամենտին պատվիրակված լիազորությունների շրջանակներում բարձրացված հարցադրումների վերաբերյալ որևէ վիճակագրություն կամ հաշվառում չի վարվում, և սպառիչ տեղեկատվություն տրամադրել հնարավոր չէ: Այդուհանդերձ, ձեռնարկված միջոցառումների արդյունքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ իրավակիրառ պրակտիկայում ունեցած նշանակությունը սահմանող վերաբերելի մեկնաբանությունները պարունակող 5 դատական ակտերի համարներն ու պատճենները:

2022 թվականի դեկտեմբերի 8-ին գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Գրիգորյանի կողմից ներկայացվել է հաղորդում՝ սույն գործի վարույթի վերսկսման հարցը Սահմանադրական դատարանի առաջիկա աշխատակարգային նիստի օրակարգ ներառելու մասին՝ այն հիմնավորմամբ, որ դատական դեպարտամենտի գրության մեջ առկա տեղեկությունները ուսումնասիրվել են, և վերացել է գործի վարույթը կասեցնելու հիմքը:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի ՍԴԱՈ-204 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է հետևյալ հիմնավորմամբ. «Սահմանադրական դատարանն ստացել է վերոհիշյալ գործով պահանջված լրացուցիչ ապացույցները և դրանց ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու հիմքերը վերացել են»:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների հիման վրա գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

Գտնում եմ, որ այս գործի քննության առիթ հանդիսացող դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանն, ըստ էության, որոշումն ընդունել է ոչ թե օրենքով սահմանված առավելագույն՝ 6-ամսյա ժամկետում, այլ շուրջ 1 տարի 6 ամիս հետո, քանի որ տվյալ գործի քննության ժամկետը, ելնելով լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից, երկարաձգվել է, դատաքննությունը երկու անգամ հետաձգվել է, այնուհետև գործի վարույթը օրենքով սահմանված առավելագույն՝ 6-ամսյա ժամկետի լրանալուն մոտ կասեցվել է՝ լրացուցիչ ապացույցներ ստանալու հիմքով: Հայցվող տեղեկատվությունը ստացվել է գործի վարույթը կասեցնելուց գրեթե մեկ ամիս հետո, սակայն գործի վարույթը վերսկսելու առաջարկությունը գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարան ներկայացրել է այդ տեղեկատվությունն ստանալուց գրեթե մեկ տարի հետո, որից հետո միայն գործի վարույթը վերսկսվել է, և նշանակվել դատաքննություն, որի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 26-ին Սահմանադրական դատարանը կայացրել է ՍԴՈ-1675 որոշումը:

Վերոհիշյալ իրավիճակը, սակայն, Սահմանադրական դատարանի պրակտիկայում միակը չէ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 22-ից հետո կասեցրել է 17 գործերի վարույթներ,

ինչն աննախադեպ է Սահմանադրական դատարանի 26-ամյա գործունեության ընթացքում: Սահմանադրական դատարանը հիշյալ 17 գործերից 2 գործ քննության է ընդունել Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումների, 3 գործ՝ Կառավարության դիմումների (միջազգային պայմանագրերի մասով), 2 գործ՝ դատարանների դիմումների և 10 գործ՝ անհատական դիմումների հիման վրա:

Ի դեպ, անհատական դիմումների հիման վրա քննության ընդունված թվով 2 գործով Սահմանադրական դատարանը կայացրել է վարույթը կրկնակի կասեցնելու վերաբերյալ որոշումներ, այսինքն՝ գործի վարույթը կասեցրել է, այնուհետև գործի վարույթը վերսկսվել և հետո կրկին կասեցվել է (տես՝ Սահմանադրական դատարանի 19.01.2021թ. ՍԴԱՈ-11, 14.01.2022թ. ՍԴԱՈ-7 և ՍԴԱՈ-8, 31.05.2022թ. ՍԴԱՈ-95, 22.11.2022թ. ՍԴԱՈ-188, 02.12.2022թ. ՍԴԱՈ-201 աշխատակարգային որոշումները): Արդյունքում՝ 1 գործի վարույթը կասեցված է 2021 թվականի հունվարի 19-ից, մյուսը՝ 2022 թվականի մայիսի 31-ից:

Անհատական դիմումների հիման վրա քննության ընդունված թվով 2 այլ գործերի վարույթը նույնպես դեռևս կասեցված է, ինչպես նաև դեռևս կասեցված է Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումների հիման վրա քննության ընդունված 2 գործերի վարույթ (տես՝ Սահմանադրական դատարանի 26.04.2022թ. ՍԴԱՈ-77, 14.06.2022թ. ՍԴԱՈ-107, 08.07.2022թ. ՍԴԱՈ-115, 08.11.2022թ. ՍԴԱՈ-177 աշխատակարգային որոշումները):

Մեկ ուշագրավ տվյալ ևս. անհատական դիմումների հիման վրա քննության ընդունված 3 գործերի և դատարանի դիմումի հիման վրա քննության ընդունված 1 գործի վարույթը վերսկսելուց հետո (3 գործով՝ նույն օրը, իսկ 1 գործով՝ 7 օր հետո) տվյալ գործերի վարույթները Սահմանադրական դատարանը կարճել է (տես՝ Սահմանադրական դատարանի 10.03.2021 թ. ՍԴԱՈ-48 և ՍԴԱՈ-49, 15.02.2022 թ. ՍԴԱՈ-32 և ՍԴԱՈ-33, 07.06.2022թ. ՍԴԱՈ-104, 14.06.2022թ. ՍԴԱՈ-106, 13.12.2022թ. ՍԴԱՈ-205 և ՍԴԱՈ-206 աշխատակարգային որոշումները):

Գործի վարույթը կասեցնելու և այն վերսկսելու հետ կապված հարաբերությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի, մասնավորապես, 56-րդ հոդվածով և 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով: Գործի վարույթը վերսկսելու առումով, մասնավորապես, հիշյալ օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմքերը վերանայուց հետո: Մինչև կասեցման հիմքերը վերանայլը գործի վարույթը վերսկսվում է Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ:

Նախ, հարկ եմ համարում նշել, որ այնքանով, որքանով Սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը կասեցնելը հանգեցնում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով, Սահմանադրական դատարանի աշխատակարգով և Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով սահմանված դատավարական ժամկետների ընթացքի կասեցման («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մաս), Սահմանադրական դատարանը հիշյալ գործի քննության օբյեկտիվ խնդիրները հաղթահարելու կամ նմանատիպ այլ պատճառներով: Դա անհրաժեշտ է, նախևառաջ, սահմանված կարգով և ժամկետներում Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքի արդյունավետ իրացման, Սահմանադրական դատարանի կողմից իր սահմանադրական առաքելության արդյունավետ իրականացման, գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի արդյունավետ կենսագործման նպատակներով՝ չստեղծելով և բացառելով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքի խաթարման և արգելափակման վտանգներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանվում են դատավարական կոնկրետ ժամկետներ, այդ թվում՝ առավելագույն ժամկետներ, որոնք Սահմանադրական դատարանի սուկ հայեցողությամբ չեն կարող փոփոխվել: Բացառություն է կազմում միայն գործի վարույթի կասեցման դեպքում դատավարական ժամկետների կասեցման դեպքը, այն էլ՝ օրենքով սահմանված կարգավորումների շրջանակում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի, մասնավորապես, 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը, եթե այլ մարմիններից կամ անձանցից անհրաժեշտ է ապացույցներ պահանջել:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածով, մասնավորապես, սահմանվում է, որ «Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ՝ նաև գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր, փորձաքննություններ, բացառությամբ իրավունքի հարցերով փորձաքննությունների, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր» (1-ին մաս):

Այսինքն՝ եթե գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրակա- նացնելու համար առկա է, մասնավորապես, փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր պահանջելու անհրաժեշտություն, ապա **օրենքով սահմանված դատավարական ժամկետների շրջանակում** Սահմանադրական դատա- րանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ՝ նաև գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու են պահանջելու դրանք՝ առանց գործի վարույթը կասեցնելու:

Բացի նշվածից, գտնում եմ (այս մասին բազմիցս բարձրաձայնել եմ Սահ- մանադրական դատարանի աշխատակարգային նիստերում), որ գործով զեկուցող դատավորը գործի վարույթը կասեցնելուց հետո ոչ թե իր հա- յեցողությամբ պետք է որոշի, մասնավորապես, ե՞րբ և ի՞նչ նյութեր է պահանջելու, և ընդհանրապես, պահանջելու է, թե՞ ոչ կամ իր հայեցո- ղությամբ գնահատի, որ գործի վարույթը կասեցնելու հիմքերը վերացել են և առաջարկի գործի վարույթը վերսկսել, այլ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցնելու հիմնա- վորումները պետք է լինեն պատշաճ, իսկ հիմքերը՝ կոնկրետ շարադրված, այլ ոչ թե ընդհանրական ձևակերպված: Գործի վարույթ կասեցնելու ինստիտուտի «չարաշահմամբ», դրա էության խեղաթյուրմամբ, ըստ էության, աղճատվում է սահմանադրական արդարադատության էությունը, վտանգվում դրա արդյունավետությունը, վերջնարդյունքում՝ Սահմանադրության գերակայու- թյան ապահովումը: Գործի վարույթը կասեցնելու պատճառաբանվածությունը և դրա հիմքերի կոնկրետ շարադրումը Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտին և, ինչու ոչ՝ ողջ հանրությանը նաև տեսանելի են դարձնում սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքը, ինչը նաև կանխում է Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտի կողմից Սահ- մանադրական դատարանի գործունեության, նրա կողմից դատավարական ժամկետները ձգձգելու, սուբյեկտիվ հայեցողություն դրսևորելու, Սահմա- նադրական դատարանի դիմող սուբյեկտների սահմանադրական արդարա- դատություն հայցելու իրավունքն արգելափակելու, խաթարելու վերաբերյալ դժգոհություններն ու քննադատությունները:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ


ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

5 հունվարի 2023թ.



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ**



2022 թվականի հոկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Շվեդիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Պատրիկ Սվենսոնին:

Ողջունելով դեսպանի այցը Սահմանադրական դատարան՝ Արման Դիլանյանը նշել է, որ

Բարձր դատարանը շահագրգիռ է ակտիվացնելու և արդյունավետ դարձնելու երկկողմ փոխգործակցությունը Շվեդիայի Թագավորության գերագույն դատարանի, ինչպես նաև իրավունքի գերակայության ոլորտում գործող շվեդական զարգացման գործակալությունների և կազմակերպությունների հետ: Սահմանադրական դատարանի նախագահն ընդգծել է, որ իրավունքի գերակայության ու մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Շվեդիայի հետ սերտ գործակցությունն ու լավագույն փորձի փոխանակումը անչափ արժեքավոր են դատա-


իրավական ոլորտում բարեփոխումների շարունակական իրականացման և լավագույն եվրոպական փորձի ներդրման համար:

Դեսպան Սվենսոնը շնորհակալություն է հայտնել ցուցաբերված ջերմ ընդունելության համար և շեշտել է իր երկրի պատրաստակամությունն ու հանձնառությունը՝ էլ ավելի ընդլայնելու Հայաստանի հետ հարաբերությունները տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ դատաիրավական բարեփոխումների իրականացումը և մեր երկրում ընթացող ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետությունն ապահովելու համար:

Շվեդական կողմի խնդրանքով Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև հայ-շվեդական իրավական գործակցության ու միջդատարանական կապերի ամրապնդման հեռանկարները և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ
ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ**



2022 թվականի նոյեմբերի 11-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերին:

Արման Դիլանյանն ընդգծել է հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների կարևորությունը, որոնք վերջին շրջանում դինամիկ զարգանում են բոլոր մակարդակներում: Ըստ Սահմանադրական դատարանի նախագահի՝ հայ-գերմանական գործընկերությունը խարսխված է իրավական և արժեհամակարգային հետաքրքրությունների ու սահմանադրական մոդելների նմանությունների վրա: Այս առնչությամբ Արման Դիլանյանը կարևորել է Գերմանիայի կառավարության աջակցությամբ Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունները, այդ թվում՝ ժողովրդավարության զարգացման, իրավունքի գերակայության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի և դատախիրավական ոլորտներում բարեփոխումներին տրամադրվող համապարփակ ու մշտական աջակցությունը:

Իր հերթին Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը շնորհակալություն է հայտնել Սահմանադրական դատարանի նախագահին հայ-գերմանական իրավական համագործակցության խթանմանը միտված քայլերի համար և ողջունել է Բարձր դատարանում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը: Վիկտոր Ռիխտերը նշել է, որ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունն ու սահմանադրականությունը անվտանգության, կայունության ու զարգացման գրավականն են, և Գերմանիան վճռական է աջակցելու Հայաստանի դատախիրավական, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները երկուստեք կարևորել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական դատարանի միջև իրավական երկխոսության հետագա ամրապնդումը ու մոտ ապագայում բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպումը: Կողմերն արժևորել են Հայաստանում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) գործունեությունը:

ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ԱՆՆ ԼՈՒՅՈՅԻՆ



2022 թվականի նոյեմբերի 16-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոյին:

Արման Դիլանյանը գոհունակությամբ նշել է, որ ներկայումս հայ-ֆրանսիական հարաբերությունները և դատաիրավական համագործակցությունը դինամիկ զարգանում են,

և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը հետաքրքրված է էլ ավելի խորացնելու Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական խորհրդի հետ համագործակցությունը, ինչը լավագույնս բնութագրում է հայ-ֆրանսիական առանձնաշնորհյալ հարաբերությունների տրամաբանությանը:


Սահմանադրական դատարանի նախագահին առանձնահատուկ կարևորել է Ֆրանսիայի Հանրապետության դերակատարումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում և անհապաղ արձագանքն Ադրբեյջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ս.թ. սեպտեմբերի 13-14-ը սանձազերծված ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակի հարցում՝ շեշտելով Ֆրանսիայի կողմից Ադրբեյջանի ագրեսիայի հստակ, միանշանակ ու հասցեական դատապարտումը:

Շնորհակալություն հայտնելով Սահմանադրական դատարանի նախագահին բարձր գնահատականի ու ցուցաբերած ջերմ ընդունելության համար՝ Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոն նշել է, որ Ֆրանսիան մեծ կարևորություն է տալիս բարեկամ Հայաստանի հետ համագործակցությանը և պատրաստակամ է շարունակել այն սերտացնելու ջանքերը նաև դատաիրավական ոլորտում: Այս առումով դեսպան Լույոն ողջունել է Սահմանադրական դատարանի հանձնառությունը՝ զարգացնելու կապերը Ֆրանսիայի Հանրապետության

սահմանադրական խորհրդի և Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցության հետ:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են հայ-ֆրանսիական երկկողմ իրավական հարաբերությունների օրակարգը և իրավունքի գերակայության ոլորտում համագործության հեռանկարները: Հյուրերի խնդրանքով Արման Դիլանյանը ներկայացրել է նաև Սահմանադրական դատարանում մեկնարկած ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքը: Դեսպան Լույոն հայտնել է ֆրանսիական կողմի լիարժեք աջակցությունը Բարձր դատարանի նախաձեռնած բարեփոխումներին և հաստատել է ֆրանսիական կողմի հանձնառությունը՝ աջակցելու դրանց անխափան ընթացքին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ



2022 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պավել Չեպլակին:

Արման Դիլանյանը կարևորել է Սահմանադրական դատարանի և Լեհաստանի Հանրապե-

տության սահմանադրական տրիբունալի համագործակցությունն ու հայտնել Բարձր դատարանի պատրաստակամությունը՝ խթանելու ու զարգացնելու կապերը Լեհաստանի սահմանադրական տրիբունալի հետ, ինչը բխում է հայ-լեհական բարեկամական հարաբերությունների ընդհանուր տրամաբանությունից: Սահմանադրական դատարանի նախագահը ողջունել է նաև Լեհաստանի Հանրապետության գործուն աջակցությունը Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) իրագործմանը:

Դեսպան Չեպլակն իր հերթին անդրադարձել է մեր երկրի հետ երկկողմ հարաբերությունների խորացման կարևորությանը և վերահաստատել է Լեհաստանի Հանրապետության հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանի ժողովրդավարական հաստատությունների զարգացմանն ու դատաիրավական բարեփոխումներին:

Հանդիպմանը քննարկվել են տարբեր ուղղություններով, այդ թվում՝ իրավունքի գերակայության ու դատաիրավական համագործակցության ոլորտում փոխգործակցության ակտիվացմանը վերաբերող հարցեր: Այս համատեքստում երկուստեք կարևորվել է հայ-լեհական միջդատարանական երկխոսությունը և մոտ ապագայում բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպումը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Է
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ**



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 4(108)2022

2022 թվականի նոյեմբերի 24-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ICTJ) տնօրենի տեղակալ, ծրագրերի ղեկավար Աննա Ռոկկատելլոյի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում Արման Դիլանյանը կարևորել է արդարադատության ոլորտում համակարգային բարեփոխումների իրականացումը և նշել, որ Սահմանադրական դատարանը հետևողական քայլեր է իրականացնում իր ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումների ուղղությամբ: Սահմանադրական դատարանի նախագահը, մասնավորապես, անդրադարձել է իրավունքի գերակայության ապահովման, ժողովրդավարական արժեքների ու մարդու իրավունքների պաշտպանության ապահովման ուղղությամբ իրականացվող միջոցառումներին: Միաժամանակ Արման Դիլանյանը շեշտել է արդարադատության ոլորտի միջազգային փորձագետների և փորձագիտական մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունն ու լավագույն փորձի փոխանակումը:

Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի փորձագետները Բարձր դատարանի նախագահին են ներկայացրել իրենց կազմակերպության կողմից արդարադատության ոլորտում իրականացված

բարեփոխումների փորձը, իրենց դիտարկումները Հայաստանում իրականացվող դատաիրավական բարեփոխումների և իրավունքի գերակայության ոլորտում ընթացող միջոցառումների վերաբերյալ: Աննա Ռոկկատելլոն ողջունել է Սահմանադրական դատարանի կողմից նախաձեռնած բարեփոխումները: Փորձագետները պատրաստակամություն են հայտնել համագործակցել Սահմանադրական դատարանի հետ և նպաստել մեր երկրի արդարադատության համակարգի արդիականացմանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՄԻՆ



2022 թվականի դեկտեմբերի 12-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի «Արդարադատության ոլորտի աջակցություն ծրագրի» տնօրեն Մարկ Լասսմանին:

Իր ողջույնի խոսքում Արման Դիլանյանը կարևորել է ընդհանուր ժողովրդավարական արժեքների վրա հիմնված հայ-ամերիկյան հարաբերությունների շարունակական զարգացումը և վերահաստատել է Բարձր դատարանի հանձնառությունը ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Սահմանադրական դատարանի նախագահը բարձր է գնահատել ԱՄՆ վարչակազմի, ԱՄՆ դեսպանության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) շարունակական աջակցությունը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական հաստատությունների ամրապնդման գործում և իրավունքի գերակայության խթանման ոլորտում:

Իր հերթին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի «Արդարադատության ոլորտի աջակցություն ծրագրի» տնօրեն Մարկ Լասսմանը շնորհակալություն է հայտնել ցուցաբերած ջերմ ընդունելության համար և ներկայացրել է նոր իրավական հնգամյա ծրագրային բաղադրիչները, մեթոդաբանությունը և նպատակները: Նա ընդգծել է Բարձր դատարանի սահմանադրական առաքելության կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

Հանդիպման շրջանակներում գրուցակիցներն անդրադարձել են դատաիրավական ոլորտում հայ-ամերիկյան համագործակցությանը և տարբեր ուղղություններով գործընկերության հետագա զարգացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 4(108)2022 ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ՎԱԿԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ**



2022 թվականի դեկտեմբերի 20-ին հրավիրված աշխատակարգային նիստում Սահմանադրական դատարանի փոխնախագահի պաշտոնում ընտրվել է Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

**ԱՐԳԱՎԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**



4(108)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 14-ին Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոցի ավարտական դասարանների աշակերտները ճանաչողական այցով հյուրընկալվել էին Սահմանադրական դատարանում:

Այցի շրջանակներում աշակերտներին հանդիպել և ողջույնի խոսքով է դիմել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

Ճանաչողական այցի շրջանակներում Արգավանդի միջնակարգ դպրոցի աշակերտները շրջայց են կատարել Սահմանադրական դատարանի վարչական շենքում, եղել են գրադարանում ու ծանոթացել բազմալեզու մասնագիտական գրականության հավաքածուներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



2022 թվականի նոյեմբերի 10-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի մի շարք կրթական ծրագրերի ուսանողներ այց են կատարել Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը «բաց դասի» ձևաչափով դասախոսություն է անցկացրել ՀԱՀ-ի ուսանողների համար: Արման Դիլանյանն ուսանողներին ներկայացրել է Սահմանադրական դատարանի առաքելությունը, անդրադարձ է կատարել անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտին, կոնկրետ և վերացական սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններին, ինչպես նաև պատասխանել է ուսանողներին հետաքրքրող հարցերին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 4(108)2022

2022 թվականի նոյեմբերի 18-ին Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանն ընդունել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներին, որոնք Սահմանադրական դատարան են այցելել «Վարչական դատավարություն» առարկայի շրջանակում:

Այցի շրջանակում քննարկվել են վարչական դատավարությունում վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկմանը, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանն առնչվող մի շարք հարցեր:

Ուսանողները ծանոթացել են նաև Սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետության դատական իշխանության փոխհարաբերությունների առանձնահատկություններին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի լիազորությունների տարանջատմանը:

ՄԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՏՄ «ՁՄԵՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ» ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ



2022 թվականի նոյեմբերի 25-ին Հայ-ռուսական համալսարանի կողմից կազմակերպված՝ «ԵԱՏՄ պետությունների ազգային իրավունքի և իրավաբանական կրթության համակարգի ներածություն» իրավաբանական դպրոցի մասնակիցները ճանաչողական այց են կատարել Սահմանադրական դատարան:

Այցի շրջանակներում ծրագրի մասնակիցներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, որը մասնակիցներին ներկայացրել է Բարձր դատարանի գործառույթները, լիազորությունների շրջանակը, դերն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում: Մասնակիցների խնդրանքով Արման Դիլանյանն անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանի որոշումների կատարման հիմնախնդրին և առկա միտումներին:

Ճանաչողական այցի շրջանակներում ուսանողները շրջայց են կատարել Սահմանադրական դատարանի վարչական շենքում ու մասնագիտական քննարկում են ունեցել Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական Ալինա Փխրիկյանի հետ:

4(108)2022

◆ ՏԵՂԵԿԱՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
5-ՐԴ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ



4(108)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 4-7-ը Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանը Սահմանադրական արդարադատության համաշխարհային վեհաժողովի գլխավոր քարտուղարի հրավերով մասնակցել է Ինդոնեզիայում գումարված Սահմանադրական արդարադատության համաշխարհային 5-րդ վեհաժողովի աշխատանքներին:

Վեհաժողովի շրջանակներում Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանը բարձր դատարանների տարածաշրջանային կազմակերպությունների, մասնավորապես՝ Եվրոպական սահմանադրական դատարանների խորհրդաժողովի և Սահմանադրական վերահսկողության մարմինների եվրասիական ընկերակցության, ինչպես նաև Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ընկերակցության պաշտոնական նիստերում ներկայացրել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Դատավոր Գրիգորյանը նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապե-

տության, Նիդերլանդների Թագավորության, Բելգիայի Թագավորության, Խորվաթիայի Հանրապետության, Սերբիայի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության խթանմանը վերաբերող հարցեր, նախանշվել փոխադարձ մասնագիտական հետաքրքրության շրջանակներ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ բարձր մակարդակի փոխադարձ այցերի շուրջ: Օտարերկրյա գործընկերներին ներկայացնելով Հայաստանի ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Սահմանադրական դատարանի գործունեության հաջողությունները՝ դատավոր Գրիգորյանը կարևորել է մասնագիտական փոխադարձ հետաքրքրության թեմաներով եվրոպական ժողովրդավարական ժառանգության պաշտպանության և զարգացման հարցում Բարձր դատարանների միջև երկխոսության խթանումն ու մասնագիտական-տեխնիկական համագործակցությունը:

Սահմանադրական արդարադատության համաշխարհային 5-րդ վեհաժողովի լիագումար նիստում մասնակից սահմանադրական արդարադատության 94 Բարձր ատյանների կողմից ընդունվել է «Բալիի կոմյունիկեն», որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.venice.coe.int/files/2022_10_06_WCCJ5_Bali_Communique-E.PDF:

«ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ» ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 4(108)2022

2022 թվականի հոկտեմբերի 19-ին տեղի է ունեցել Սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության կողմից համատեղ կազմակերպվող միջոցառում, որի շրջանակներում ներկայացվել են **«Խորհրդատվական աջակցություն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին»** կարճաժամկետ ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների վերջնարդյունքները: Այս ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին իր երկարաժամկետ ռազմավարության ու բարեփոխումների օրակարգը մշակելիս ու հետագայում դրանք գործարկելիս, ինչը թույլ կտա հաղթահարել առկա մարտահրավերները և ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնման միջոցով ավելի արդյունավետ իրականացնել Բարձր դատարանի սահմանադրական առաքելությունը: Ծրագիրն իրականացվել է Նիդերլանդների Թագավորության Միջազգային իրավական համագործակցության կենտրոնի (CILC) և «Իրավունքի Եվրոպա» ՀԿ-ի մասնակցությամբ:

Իր ողջույնի խոսքում Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շնորհակալություն է հայտնել Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանությանը՝ հան-

ծին արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Սխերմերսի՝ ծրագրի իրականացմանն ուղղված աջակցության համար: Արման Դիլանյանը վերահաստատել է Բարձր դատարանի հանձնառությունը՝ շարունակելու ինստիտուցիոնալ խորքային բարեփոխումների իրականացումը՝ առանձնահատուկ կարևորելով այս գործընթացում միջազգային գործընկերների հետ համագործակցությունը և նրանց գործուն ներգրավումը:

Միջոցառմանը ներկա են եղել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված մի շարք դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների ղեկավարներ և այլ բարձրաստիճան հյուրեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵԱՏՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ



2022 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը տեսակապի միջոցով մասնակցել է Եվրասիական տնտեսական միության դատարանի կազմակերպած «Արդարադատության մատչելիության արդյունավետության ապահովումը ԵԱՏՄ-ում» խորագրով 5-րդ միջազգային խորհրդաժողովի

աշխատանքին:

Արման Դիլանյանն իր ողջույնի խոսքում նախ շնորհակալություն է հայտնել Եվրասիական տնտեսական միության դատարանի նախագահ Էռնա Հայրիյանին և աշխատակազմին՝ միջազգային խորհրդաժողովը բարձր մակարդակով կազմակերպելու և քննարկման թեմաների լայն շրջանակ մշակելու ուղղությամբ կատարված ջանքերի համար: Ողջունելով ԵԱՏՄ դատարանի դատավորներին, ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային պատվիրակությունների ղեկավարներին և առցանց խորհրդաժողովին մասնակցող փորձագետներին՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը նշել է, որ իրավական ինտեգրացիոն գործընթացների ակտիվացումն ու խորացումը կնպաստի նաև ԵԱՏՄ անդամ երկրների պետական վարչարարության ու արդարադատության կառուցվածքային վերափոխումներին, դրանց արդիականացմանն ու թվայնացմանը, ինչը չափազանց կարևոր է համաշխարհային զարգացումների համատեքստում:

Խորհրդաժողովի հանդիսավոր բացման արարողությանը ողջույնի խոսքերով հանդես են եկել նաև Եվրասիական տնտեսական միության դատարանի նախագահ Էռնա Հայրիյանը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը, Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի նախագահ Կայրաթ Մամին, Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ Նատալյա Կարպովիչը, Ղրղզստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ Կարի-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 4(108)2022

բեկ Դույշեկը, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանի նախագահ Վյաչեսլավ Լեբեդևը և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք:

Երկօրյա առցանց միջազգային խորհրդաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվելու ԵԱՏՄ դատարանի և ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային դատարանների համագործակցությանը, միջազգային արդարադատության արդի միտումներին և միջազգային դատարանների որոշումների կատարման հարցերին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՆ ԾՐԱԳՐԻ ԴԵԿԱՎԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 4(108)2022 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

2022 թվականի նոյեմբերի 29-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից իրականացվող՝ «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի Դեկավար հանձնաժողովի նիստին:

Իր ողջույնի խոսքում Արման Դիլանյանը նշել է, որ վերջին երկու տարվա ընթացքում Սահմանադրական դատարանի և Եվրոպայի խորհրդի միջև ձևավորվել է որակապես նոր, ընդգրկուն ու անչափ արդյունավետ երկխոսություն, որն իր բնույթով օրինակելի ու ուղենիշային է: Սահմանադրական դատարանի նախագահը շնորհակալություն է հայտնել Եվրոպացի գործընկերներին Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2019-2022 թթ. «Գործողությունների ծրագրի» շրջանակներում Հայաստանի արդարադատության համակարգին Եվրոպայի խորհրդի կողմից ցուցաբերված աջակցության համար: Անդրադառնալով Սահմանադրական դատարանում ներկայումս իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումներին՝ Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ Եվրոպայի խորհրդի կողմից Սահմանադրական դատարանի հետ համատեղ իրականացվող ծրագրերը կարևորագույն նշանակություն կունենան մեր երկրում դատական իշխանության անկախության երաշխավորման, ժողովրդավարության անշրջե-

լիության ապահովման և այդ նպատակով իրավունքի գերակայության ամրապնդման և պետական ինստիտուտների բարեփոխման համար:

Ղեկավար նիստի բացման արարողությանը ողջույնի խոսքերով հանդես են եկել նաև Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Գրիգոր Մինասյանը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը, Եվրոպայի խորհրդի իրավական բարեփոխումների և մարդու իրավունքների հարցերով համագործակցության ծրագրերի վարչության փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանը և Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆԸ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 4(108)2022
 ՏԵՂԵԿՎՈՐ
 242

2022 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված լուսանկարչական ցուցադրությանը: Իր ողջույնի խոսքում Արման Դիլանյանը շեշտել է, որ այս օրը նշանավորող և բազում իրավական փաստաթղթերի հիմք դարձած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը կյանքի է կոչվում նաև նմանօրինակ միջոցառումների, պետական հաստատությունների ու քաղաքացիական հասարակության կողմից համատեղ իրականացվող տարբեր իրավական ծրագրերի միջոցով՝ բարձրացնելով հանրության իրավագիտակցությունն ու մարդու իրավունքների հարցերի նկատմամբ զգայունությունը: Բացման արարողությանը ողջույնի խոսքով է հանդես եկել նաև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը և «Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոնի ղեկավար Գայանե Աբրահամյանը:

Միջոցառման շրջանակներում տեղի է ունեցել նաև «Լրագրողները՝ հանուն իրավունքների» ամենամյա մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում Բարձր դատարանի նախագահը «Հատուկ մրցանակ» անվանակարգում հուշանվեր ու հավաստագիր է հանձնել վավերագրող-լուսանկարիչ Վաղինակ Ղազարյանին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՄՆ ՄՁԳ-Ի ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ



2022 թվականի դեկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է ԱՄՆ Միջազգային զարգացման հայաստանյան գրասենյակի «Արդարադատության ոլորտի աջակցություն» ծրագրի մեկնարկի միջոցառմանը: Նոր հնգամյա իրավական ծրագիրը միտված է աջակցելու առավել անաչառ և անկախ արդարադատության համակարգի ձևավորմանը, ինչպես նաև բարձրացնելու իրավունքի գերակայության հանդեպ հանրային վստահության մակարդակը:

Իր ողջույնի խոսքում Արման Դիլանյանը նշել է, որ ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից իրականացվող դատաիրավական ծրագրերը մշտապես խթան են հանդիսացել Հայաստանում արդարադատական համակարգի կատարելագործման համար: Բարձր դատարանի նախագահն ընդգծել է, որ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը մեր երկրի դատական համակարգի վստահելի ու առանցքային միջազգային գործընկերներից մեկն է և հույս է հայտնել, որ նոր մեկնարկող ծրագիրը էական նշանակություն կունենա մեր երկրում դատական իշխանության անկախության երաշխավորման, արդի թվային լուծումներով հագեցած էլեկտրոնային արդարադատության մատուցման, գործընկեր դատավորների մասնագիտական կարողությունների զարգացման, երկրում իրավագիտակցության, իրավական կրթության ու սահմանադրական մշակույթի ամրապնդման համար:

Ծրագրի պաշտոնական բացման միջոցառմանը մասնակցել են ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Ջոն Ալելոն, Բարձրագույն դատական խորհրդի անդամները, դատական իշխանության ներկայացուցիչներ, Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Գրիգոր Մինասյանը, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը, միջազգային կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ ներկայացուցիչներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Է ՈՒՆԵՑԵԼ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ



2022 թվականի հոկտեմբերի 26-ին աշխատանքային այցով Վիլնյուսում գտնվող Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդիպում է ունեցել Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Դանուտե Յոչիենեի հետ:

Դիմավորման արարողությունից հետո երկու երկրների բարձր դատարանների ղեկավարներն անցել են ընդլայնված կազմերով աշխատանքային հանդիպման:

Ողջունելով հայկական պատվիրակությանը՝ Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է Արման Դիլանյանի ղեկավարած պատվիրակության այցը Վիլնյուս և վստահություն հայտնել, որ այն նոր ազդակ կհաղորդի իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության և դատաիրավական ոլորտներում երկկողմ համագործակցության զարգացմանը: Դանուտե Յոչիենեն ողջունել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում մեկնարկած ինստիտուցիոնալ ներքին բարեփոխումները և նշել, որ իր երկրի բարձր դատարանը պատրաստ է կիսվել իր կուտակած փորձով և օժանդակություն ցուցաբերել Հայաստանի դատաիրավական ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին:

Շնորհակալություն հայտնելով աշխատանքային այցի հրավերի ու Վիլնյուսում հայկական պատվիրակությանը ցուցաբերած ջերմ ընդունելության համար՝ Արման Դիլանյանը վստահություն է հայտնել, որ հայկիտվական բարեկամական հարաբերությունները շարունակաբար կզարգանան ու առաջընթաց կարձանագրեն: Այս առնչությամբ Արման Դիլանյանն առանձնահատուկ կարևորել է սահմանադրական արդարադատության ոլորտում կապերի ընդլայնումը և իրավունքի գերակայության ոլորտում լավագույն փորձի փոխանակմանը միտված քայլերը:

Աշխատանքային քննարկման ընթացքում կողմերն անդրադարձել են երկու երկրներում անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտին և սահմանադրական դատարանների կողմից ընդունված որոշումները հանրությանը հաղորդակցելու առանձնահատկություններին:

Հանդիպման ավարտին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը գրառում է կատարել Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվավոր հյուրերի գրքում, այնուհետև Դանուտե Յոչիենեի ուղեկցությամբ շրջայց է կատարել Լիտվայի սահմանադրական դատարանի նիստերի դահլիճում, գրադարանում և աշխատանքային սրահներում:

Վիլնյուս կատարած աշխատանքային այցի շրջանակներում Սահմանադրական դատարանի նախագահի ղեկավարած պատվիրակությունը նաև աշխատանքային հանդիպումներ է ունեցել Լիտվայի Հանրապետության Սեյմասի փոխնախագահի, Արդարադատության նախարարի և Գերագույն դատարանի նախագահի պաշտոնակատարի հետ:

◆ 4(108)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ**



2022 թվականի հոկտեմբերի 24-26-ը Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Դանուտե Յոչինենի հրավերով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի ղեկավարած պատվիրակությունը աշխատանքային այց է կատարել Վիլնյուս և մասնակցել է Լիտվայի 1922 թվականի Սահմանադրության 100-ամյակին և Լիտվայի Հանրապետության 1992 թվականի Սահմանադրության ընդունման 30-րդ տարեդարձին նվիրված՝ **«Ազգային սահմանադրությունից դեպի վերազգային սահմանադրականություն»** խորագրով բարձր մակարդակի միջազգային խորհրդաժողովի աշխատանքներին:

Նշված խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցել են մեկ տասնյակից ավելի եվրոպական պետությունների սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների նախագահներ և դատավորներ: Միջազգային խորհրդաժողովի շրջանակներում գումարված թեմատիկ աշխատանքային նիստերից մեկի ընթացքում Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդես է եկել որպես քանախոս:

ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ» ԳՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐՔԵՐԱԿԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 4(108)2022

2022 թվականի դեկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը և Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը մասնակցել են Մեծ Բրիտանիայի Միդլսեքս համալսարանի Իրավունքի դպրոցի մարդու իրավունքների ոլորտի պրոֆեսոր Ֆիլիպ Լիչի հեղինակած՝ *«Ինչպես դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան»* գրքի հայերեն տարբերակի շնորհանդեսին:

Գրքի շնորհանդեսի ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը, որը նաև գրքի հայերեն թարգմանության համախմբագիրներից է, հանդես է եկել *«Ինչպես դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան»* գրքի հայերեն հրատարակության արդիականությունը» խորագրով բանախոսությամբ:

Նշենք, որ գրքի հրատարակությունը ներառում է Եվրոպական կոնվենցիայի նյութական իրավունքի վերաբերյալ թարմացված, մանրակրկիտ բացատրությունները:

Գրքի հայերեն տարբերակի հրատարակությունն իրականացվել է *«Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը. Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը»* ծրագրի աջակցությամբ, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Յ. ՆԱԶԱՐՅԱՆ,
Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Ստորագրված է տպագրության՝ 15.01.2023թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(108)2022

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(108)2022

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(108)2022


4(108)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

ISSN 8888-0000



ABC abc-1234

